Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի երրորդ եռամսյակ

ՀԻՍՈՒՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կառլոս Է. Սթեջեր

Բովանդակություն

Դաս 1. 28.06-04.07 Մեր սիրող երկնային Հայրը 7
Դաս 2. 05.07-11.07 Որդին 16
Դաս 3. 12.07-18.07 Սուրբ Հոգին 25
Դաս 4. 19.07-25.07 Փրկությունը 34
Դաս 5. 26.07-01.08 Ինչպե՞ս ձեռք բերել փրկություն 44
Դաս 6. 02.08-08.08 Աձ Քրիստոսում 53
Դաս 7. 09.08-15.08 Ապրել ինչպես Քրիստոսը 62
Դաս 8. 16.08-22.08 Եկեղեցին 71
Դաս 9. 23.08-29.08 Մեր առաքելությունը 81
Դաս 10. 30.08-05-09 Աստծո Օրենքը 90
Դաս 11. 06.09-12.09 Շաբաթը 99
Դաս 12. 13.09-19.09 Մահը և հարությունը 108
Դաս 13. 20.09-26.09 Հիսուսի երկրորդ գալուստը 117

ԵՐԵՎԱՆ
2014

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ

Թանկագի՛ն քույրեր և եղբայրներ: Անկասկած, մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է բաելավել իր փոխհարաբերությունները Հիսուսի հետ, և Նրա հետ մեր ընկերության արդյունքը կլինի Նրա մասին վկայությունը շրջապատող աշխարհին:

Յուրաքանչյուրը պետք է կիսվի Հիսուսով: Սուրբ Հոգու հեղման մասին աղոթքը ուժի և ոգևորության աղբյուր է այդ գործում:

«Ի սրտե աղոթող հավատավորների շղթան պետք է գոտևորի ողջ աշխարհը... աղոթելու համար Սուրբ Հոգու մասին» (Ռևյու ընդ Հերալդ, հունվարի 3, 1907 թ.):

Այս տարին ավետարանչական և աղոթքի նախաձեռնությունների տարի է. եկեղեցու յուրաքանչյուր անդամի կոչ ենք անում ամեն օր աղոթել ավետարանման մասին:

Հուլիսի 2-ը ծոմի և աղոթքի հատուկ օր է, երբ եկեղեցու յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի աղոթել Եկեղեցու կարիքների մասին:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Եկեղեցու բոլոր բաժինների աղոթքի կարիքները՝ եկեղեցական կազմակերպության բոլոր մակարդակներում, որոնք կոչված են միավորել մեզ ինչպես աղոթքի, այնպես էլ աշխատանքի մեջ:

Խնդրում ենք՝ այս կարիքների մասին աղոթե՛ք հուլիսի 2-ին և այս եռամսյակի ընթացքում:

Թո՛ղ Աստված օրհնի ձեզանից յուրաքանչյուրին՝ աղոթքի ձեր ջանքերի համար:

ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

- Երիտասարդական ծառայության բաժին՝ Քրիստոսի հետ որակապես նոր փոխհարաբերությունների և որպես դրանց արդյունք՝ Քրիստոսի մասին լուրով կիսվելու անհաղթահարելի ցանկության մասին:
- Կրթության բաժին՝ քրիստոնեական տարրական դպրոցների բացման և ավետարանչական նախագծի՝ անգլերենի ուսումնասիրության կենտրոնների զարգացման մասին.

- Կանանց ծառայության բաժին՝ այն մասին, որ Աստծո խորհուրդը՝ «թո՛ղ ձեր լույսը լուսավորի մարդկանց առջև» (Մատթեոս 5.16) իրականություն դառնա յուրաքանչյուր քրիստոնյա կնոջ կյանքում:
- Կապելանական ծառայության բաժին՝ կապելանների աշխատանքի ընդլայնման մասին բանտերում և բուժական հաստատություններում՝ այդ հաստատությունների ղեկավարների հետ համագործակցության միջոցով.
- Հանրային կապերի բաժին՝ այն մասին, որ յուրաքանչյուր եկեղեցի ունենա այս բաժնի պատասխանատու, ով կկարողանա տեղերում կանոնավոր կերպով այցելել իշխանության ներկայացուցիչներին և ներկայացնել մեր Եկեղեցին.
- ԱՀՕԿ՝ ԱՀՕԿ ծառայության մասին բոլոր երկրներում՝ ԵԱԲ տարածքում, Աֆղանստանի ԱՀՕԿ տնօրենի և նրա թիմի համար:
- Տեղեկատվության բաժին՝ այն մասին, որ օգտագործվեն առկա բոլոր ռեսուրսները և նոր հնարավորություններ գտնվեն, որպեսզի Եկեղեցու նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն անվճար հասնի եկեղեցու շարքային անդամներին և նրանց մոտ հարկավոր արձագանքը գտնի՝ չկորչելով եկեղեցական կազմակերպության զանազան մակարդակներում.
- Շաբաթօրյա դպրոցի և անձնական ծառայության բաժին՝ շաբաթօրյա դպրոցի գործունեության բարելավման և հովիվների ու եկեղեցու անդամների բարեհաջող ուսուցանման մասին՝ վկայել Վերածննդի և ավետարանչական ծառայության համալսարանի ծրագրով, և ավետարանման մեջ նրանց ներգրավման մասին.
- Ադվենտիստական առաքելության բաժին՝ նվիրված ավետարանիչների կարիքի մասին, եկեղեցու անդամների ներգրավման մասին ավետարանչական ծառայության և նոր եկեղեցիների ստեղծման մեջ.
- Հրատարակչական ծառայության բաժին՝ գրական ավետարանիչների թվի ավելացման և տարվա ավետարանչական գրքի կազմակերպված ու զանգվածային տարածման մասին.
- Ռեսուրսների կառավարման բաժին՝ Աստծո հետ եկեղեցու յուրաքանչյուր անդամի խորը անձնական փոխհարաբերությունների մասին, հավատարմության մասին տասանորդի և ընծաների հարցում, ավետարանչական նախագծերի համար ընծաների մեծացման մասին.

- Առողջության բաժին՝ յուրաքանչյուր եկեղեցու և եկեղեցու յուրաքանչյուր անդամի ներգրավվածության մասին բժշկաավետարանչական ծառայության մեջ, առողջության ակումբների ստեղծման և զարգացման մասին, այդ կենտրոններում ծառայելու պատրաստակամ նվիրված մարդկանց մասին.
- Հովվական միավորում՝ հովիվների և ծառայության մեջ եկեղեցու անդամների ներգրավմանը նրանց մասնակցության մասին.
- «Հովվի կին» միավորում՝ այն մասին, որ յուրաքանչյուր ծառայողի կին ունենա իր անձնական ավետարանչական նախագիծը.
- Ընտանեկան ծառայության բաժին՝ այն մասին, որ ավետարանչությանը մասնակցությունը դառնա յուրաքանչյուր ավետարանչական ընտանիքի կենսակերպը.
- Մանկական ծառայության բաժին՝ այն մասին, որ երեխաների ու դեռահասների մեջ աճի Քրիստոսին նման լինելու, աղոթքում և Աստվածաշնչի ուսումնասիրության մեջ Հիսուսի հետ անձամբ ժամանակ անցկացնելու, իրենց Աստծուն և մարդկանց ծառայությանը նվիրվելու ցանկությունը.
- Երաժշտական ծառայության բաժին. Հիսուսին ճանաչելու և փրկության համար երաժշտության և երգեցողության առանձնահատուկ ազդեցության մասին մարդկանց սրտերի վրա.
- Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտ՝ մոլորություններից և պառակտումներից Աստծո պաշտպանության և Եկեղեցու դավանաբանական ու կազմակերպական միասնականության պահպանման մասին.
- ՅՕԱ Եկեղեցու հոգևոր ժառանգության բաժին՝ Մարգարեության հոգու հանդեպ վստահության ամրապնդում և նրա խորհուրդների կիրառում՝ հաջող ավետարանման համար:

ԵԱԲ
աղոթքի
ծառայություն

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մեր մեծամասնությունը, հավաբանար, հիշում է որևէ տաղանդավոր ուսուցչի, ով ազդեցություն է գործել մեր կյանքի վրա, ուսուցչի, ումով մենք հիանում և ում գնահատում ենք: Որոշ ուսուցիչների ազդեցությունը դուրս է գալիս իրենց ժամանակի սահմաններից և տարածվում է հետագա սերունդների վրա: Ականավոր ուսուցիչները որոշ չափով ազդել են մարդկության կյանքի և զարգացման վրա և հաճախ համաշխարհային ճանաչում ունեցող մարդիկ են: Սակայն բոլոր ուսուցիչներից մեծագույնը Հիսուսն է:

Նրա ժամանակակիցները Նրան ընդունում էին որպես Ուսուցիչ, որովհետև Նրան հատուկ էին առաջին դարի ուսուցչին հատուկ բոլոր բնութագրերը: Ինչպես և բոլոր ուսուցիչները, Նա նստում և սովորեցնում էր: Հիսուսը հաճախ էր մեջբերում և մեկնաբանում Սուրբ Գիրքը: Նա ուներ մի խումբ աշակերտներ, ովքեր ուշադիր լսում էին Նրան, հետևում էին Նրան և ծառայում էին Նրան: Դրանք էին ուսուցչի հիմնական բնութագրերը այդ ժամանակաշրջանում և աշխարհի այդ մասում:

Սակայն Հիսուսի և մյուս ուսուցիչների միջև շատ մեծ տարբերություններ կային: Այն ժամանակ, երբ վերջիններս գլխավորապես կենտրոնանում էին որոշակի առարկայի մտավոր տեսանկյունների վրա, Հիսուսը շոշափում էր Իր ունկնդիրների կյանքի բոլոր կողմերը՝ նրանց հրավիրելով դառնալ Աստծուն: Բացի դրանից, Հիսուսին լսողները «զարմանում էին Նրա վարդապետության վրա, որովհետև Նա նրանց ինչպես իշխանություն ունեցող էր սովորեցնում, ոչ թե դպիրների նման» (Մարկոս 1.22): Քրիստոսը վստահություն էր ներշնչում, որովհետև ապրում էր այնպես, ինչպես քարոզում էր: Բայց Նրա իշխանության բարձրագույն աղբյուրը Նա Ինքն էր: Հիսուսը ճշմարտություն էր սովորեցնում, որովհետև Նա Ինքը Ճշմարտությունն է:

Առաջիկա եռամսյակում ավետարանյան գրառումների հիման վրա մենք կուսումնասիրենք որոշ կարևոր ճշմարտություններ, որ շարադրել է Հիսուսը: Փրկիչը շատ դասեր է տվել մեր հոգևոր ու գործնական կյանքի վերաբերյալ: Նա աստվածային ուսմունքը ներկայացնում էր տարբեր լսարանների՝ շարադրման Իր մեթոդը հարմարեցնելով տարբեր ունկնդիրների: Երբեմն Հիսուսը քարոզ էր կարդում, ուրիշ անգամ երկխոսություն էր վարում առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի հետ: Ժամանակ առ ժամանակ բացահայտորեն էր արտահայտվում, իսկ երբեմն էլ Իր խոսքերի նշանակությունը քողարկում էր կերպար-

ների և առակների մեջ: Սակայն յուրաքանչյուր դեպքում Նա շարադրում էր Աստծո և փրկության մասին ճշմարտությունը:

Հիսուսի ուսմունքները համակարգելու և շարադրելու բազում եղանակներ կան: Օրինակ, կարելի է առանձին ուսումնասիրել Նրա առակները կամ վերլուծել Նրա քարոզները: Մեկ այլ մոտեցման դեպքում կարելի է ուսումնասիրել Նրա երկխոսությունները առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի հետ, Նրա քննարկումները ընդդիմախոսների հետ: Հետաքրքիր կլիներ նաև կենտրոնանալ Քրիստոսի գործերի, Նրա դիրքորոշման, այն հրաշքների վրա, որ Նա օգտագործում էր կարևոր դասեր տալու նպատակով: Մոտեցումներից յուրաքանչյուրը օգտակար է, բայց Հիսուսի ուսմունքը համակողմանիորեն ընդգրկելու համար այս ձեռնարկը միավորում է մի քանի մոտեցումներ: Այն համակարգված է մոտենում Նրա ուսմունքին՝ ցույց տալով, թե ինչպես էր Հիսուսը որոշակի թեմաներ ուսուցանում տարբեր իրադրություններում և զանազան եղանակներով: Դա կօգնի մեզ հասկանալ Նրա ուսմունքների մեծ մասը:

Երբ այս եռամսյակում մենք բացենք Սուրբ Գիրքը և կարդանք Հիսուսի խոսքերը, կջանանք պատկերացնել մեզ Նրա ուշադիր ունկնդիրների թվում, ովքեր գտնվում էին լեռան լանջին, ծովի ափին կամ ժողովարանում: Կաղոթենք հոգևոր տեսողություն ստանալու մասին, որպեսզի հասկանանք Նրա լուրն ու ըմբռնենք խաչի վրա մեզ հայտնված Նրա անչափելի սերը: Լսելով Նրա քնքուշ ձայնը, որ մեզ կանչում է հետևել Իրեն, եկե՛ք թարմացնենք մեր նվիրաբերումը, որպեսզի օրեցօր կենանք Նրանում՝ հավատով և հնազանդությամբ: Որքան ավելի շատ ժամանակ ենք անցկացնում Նրա ոտքերի մոտ, այնքան ավելի համոզիչ կարող ենք ասել՝ Էմմաուսի երկու աշակերտների նման. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ ճանապարհին մեզ հետ խոսում էր, և Գրքերը բացատրում էր մեզ համար» (Ղուկաս 24.32):

Կառլոս Է. Սթեջերը կատարել է հովվի, ուսուցչի, խմբագրի և ադմինիստրատորի ծառայություն: Ներկայումս ադվենտիստական Ռիվեր Փլեյթ համալսարանի աստվածաբանական դպրոցի դեկանն է: Նա և իր կինը՝ Էթելը, ունեն երեք զավակ և երեք թոռ:

ԴԱՍ 1

ՀՈՒՆԻՍԻ 28 – ՀՈՒԼԻՍԻ 4

ՄԵՐ ՍԻՐՈՂ ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 7.9-11, Հովհաննես 14.8-10, Ղուկաս 15.11-24, Մատթեոս 6.25-34, Եբրայեցիս 9.14:

Հիշելու համարը.

«Տեսե՛ք, թե Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստծո որդիներ կոչվենք. սրա համար աշխարհը չի ճանաչում մեզ, որ Նրան չճանաչեց» (Ա Հովհաննես 3.1):

Հիսուսը սիրում էր Աստծո մասին խոսել որպես Հոր: Ըստ Ավետարանների՝ Փրկիչը ավելի քան 130 անգամ Աստծուն Հայր է անվանել: Որոշ դեպքերում «Հայր» բառին Նա տարբեր ածականներ էր ավելացնում՝ «Երկնավոր հայր» (Մատթեոս 6.14), «կենդանի Հայր» (Հովհաննես 6.58), «Սուրբ Հայր» (Հովհաննես 17.11), «Արդար Հայր» (Հովհաննես 17.25): «Հայր» անունը ցույց է տալիս այն սերտ կապը, որ պետք է մեզ միավորի մեր Տիրոջ հետ:

Հայր բառն ավանդաբար կապվում է սիրո, պաշտպանության, անվտանգության, աջակցության և ընտանիքի միասնության հետ: Հայրն ընտանիքին տալիս է իր անունը և միավորում է դրա անդամներին: Մենք կարող ենք ցնծալ սրանով և շատ այլ առավելություններով, երբ Աստծուն ընդունում ենք որպես մեր Երկնային Հայր:

Թեև մեզ համար արտակարգորեն կարևոր է Հորը ճանաչելը, մեր նպատակը չպետք է հանգեցվի լոկ մտավոր կամ տեսական դիրքերին: Աստվածաշնչում որևէ մեկին ճանաչելը նշանակում է նրա հետ անձնական սերտ փոխհարաբերություններ ունենալ: Որքա՜ն ավելի շատ դա վերաբերում է մեր Երկնային Հորը:

Շաբաթվա ընթացքում մենք հետազոտելու ենք Իր Հոր և մեր հանդեպ Նրա անսահման սիրո վերաբերյալ Հիսուսի տված դասերը: Մենք նաև կտեսնենք, թե որքանով են փոխկապակցված Հայրը, Որդին և Սուրբ Հոգին:

Միաշաբթի **հունիսի 29**

Մեր Երկնային Հայրը

Աստծո այդպիսի անունը, ինչպիսին «Հայրն» է, նոր չէր Հիսուսի ունկնդիրների համար: Հին Կտակարանը երբեմն Աստծուն ներկայացնում է որպես մեր Հայր (Եսայիա 63.16, 64.8, Երեմիա 3.4,19, Սաղմոս 103.13), սակայն այդ անունը հազվադեպ է օգտագործվում: Իսրայելի համար Աստծո անձնական անունը YHWH էր (արտասանության տարբերակներից մեկն է Յահվե): Հին Կտակարանում այն հանդիպում է ավելի քան 6800 անգամ: Հիսուսը չեկավ, որ մեզ մեկ այլ Աստծո բացահայտի, որ կտարբերվեր Յահվեից: Նրա առաքելությունը Հին Կտակարանում տրված՝ Իր մասին Աստծո հայտնությունն ընդլայնելն էր: Հետևելով այդ նպատակին՝ Նա Աստծուն ներկայացնում էր որպես մեր Երկնային Հոր:

Հիսուսը պարզորոշ հասկացրել է, որ Հայրը գտնվում է Երկնքում: Այս ճշմարտության մասին կարևոր է հիշել՝ Աստծո մասին ճիշտ պատկերացում ունենալու համար: Մենք ունենք սիրող Հայր, Ով թափանցում է Իր զավակների կարիքների մեջ: Միևնույն ժամանակ մենք գիտակցում ենք, որ այդ հոգատար Հայրը գտնվում է երկնքում, որտեղ Նրան բազմահազարավոր հրեշտակներ են երկրպագում, քանի որ Նա Տիեզերքի սուրբ ամենակարող Տիրակալն է: Այն փաստը, որ Աստված մեր Հայրն է, դրդում է մեզ մանկական հավատով գալ Նրա մոտ: Մյուս կողմից՝ այն ճշմարտությունը, որ Նա գտնվում է երկնքում, մեզ հիշեցնում է Նրա վսեմության և երկյուղածությամբ Նրան երկրպագելու անհրաժեշտությունը: Միայն այս տեսանկյուններից մեկի վրա կենտրոնանալը՝ մյուսների անտեսման հաշվին, մեզ կբերի Աստծո աղավաղված ընկալման՝ հեռուն գնացող հետևանքներով, որոնք շոշափում են մեր գործնական, առօրյա կյանքը:

Կարդացե՛ք Մատթեոս 7.9-11-ը: Այստեղ ի՞նչ է ասվում այն մասին, թե երկրային հայրն ինչպես կարող է արտացոլել մեր Երկնային Հոր բնավորությունը: _____

_____

_____

_____

Մեզանից ամեն մեկը չէ, որ հոգատար սիրող հայր է ունեցել: Տարբեր պատճառներով որոշ մարդիկ կարող են անգամ չճանաչել իրենց հորը: Այդ պատճառով նրանց համար Աստծո «Հայր» անունը կարող

է քիչ նշանակություն ունենալ կամ էլ առհասարակ ոչինչ չնշանակել: Սակայն մեզանից յուրաքանչյուրը պատկերացնում է, թե ինչպիսին պետք է լինի լավ երկրային հայրը: Բացի դրանից, մենք կարող ենք ճանաչել մարդկանց, ովքեր իսկապես լավ հայրեր են:

Իհարկե, բոլոր երկրային հայրերն էլ հեռու են կատարելությունից, սակայն մենք՝ որպես ծնողներ, սիրում ենք մեր զավակներին և մեր թերություններին հակառակ՝ ջանում ենք նրանց տալ լավագույնը: Բայց պատկերացրե՛ք, թե ինչ կարող է մեզ համար կատարել մեր Երկնային Հայրը:

Անձամբ ձեզ համար ի՞նչ նշանակություն ունի այն փաստը, որ դուք Աստծուն դիմում եք որպես ձեր Երկնային Հայր: Ի՞նչ նշանակություն դա *պետք է* ունենա ձեզ համար:

Երկուշաբթի **հունիսի 30**

Հայտնված Որդով

Խոսելով Հոր մասին՝ ավետարանիչ Հովհաննեսը գրում է. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել» (Հովհաննես 1.18): Ադամի ու Եվայի մեղանչման ժամանակից ի վեր մենք չենք կարող դեմ առ դեմ շփվել Աստծո հետ: Մովսեսը ցանկանում էր տեսնել Աստծուն, բայց Տերը նրան բացատրեց. «Դու Իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող Ինձ տեսնել և ապրել» (Ելից 33.20): Սակայն Աստծուն ճանաչելը պետք է դառնա մեր առավելությունը, քանի որ հավիտենական կյանքը Աստծուն ճանաչելու մեջ է (Հովհաննես 17.3):

Ձեզ համար հատկապես ի՞նչն է կարևոր իմանալ Աստծո մասին: Տե՛ս Երեմիա 9.23,24: Մեզ համար ինչո՞ւ է կարևոր դա իմանալը: _____

_____

_____

_____

Մեծ պայքարում սատանան գլխավորապես իր հարձակումն ուղղում է Աստծո բնավորության դեմ: Սատանան ամեն բան անում է իր կողմից՝ յուրաքանչյուրին համոզելու համար, թե Աստված եսասեր է, դաժան ու բռնակալ: Իր երկրային կյանքի ժամանակ Հիսուսի մեծագույն նպատակներից մեկը այդ մեղադրանքների կեղծիքը մերկացնելն էր: Քրիստոսը եկել էր, որ մեզ հայտնի Աստծո էությունն ու Նրա բնավորությունը, շտկի Աստվածության մասին տարածված աղավաղված

կարծիքը: «Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել, բայց միածին Որդին՝ Հոր ծոցում լինողը, Նա պատմեց» (Հովհաննես 1.18):

Կարդացե՛ք Հովհաննես 14.8-10-ը: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե որքան քիչ բան գիտեին աշակերտները Հոր մասին՝ անգամ Հիսուսի հետ ավելի քան երեք տարի անցկացնելուց հետո: Այս փաստից մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել մեզ համար: _____

_____

_____

_____

Հիսուսը տրտմեց և ապշեց՝ լսելով Փիլիպոսի հարցը: Տիրոջ մեղմ հանդիմանությունը բացահայտում է Նրա համբերատար սերը Իր անհասկացող աշակերտների հանդեպ: Հիսուսի պատասխանը ենթադրում է մոտավորապես հետևյալը. «Մի՞թե ապրելով Ինձ հետ, լսելով Իմ խոսքերը, տեսնելով Իմ հրաշքները՝ ամբոխներին կերակրելը, հիվանդների ապաքինումը և մեռյալների հարությունը, դուք չեք ճանաչում Ինձ: Մի՞թե դուք Հորը չճանաչեցիք այն գործերում, որոնք Նա կատարում է Իմ միջոցով, և Իմ ողջ կյանքում»:

Այն, որ աշակերտները չկարողացան Հորը ճանաչել Հիսուսի ծառայության մեջ, չէր նշանակում, որ Հիսուսը սխալ էր ներկայացնում Հորը: Հակառակը, Հիսուսը վստահ էր, որ կատարել է Իր առաքելությունը՝ լավագույնս ներկայացնելով Հորը: Հենց այդ պատճառով Նա ասաց աշակերտներին. «Եթե Ինձ ճանաչեիք, Իմ Հորն էլ կճանաչեիք... Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհաննես 14.7,9):

Երեքշաբթի **հուլիսի 1**

Մեր Երկնային Հոր սերը

Հիսուսը եկավ, որպեսզի հաստատի Հին Կտակարանում բացահայտված ճշմարտությունն այն մասին, որ Հայրը մեզ նայում է անզուգական սիրով: (Երեմիա 31.3, Սաղմոս 103.13):

«Տեսե՛ք, թե Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստծո որդիներ կոչվենք. սրա համար աշխարհը չի ճանաչում մեզ, որ Նրան չճանաչեց» (Ա Հովհաննես 3.1): Ապշեցուցիչ է, որ ամենակարող Աստված՝ տիեզերքի Իշխանը, մեզ՝ միլիարդավոր գալակտիկաների մեջ մի փոքրիկ մոլորակում ապրող խղճուկ, ողորմելի մեղավորներիս, թույլ է տալիս Իրեն Հայր անվանել: Նա դա անում է, որովհետև սիրում է մեզ:

Ի՞նչն է մեր հանդեպ Հոր սիրո ապացույցը (Հովհաննես 3.16,17): _____

_____

_____

_____

Քրիստոսը խաչին գամվեց ոչ նրա համար, որ Հոր սրտում գութ առաջ բերի մարդկության հանդեպ: Հիսուսի քավչարար մահը միջոց չէր, որ Հորը համոզի սիրել մեզ, այն տեղի ունեցավ, *որովհետև* Հայրը սիրել էր մեզ դեռ աշխարհի արարումից առաջ: Կարո՞ղ է լինել Հոր սիրո ավելի մեծ վկայություն, քան խաչի վրա Հիսուսի մահը:

«Հայրը մեզ սիրում է ոչ թե այն պատճառով, որ բերվել է փրկագնման Մեծ Զոհը: Ճիշտ հակառակը՝ Նա քավչարար զոհ է նախատեսել, որովհետև սիրում է մեզ» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 13):

Ոմանք կարծում են, թե Հայրը առանձնապես լավ չի տրամադրված իրենց հանդեպ: Այն փաստը, որ Հիսուսը մեր Բարեխոսն է, չի նշանակում, իբրև թե Նա Հորը համոզում է սիրել մեզ: Հիսուսը մերկացրեց այդ սխալ տեսակետը՝ ասելով. «Հայրն Ինքը սիրում է ձեզ» (Հովհաննես 16.27):

Կարդացե՛ք Ղուկաս 15.11-24-ը և մտորե՛ք իր անառակ որդու հանդեպ հոր սիրո մասին: Թվարկե՛ք, թե հոր սիրո մասին քանի՞ վկայություն ուներ այդ որդին: _____

_____

_____

_____

Մեզանից յուրաքանչյուրն ինչո՞վ է յուրովի հիշեցնում անառակ որդուն: Դուք չե՞ք ունեցել նման փորձառություն:

Չորեքշաբթի **հուլիսի 2**

Մեր Երկնային Հոր քնքուշ հոգատարությունը

Մեզ համար կարևոր է իմանալը, որ մեր մասին հոգ են տանում: Թեև որոշ մարդիկ կարող են մեզ անտարբերությամբ կամ արհամարհանքով վերաբերվել, Հիսուսը սովորեցնում էր, որ Երկնային Հայրը մշտապես հոգ է տանում մեր մասին: Նրա ողորմությունն ու քնքշությունը պայմանավորված չեն թռիչքներով ու անկումներով, որ այդքան բնորոշ են մարդկային խառնվածքին, Նրա սերը մշտական է, անփոփոխ ու անկախ հանգամանքներից:

Կարդացե՛ք Մատթեոս 6.25-34-ը: Ի՞նչ քաջարելող բառեր են բովանդակվում այս հատվածում: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ավելի շատ ապավինել Աստծուն, որ պատկերված է բերված համարներում: _____

_____

_____

_____

_____

«Մեր կյանքի պատմության մեջ չկա ոչ մի գլուխ, որ այնքան խճճված լիներ, որ Նա չկարողանար կարդալ այն. մեր ոչ մի մոլորություն ու շփոթ չի կարող այնքան բարդ լինել, որ Նա ի զորու չլինի օգնել: Ոչ մի դժբախտություն, որ կարող է հասնել Նրա զավակներից ամենափոքրին, ոչ մի անհանգստություն, որ խռովում է հոգին, ցանկացած ուրախություն, ամեն մի անկեղծ աղոթք՝ ոչինչ չի վրիպում մեր Երկնային Հոր հայացքից, Ով կարեկցանքով արձագանքում է ամեն ինչին: «Նա բժշկում է սրտով կոտրվածներին և փաթաթում նրանց խոցերը» (Սաղմոս 147.3): Աստծո և յուրաքանչյուր մարդու միջև փոխհարաբերությունները այնքան որոշակի ու կատարյալ են, ասես այդ մարդը միակն է երկրի վրա, ում մասին հոգ է տանում Երկնային Հայրը և ում համար տվել է Իր սիրասուն Որդուն» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 100):

Մենք չենք կարող անտեսել այն փաստը, որ երբեմն մեզ վրա ողբերգություններ ու տառապանքներ են թափվում: Անգամ այսօր ուսումնասիրվող տեքստում Հիսուսն ընդգծում է՝ ամեն օրը լի է իր հոգսերով (Մատթեոս 6.34)՝ նկատի ունենալով, որ ամեն բան չէ, որ մեր կյանքում հարթ ու անամպ է լինելու: Մենք իսկապես շրջապատված ենք չարով և դրա տխուր հետևանքներով: Սակայն գլխավոր միտքն այն է, որ անգամ դժվարությունների ու հոգսերի մեջ մեզ տրված է Հոր սիրո հավաստիացումը, որն այդքան բազմազանորեն է բացահայտված մեզ, սակայն առավել ցայտուն կերպով հայտնվել է խաչի վրա: Որքա՜ն կարևոր է մեզ համար՝ մշտապես տեսնել մեր Երկնային Հոր պարգևներն ու օրհնությունները, այլապես մենք հեշտությամբ հիասթափվում ենք՝ հայտնվելով նեղության մեջ, որոնք անխուսափելիորեն գալիս են մեր կյանքում:

Վերապրելով դժվարին ժամանակներ՝ դուք զգացե՞լ եք ձեր հանդեպ Աստծո սիրո իրական լինելը: Ինչպե՞ս է դրսևորվել այդ սերը: Դուք ի՞նչ եք սովորել վերապրած

փորձառությունից: Դուք կարո՞ղ եք այդ փորձառությամբ կիսվել այն մարդու հետ, ով ձգնաժամ է ապրում և կասկածում է Աստծո սիրո իրական լինելուն:

Հինգշաբթի հուլիսի 3

Հայրը, Որդին և Սուրբ Հոգին

Հիսուսը սովորեցնում և Իր կյանքով հայտնում էր, որ Աստվածությունը կազմում են երեք աստվածային Անձեր՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Թեև մենք չենք կարող ռացիոնալ կերպով բացատրել այս ճշմարտությունը, սակայն հավատով ընդունում ենք այն (ինչպես և շատ ուրիշ աստվածաշնչյան ճշմարտություններ) և Պողոսի հետ մեկտեղ ջանում ենք հասնել «կատարյալ իմաստության ամեն ճոխությանը, այսինքն՝ Աստծո և Հոր և Քրիստոսի խորհուրդը իմանալու» (Կողոսացիս 2.2): Այսինքն՝ թեև մենք շատ բան չենք հասկանում, բայց հավատի, հնազանդության, աղոթքի և ուսումնասիրության միջոցով կարող ենք ավելի ու ավելի ընդլայնել մեր գիտությունը:

Աստվածության երեք Անձերն ակտիվ մասնակցություն են ունեցել փրկության ծրագրի իրականացմանը: Որոշե՛ք այս իրադարձություններում յուրաքանչյուր Անձերի դերը.

Ծնունդ՝ Ղուկաս 1.26-35 _____

_____

Մկրտություն՝ Ղուկաս 3.21,22 _____

_____

Խաչելություն՝ Եբրայեցիս 9.14 _____

_____

Երբ Հիսուսի երկրային ծառայությունը մոտեցավ իր ավարտին, Նա Իր հուզված ու տրտմած աշակերտներին խոստացավ, որ նրանց կուղարկի Սուրբ Հոգուն: Այստեղ մենք կրկին տեսնում ենք երեք Անձների փոխազդեցությունը: «Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան: Ճշմարտության Հոգին, որին աշխարհը չի կարող ընդունել, որ չի տեսնում Նրան, և ոչ էլ ճանաչում է Նրան, բայց դուք Նրան ճանաչում եք, որովհետև ձեզ մոտ է մնում և ձեզ հետ կլինի» (Հովհաննես 14.16,17, տե՛ս նաև Հովհաննես 14.26):

Հիսուսը բացատրեց, որ փրկության ծրագրում աստվածային երեք Անձերը համագործակցում են լիակատար ներդաշնակությամբ: Ինչպես Որդին փառավորեց Հորը՝ բացահայտելով Նրա սերը (Հովհան-

նես 17.4), այնպես էլ Սուրբ Հոգին է փառավորում Որդուն՝ աշխարհին բացահայտելով Նրա շնորհն ու սերը (Հովհաննես 16.14):

Խորհրդածե՛ք մի քանի այլ աստվածաշնչյան ճշմարտությունների մասին, որոնք դժվար է ռացիոնալ ձևով բացատրել: Փաստեր մտաբերեք բնությունից, որոնք նույնպես դժվար է հասկանալ: Բնության գաղտնիքներն ի՞նչ կարող են մեզ ասել մեր ռացիոնալ մտածողության սահմանափակության և հավատով ապրելու անհրաժեշտության մասին: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրվա դասին:

Ուրբաթ հուլիսի 4

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վկայություններ Եկեղեցու համար» գրքի 8-րդ հատորից կարդացե՛ք «Աստված Անձ է» գլուխը (263-278):

«Ամրապնդելու համար առ Աստված մեր հավատը՝ Քրիստոսը մեզ սովորեցնում է Իրեն դիմել նոր անվամբ՝ անուն, որը կապված է մարդու սրտում ամենաթանկ ապրումների և հուշերի հետ: Այն մեզ իրավունք է տալիս անսահման Աստծուն դիմել որպես մեր Հոր: Այդ անունը, որով մենք դիմում ենք Նրան և որով Նրան անվանում ենք, Նրա հանդեպ մեր սիրո և վստահության նշանն է, ինչպես նաև՝ Նրա հայրական ուշադրության և մեր հանդեպ լավ վերաբերմունքի երաշխիքը: Այդ անունը, որ մենք արտաբերում ենք, երբ Աստծուց ողորմություն կամ օրհնություն ենք խնդրում, Նրա համար հնչում է որպես մեղեդի: Որպեսզի մենք հանդգնություն չհամարենք Նրան որպես Հայր դիմելը, Նա Ինքը նորից ու նորից կրկնում է այդ անունը: Նա ցանկանում է, որ այդ անունը և դիմելաձևը մեզ համար դառնա սովորական ու բնական:

Աստված մեզ վերաբերվում է որպես Իր զավակներ: Նա մեզ փրկագնել է այս անհոգ աշխարհից և ընտրել է մեզ, որպեսզի մենք դառնանք արքայական ընտանիքի անդամներ՝ Երկնային Թագավորի որդիներ ու դուստրեր: Նա մեզ կոչ է անում Իրեն վստահել առավել նվիրված կերպով և ուժեղ, քան զավակը վստահում է իր երկրային հորը: Ծնողները սիրում են իրենց զավակներին, բայց Աստծո սերն ավելի ուժգին է, ավելի խորն ու լայն, քան ցանկացած մարդկային սեր» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 141, 142):

«Մեր Երկնային Հայրը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Իր սերն արտահայտեց Գողգոթայի խաչի վրա: Հայրը սիրում է մեզ, Նա լի է կարեկցանքով ու քնքուշ ողորմությամբ» (Է. Ուայթ, Ժամանակի նշանները, սեպտեմբերի 30, 1889 թ.):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպե՞ս օգնել այն մարդուն, ում փոխհարաբերությունների փորձը իր երկրային հոր հետ հեռու է լավագույն վիճակում լինելուց, սիրել Աստծուն և սովորել վստահել Նրան՝ որպես իրենց Երկնավոր Հայր:
2. Եթե Աստված սիրում է մեզ, ինչո՞ւ ենք մենք տառապում:
3. Քննարկե՛ք հինգշաբթի օրվա դասի վերջին հարցին ձեր պատասխանները:
4. Ջանացե՛ք պատկերացնել տիեզերքի աներևակայելի չափերը: Խորհեցե՛ք այն մասին, որ Հիսուսը՝ Տիեզերքի Արարիչը, մեզ համար մահացել է խաչի վրա: Մենք բավարար չափո՞վ ենք խորհում այս ապշեցուցիչ և հուսադրող լուրի մասին: Ինչպե՞ս կարող ենք սովորել ամեն ակնթարթ ցնծալ Աստծո սիրո այդպիսի անըմբռնելի հայտնությամբ:

ԴԱՍ 2

ՀՈՒԼԻՍԻ 5-11

ՈՐԴԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 24.30, Դանիել 7.13,14, Մատթեոս 11.27, Ղուկաս 5.17-26, Հովհաննես 8.58, Մատթեոս 20.28:

Հիշելու համարը.

«Որովհետև Մարդի Որդին էլ չեկավ, որ Իրեն ծառայեն, այլ որ Նա ծառայի, և Իր անձը փրկանք տա շատերի տեղ» (Մարկոս 10.45):

Ավելի քան երկու տարի անցկացնելով հասարակական ծառայության մեջ՝ Հիսուսը հարցրեց Իր աշակերտներին. «Մարդիկ Ինձ համար ո՞վ են ասում, որ Մարդի Որդին լինի» (Մատթեոս 16.13): Նրանց համար դժվար չէր հաղորդել, թե իրենք Նրա մասին ինչ են լսել մարդկանցից: Սակայն Հիսուսի հաջորդ հարցն առավել դժվար էր՝ «Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, որ լինեմ» (Մատթեոս 16.15): Այժմ հարցն ուղղված էր անմիջապես իրենց: Հիսուսը չէր հարցնում նրանց կարծիքն այն մասին, թե Ինքն ինչ տպավորություն է գործում, կամ թե նրանք ինչ են մտածում Իր բնավորության մասին: Նրա հարցը վերաբերում էր Հիսուսի Անձի բուն էությանը: Նա աշակերտներից պահանջում էր նրանց անձնական համոզմունքների ու հավատի արտահայտությունը:

Վաղ թե ուշ յուրաքանչյուրն ստիպված կլինի պատասխանել այս հարցին: Մեզ ամենևին չի օգնի խոսքերի կրկնությունը կամ այլ մարդկանց խոստովանանքը. մենք պետք է անկեղծորեն վկայենք, թե ինչին ենք հավատում անձամբ մենք: Եվ, իհարկե, այդ պատասխանից կախված է յուրաքանչյուր մարդու ճակատագիրը:

Այս շաբաթ մենք պատասխան կորոնենք այն բանի հիման վրա, ինչ ասում կամ անում էր Ինքը՝ Հիսուսը: Մեր նպատակն է՝ հավատով գալ այն նույն պատասխանին, որ տվեց Պետրոսը. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (համար 16):

Միաշաբթի **հուլիսի 6**

Մարդի Որդին

Ամենից շատ Հիսուսը սիրում էր Իրեն Մարդի Որդի անվանել: Ավետարաններում նշված է, որ Նա Իրեն այդ անվամբ անվանել է ավելի քան 80 անգամ: Այլ մարդիկ Նրան երբեք այդպես չեն դիմել: Այդ անունը Նա ընտրել էր հատուկ մտադրությամբ:

Այդպիսի ոճական արտահայտությունը սովորական բան էր Հին Կտակարանում: Բացի մեկ բացառությունից, այն միշտ վերաբերում էր մարդուն. այդպիսով, Հիսուսը այն օգտագործում էր, որպեսզի ընդգծի Իր մարդկային էությունը:

Սուրբ Գիրքը Հիսուսին ներկայացնում է որպես ճշմարտապես Մարդ: Նա ծնվեց որպես նորածին, մեծացավ որպես երեխա («աճում և զորանում էր հոգով՝ իմաստությամբ լցված» (Ղուկաս 2.40,52), Նա ուներ անվանված եղբայրներ ու քույրեր (Մատթեոս 13.55,56): Նա ուտում էր (Մատթեոս 9.11), քնում էր (Ղուկաս 8.23), հոգնում էր (Հովհաննես 4.6), քաղց ու ծարավ էր զգում (Մատթեոս 4.2, Հովհաննես 19.28), տրտմում և թախծում էր (Մատթեոս 26.37):

Պատահական դիտորդին Հիսուսը թվում էր մի սովորական մարդ, ով ապրում էր մարդկանց մեջ որպես բազում այլ մարդկանցից մեկը: Նրա ժամանակակիցների մեծ մասը Նրանում լոկ մարդ էր տեսնում (Հովհաննես 7.46): Շատերը Նրան վերաբերվում էին որպես իրենցից մեկի, ոմանք հեգնում էին Նրան (Ղուկաս 8.53), քննադատում էին Նրան (Մատթեոս 11.19), անգամ «ծաղր էին անում Նրան և ծեծում» (Ղուկաս 22.63): Նրանց համար Նա սոսկ ևս մի մարդ էր:

Ցավոք, նրանց չհաջողվեց ինչ-որ ավելի մեծ բան տեսնել *Մարդի Որդի* անվան մեջ: Թեև, համաձայն Դանիել 7.13,14-ի՝ «երկնքի ամպերով գալիս էր Մարդի Որդու նման, և մինչև Հինավուրցը եկավ, և Նրա առջև մոտեցրին Նրան, և Նրան տրվեց իշխանություն և պատիվ ու թագավորություն»: Հրեաները այս Մարդի Որդուն նույնականացնում էին Մեսիայի հետ: Այդ պատճառով, երբ Հիսուսն օգտագործում էր այս անունը, Նա կիսաբացում էր ճշմարտությունն այն մասին, որ Ինքն է խոստացված Մեսիան, մարմնացած Քրիստոսը:

Կարդացե՛ք Մատթեոս 24.30, 25.31, 26.64-ը: Հիսուսի բերված խոսքերում ի՞նչն է համապատասխանում Դանիել 7.13,14-ին: _____

_____

Ինչո՞ւ մեզ համար այդքան կարևոր է իմանալը, որ Հիսուսը ճշմարտապես Մարդ էր: Նրա մարդկային էությունն ի՞նչ նշանակություն ունի մեր փրկության համար: Այն ի՞նչ նշանակություն ունի մեր ամենօրյա կյանքի համար, հատկապես՝ երբ մենք պայքարում ենք գայթակղության և մեղքի դեմ:

Երկուշաբթի **հուլիսի 7**

Աստծո Որդին

«Աստծո Որդի» անունն օգտագործել է ոչ միայն Գաբրիելը (Ղուկաս 1.35), այլ նաև որոշ մարդիկ, երբ դիմում էին Հիսուսին (Մատթեոս 14.33, Մարկոս 15.39, Հովհաննես 1.49, 11.27): Նա ընդունում էր այդ դիմելաձևը, սակայն զգույշ էր Իր վերաբերմամբ այդ անվան կիրառման հարցում, քանի որ Իրեն կարող էին քարկոծել: Սակայն Աստվածաշունչը բազմիցս խոսում է Հոր հետ Նրա յուրահատուկ փոխհարաբերությունների մասին:

Հիսուսի մկրտության ժամանակ Հայրը Նրան ընդունեց որպես Իր Որդի (Մատթեոս 3.17), միևնույնը տեղի ունեցավ պայծառակերպության ժամանակ (Մատթեոս 17.5):

Հոր և Որդու փոխհարաբերությունները եզակի են: Քրիստոսը տիեզերքում միակ Անձն է, Ով նման փոխհարաբերություններ է վայելում, քանի որ միայն Նա ունի այն նույն էությունը, ինչ և Հայրը: Մեզ՝ հավատավոր մարդկանց, առավելություն է տրվել՝ դառնալ Աստծո զավակները: Բայց Հիսուսը միշտ եղել է, կա ու կլինի Աստծո եզակի Որդին:

Բերված համարներն ի՞նչ են հայտնում Հոր և Որդու կատարյալ միասնության մասին: Մատթեոս 11.27, Հովհաննես 3.35, 5.17, 10.30: _____

_____

Հիսուսի և Հոր կատարյալ միասնությունը ներառում է միմյանց փոխադարձաբար կատարելապես ճանաչելը՝ կամքի, նպատակի ու ձգտման միասնությունը: Ավելին, այն ներառում է բնության միասնականությունը: Որդին և Հայրը երկու Անձ են (Ես և Հայրը»), որոնք ունեն նույն (նմանօրինակ) էություն («մեկ»), այս փաստն ընդգծված է չեզոք սեռի «մեկ» դերանվամբ (համեմատե՛ք Ա Կորնթացիս 3.8):

Սակայն մենք պետք է հիշենք՝ քանի որ Հիսուսը եկավ երկիր, որ այստեղ ապրի որպես մարդ, Նա կամավոր կերպով նսեմացրեց Իրեն

(Փիլիպպեցիս 2.6-8): Դա գործառութային առումով նպատակահարմար սահմանափակում է, բայց որպես այդպիսին այն չէր հանդիսանում Նրա էության մի մասը: Հիսուսն Իրեն նսեմացրեց հանուն որոշակի նպատակի, առանձնահատուկ մտադրությամբ:

Հաշվի առնելով սույն հայեցակարգը՝ մենք կարող ենք հասկանալ, թե ինչու Հիսուսն ասաց. «Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս» (Հովհաննես 5.19), «որովհետև Իմ կամքը չեմ որոնում, այլ Ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհաննես 5.30): Այս գործառութային տեսակետից Նա կարող էր ասել. «Իմ Հայրը մեծ է Ինձանից» (Հովհաննես 14.28):

Հիսուսը լիարժեք Աստված էր և լիարժեք Մարդ: Այս զարմանահրաշ ճշմարտությունն ի՞նչ է ասում երկնքի և երկրի միջև սերտ կապի մասին: Մեզ ի՞նչ մխիթարություն է տալիս այդքան սերտ կապի գիտակցումը:

Երեքշաբթի հուլիսի 8

Քրիստոսի աստվածային էությունը
Մաս 1

Քրիստոսի աստվածայնությունը մեր հավատի հիմքն է: Սովորական մարդը երբեք չէր կարողանա դառնալ մեր փրկիչը՝ անկախ այն բանից, թե որքանով է արտասովոր եղել նրա կյանքը: Ողջ Նոր Կտակարանի միջով անցնում է Հիսուսի աստվածայնության վկայությունը: Մենք կենտրոնանում ենք այն բանի վրա, ինչ Նա Ինքն ասել է այդ թեմայով:

Հիսուսի համար հեշտ չէր բացատրել մարդկանց, թե Ով է Ինքը: Նրա առաքելությունը Նրանից պահանջում էր Իր մեսիականության հայտարարություններ՝ այն մասին, որ Ինքը մարմնացած Աստված է: Սակայն Փրկիչը ծայրահեղ զգույշ էր Իր արտահայտությունների մեջ՝ «Ես Աստված եմ» կամ «Ես Մեսիան եմ» ուղղակի հայտարարությունից գերադասելով Իր աստվածային էության մասին ակնարկները, և այդպիսով քողարկված, անուղղակիորեն Իր ունկնդիրներին տանում էր դեպի Իր աստվածայնության իմացություն: Հակառակ դեպքում Նա Իր կյանքը վտանգի կենթարկեր:

Այն բանին զուգընթաց, որ Հիսուսն աստիճանաբար բացահայտում էր Իր աստվածային էությունը, ունկնդիրների մեծամասնությունը հասկանում էր Նրան, չէր հրաժարվում ընդունել Նրա հայտնությունը, քա-

նի որ այն չէր համապատասխանում Մեսիայի մասին նրանց պատկերացումներին: Դա երևում է նրանց խնդրանքից. «Մինչև ե՞րբ ես պահում մեր հոգիները տարակուսանքի մեջ. եթե Դու ես Քրիստոսը, համարձակ ասա՛ մեզ» (Հովհաննես 10.24): Համատեքստը ցույց է տալիս, որ նրանց հարցը, ցավոք, անկեղծ չէր:

Ինչպես մենք տեսանք երեկ, Հիսուսը բազմիցս խոսել է Հոր հետ Իր յուրահատուկ փոխհարաբերությունների մասին: Դա Նրա օգտագործած մեթոդներից մեկն էր, որպեսզի բացահայտի Իր աստվածայնությունը: Շատերը ճիշտ էին հասկանում. երբ Հիսուսն ասաց, որ Աստված Նրա Հայրն է, Նա Իրեն դարձրեց Աստծուն հավասար (Հովհաննես 5.18):

Կարդացե՛ք Ղուկաս 5.17-26-ը: Հիսուսն ինչպե՞ս էր ներկայացնում Իր աստվածայնությունը՝ բացահայտորեն չխոսելով այդ մասին: _____

_____

«Այդ արդեն քայքայվող մարմնին առողջությունը վերադարձնելու համար արարչագործ զորություն էր անհրաժեշտ: Նա, Ով կյանքի շունչը տվեց հողից ստեղծված մարդուն, այժմ կյանք էր պարգևում մահացող տկարին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 269, 270):

Հիսուսը պնդում էր, որ ունի մեղքերը ներելու աստվածային արտոնությունը: Նա խոսում էր նաև այն մասին, որ «կնստի Իր փառաց աթոռի վրա» (Մատթեոս 25.31) և դատելու է բոլոր ազգերին՝ վճռելով յուրաքանչյուրի հավիտենական ճակատագիրը: Դա իրավասու է անել միայն Աստված: Է՞լ ինչ կարելի էր անել այստեղ՝ երկրի վրա՝ բացահայտելու համար, թե Ով է Նա իրականում:

Խորհե՛ք այն մասին, թե որքան խստասիրտ էին առաջնորդներից շատերը Հիսուսի նկատմամբ: Եվ այս այրերը համարվում էին ժողովրդի հոգևոր ուսուցիչնե՛րը: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ խստասիրտ չենք դարձել:

Չորեքշաբթի հուլիսի 9

Քրիստոսի աստվածային էությունը
Մաս 2

Հիսուսը հայտարարեց և ցույց տվեց, որ Ինքը Հորը հավասար ունի մահին հաղթելու զորություն: «Որովհետև ինչպես որ Հայրը մեռել-

ներին հարուցանում է և կենդանի դարձնում, այնպես էլ Որդին, ում որ կամենում է, կենդանի է դարձնում» (Հովհաննես 5.21): Միայն Աստված կարող է պնդել. «Ես եմ հարությունը և կյանքը» (Հովհաննես 11.25):

Հիսուսի աստվածայնության վերաբերյալ մեկ այլ հստակ վկայություն մենք գտնում ենք այն պնդման մեջ, որ Ինքը եղել է միշտ: Նա իջել է երկնքից (Հովհաննես 3.13), որովհետև Նրան ուղարկել է Հայրը (Հովհաննես 5.23): Հետո Քրիստոսը կրկին հաստատում է Իր հավերժական գոյության փաստը. «եվ հիմա փառավորի՛ր Ինձ Դու՝ Հայր, Քեզ մոտ՝ այն փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունեի Քեզ մոտ» (Հովհաննես 17.5):

Ինչո՞ւ է Հովհաննես 8.58 տեքստն իրավամբ համարվում Հիսուսի աստվածայնության ամենաուղղակի և ամենախորը ապացույցներից մեկը: Տե՛ս նաև Ելից 3.13,14: ____

_____

_____

_____

Ի տարբերություն Աբրահամի, ով ինչ-որ ժամանակ *սկսեց գոյություն ունենալ* (այդպիսին է հունարեն «գինոմայ» արմատի բառացի նշանակությունը, որն այստեղ ներկայացված է «լինել» բառով), Հիսուսն Իրեն հայտարարում է հավերժ գոյություն ունեցող: Նա ոչ թե պարզապես եղել է Աբրահամի ծնունդից առաջ, այլ գոյություն է ունեցել միշտ: «Ես Եմ» արտահայտությունը ենթադրում է մշտական գոյություն: Ավելին, «Ես Եմ»-ը Իր՝ Յահվեի տիտղոսն է (Ելից 3.14): Առաջնորդներն անսխալ հասկացան՝ Հիսուսը հավակնում էր լինել Այն Նույն «Ես Եմ»-ը, Ով անկեզ մորենու մեջ հայտնվեց Մովսեսին: Նրանք դա գնահատեցին որպես աստվածահայհոյություն, այդ պատճառով «քարեր վերցրեցին, որ Նրա վրա նետեն» (Հովհաննես 8.59):

Ավետարանները վկայում են, որ Հիսուսը ընդունում էր մարդկանց երկրպագությունը: Նա հիանալի գիտեր, որ, համաձայն Սուրբ գրքի, միայն Աստված է արժանի երկրպագության, քանի որ Ինքն էր ասել սատանային. «Գրված է՝ Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր և միայն Նրան պաշտիր» (Մատթեոս 4.10): Այդ պատճառով, ընդունելով շրջապատողների երկրպագությունը, Նա դրանով իսկ մարդկանց բացահայտում էր Իր աստվածայնությունը: Աշակերտները ծովում (Մատթեոս 14.33), ապաքինված կույրը (Հովհաննես 9.38), կանայք Հիսուսի գերեզմանի մոտ (Մատթեոս 28.9), աշակերտները Գալիլեայում (Մատթեոս 28.17)՝ ամենքը բացահայտորեն երկրպագում էին Քրիստոսին,

ընդունում էին Նրա աստվածայնությունը: Հիսուսին ուղղված Թովմասի խոսքերը՝ «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ» (Հովհաննես 20.28) ոչ մի հրեա չէր արտաբերի, եթե չունենար այն բանի հստակ ըմբռնումը, որ ինքը խոսում է Աստծո հետ:

Կարդացե՛ք Հովհաննես 20.29-ը: Դուք ինչի՞ն եք հավատում այն ամենից, ինչ չեք տեսել: Ձեր պատասխանն ի՞նչ նշանակություն ունի ընդհանուր առմամբ հավատի հարցում:

Հինգշաբթի հուլիսի 10

Քրիստոսի առաքելությունը

Դիտարկելով, թե Ով էր Հիսուսը, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, թե ինչ է Նա կատարել մեզ համար:

Սատանան մեղադրում է Աստծուն, իսկ Հիսուսն եկավ, որպեսզի պատասխանի այդ մեղադրանքներին՝ ներկայացնելով Հոր բնավորությունը և ուղղելով Աստծո մասին կեղծ հասկացությունները: Նա ցանկանում էր, որ մենք ճանաչենք Աստծուն, քանի որ միայն այդպես կարելի է հավիտենական կյանքը ձեռք բերել (Հովհաննես 17.3):

Սակայն փրկության համար մեզ անհրաժեշտ է ինչ-որ ավելի մեծ բան, քան լոկ իմացությունն է: Մենք կարիքն ունենք Աստծո, Ով մեզ պարգևում է Փրկչին, ինչ և ցույց է տալիս «Հիսուս» անունը՝ *Յահվեն է փրկությունը* (Մատթեոս 1.21): Հիսուսը միանգամայն որոշակիորեն նկարագրել է Իր առաքելությունը. «Մարդի Որդին եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին» (Ղուկաս 19.10): Եդեմում մարդիկ կորցրեցին Աստծո հետ փոխհարաբերությունները, կորցրեցին սրբությունը, զրկվեցին տանից և հավիտենական կյանքից: Հիսուսը եկավ, որպեսզի ամեն բան վերականգնի. որպես Փրկիչ Նա վերականգնում է մեր փոխհարաբերությունները Հոր հետ (Հովհաննես 1.51), ներում է մեր մեղքերը (Մատթեոս 26.28), օրինակ է տալիս, թե մենք ինչպես պետք է ապրենք (Ա Պետրոս 2.21), և մեզ հավիտենական կյանքն է պարգևում (Հովհաննես 3.16):

Հիսուսն ինչպե՞ս է որոշում Իր առաքելության էությունը: Հովհաննես 10.11, Մատթեոս 20.28: _____

_____

_____

_____

Հիսուսն ինչո՞ւ պետք է մահանար: Որովհետև Նա կամավոր կերպով զբաղեցրեց մեր տեղը և կրեց մեր մեղքերի պատիժը: Մենք ամենքս մեղավորներ ենք (Հռոմեացիս 3.10-12), այդ պատճառով արժանի ենք հավիտենական մահվան (Հռոմեացիս 6.23): Մեր փրկության գինն այնքան մեծ է, որ այն վճարելու համար Աստծո Որդու կյանքը պահանջվեց:

«Խախտված օրենքը մեղավորի կյանքն էր պահանջում: Ողջ Տիեզերքում կար միայն Մեկը, Ով հանուն մարդկության կարող էր բավարարել օրենքի պահանջները: Քանի որ Աստծո օրենքը սուրբ է նույնքան, որքան և Ինքն՝ Աստված, միայն Աստծուն հավասարն է ընդունակ քավել կատարված անօրենությունը: Ոչ ոք, բացի Քրիստոսից, չէր կարող փրկագնել ընկած մարդուն օրենքի անեծքից և նրան կրկին երկնքի հետ հաշտեցնել» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 63):

Խորհեցե՛ք մեր աշխարհի ճակատագրի և այս աշխարհում մեզանից յուրաքանչյուրի ճակատագրի մասին: Մենք ի՞նչ հույս կունենայինք, եթե ամեն բան ավարտվեր գերեզմանով: Մենք բացարձակապես ոչ մի բանի վրա չէինք կարող հույս դնել, եթե չլիներ փրկության ծրագիրը: Մենք ինչպե՞ս կարող ենք Աստծուն հայտնել մեր երախտագիտությունն այն բանի համար, ինչ Նա Քրիստոսում կատարել է մեզ համար:

Ուրբաթ հուլիսի 11

Հետագա ուսումնասիրության համար

ՅՕԱ Աստվածաշնչյան մեկնությունների 5-րդ հատորից (Էլեն Ուայթի մեկնությունները) կարդացե՛ք «Փրկչի աստվածային-մարդկային էությունը» բաժինը (1126-1128):

«Բայց Աստծո խոսքը, խոսելով երկրի վրա Քրիստոսի բնակության ժամանակ Նրա մարդկային էության մասին, միանգամայն որոշակիորեն խոսում է Նրա հավիտենական գոյության մասին: Խոսքը գոյություն է ունեցել որպես աստվածային Էակ, որպես Աստծո հավիտենական Որդին՝ Իր Հոր հետ միասնության և համաձայնության մեջ...

Աշխարհը արարվել է Նրանով, «և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհաննես 1.3): Եթե Քրիստոսը արարել է մեզ, նշանակում է՝ Նա գոյություն է ունեցել ամենից առաջ: Այս մասին ասված խոսքերն

այնքան որոշակի են, որ ոչ ոքի սրտում չպետք է չնչին իսկ կասկած մնա: Քրիստոսը Աստված էր այդ բառի ամենաբարձր իմաստով: Նա Աստծո հետ էր հավիտյան, Աստված՝ ամենքից վեր, հավիտյանս օրհնյալ:

Տեր Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, գոյություն է ունեցել ի սկզբանե՝ որպես յուրահատուկ Անձ, սակայն միասնական Հոր հետ» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հատոր 1, 247):

«Քրիստոսն ունի կյանք՝ ինքնագո, չփոխառնված, ի սկզբանե: «Ով որ Որդուն ունի, նա կյանքն ունի» (Ա Հովհաննես 5.12): Քրիստոսի աստվածայնությունը Նրան հավատացողի հավիտենական կյանքի երաշխիքն է» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 530):

Հարցեր քննարկման համար

1. Դևերը գիտեին և խոստովանում էին, որ Հիսուսը «Աստծո Սուրբն է» (Մարկոս 1.24), Աստծո Որդին (Մարկոս 3.12), «Բարձրյալ Աստծո Որդին» (Մարկոս 5.7): (Տե՛ս նաև Հակոբոս 2.19): Այդպիսի խոստովանություններն ինչո՞ւ բավական չեն մեր փրկության համար: Է՞լ ինչ է անհրաժեշտ, բացի Աստծո Որդուն մտքով ընդունելուց:
2. Երբ խաչի մոտ կանգնած հարյուրապետը տեսավ, թե ինչպես մահացավ Հիսուսը, նա ասաց. «Ճշմարի՜տ, այս մարդն Աստծո Որդի էր» (Մարկոս 15.39): Հիսուսին ամենից ավելի լավ կարելի է հասկանալ խաչի ստորոտին: Դուք հաճա՞խ եք լինում այնտեղ: Ե՞րբ եք վերջին անգամ եղել այնտեղ: Ինչո՞ւ հենց հիմա ժամանակ չհատկացնել՝ մտորելու համար այն անսահման զոհի մասին, որ Հիսուսը բերեց հանուն մեր փրկության:
3. Հիսուսի շատ ժամանակակիցներ մերժում էին Նրան, որովհետև նրանք սխալ պատկերացում ունեին Մեսիայի մասին: Ցավոք, այսօր շատ մարդիկ հրաժարվում են իրենց կյանքը հանձնել Հիսուսին՝ նախապաշարմունքների կամ Նրա մասին աղավաղված պատկերացման պատճառով: Մենք ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց՝ Հիսուսին տեսնել այնպիսին, ինչպիսին Նա կա իրականում: Մասնավորապես ի՞նչ ունենք մենք՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ, ինչը կարող էր այդ մարդկանց օգնել առավել հստակ հասկանալ, թե իրականում Ով է Հիսուսը:

ԴԱՍ 3

ՀՈՒԼԻՍԻ 12-18

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 14.16-18, 14.26, 15.26, Մատթեոս 12.31, 32, Հովհաննես 16.8, Հովհաննես 3.5-8, Ղուկաս 11.9-13:

Հիշելու համարը.

«Եվ ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան» (Հովհաննես 14.16):

Աստվածության երեք Անձերից Սուրբ Հոգու Անձ ամենաքիչ ըմբռնելին է: Զարմանալի է, որ մեզ ամենամոտ Անձը, որ մեր մեջ նոր ծնունդ է արարում, բնակվում է մեր մեջ և վերափոխում է մեզ, այդքան քիչ է հայտնի մեզ:

Ինչո՞ւ: Սկսենք այն բանից, որ Սուրբ Հոգու մասին Աստվածաշունչը խոսում է ոչ այնքան մանրամասնորեն, որքան Հոր և Որդու: Սուրբ Գիրքը բազմիցս հիշատակում է Հոգու մասին, սակայն այդ հիշատակումների մեծ մասը փոխաբերական է կամ խորհրդանշական: Աստվածաշունչը մեզ լայն տեղեկատվություն է տալիս Հոգու գործունեության մասին, բայց քիչ է խոսում Նրա էության մասին:

Մեկ այլ պատճառ բխում է Սուրբ Հոգու բուն ծառայությունից: Նա մշտապես ջանում է մեր ուշադրությունը կենտրոնացնել Քրիստոսի, և ոչ թե սեփական Անձի վրա: Փրկության ծրագրում Հոգին ծառայում է Հորը և Որդուն, բայց այդ ծառայությունը չի ենթադրում առավել ստորին դիրք:

Այս շաբաթվա ընթացքում, լսելով Հոգու մասին Հիսուսի ուսմունքը, ջանադրաբար կաղոթենք մեր կյանքում Նրա վերափոխող ներկայության մասին:

Միաշաբթի **հուլիսի 13**

Քրիստոսի ներկայացուցիչը

Վախով ու տրտմությամբ էին աշակերտներն ունկնդրում Հիսուսի խոսքերն Իր անխուսափելի մահվան մասին: Երբ իրենք զրկվեն Նրա ներկայությունից, ո՞վ կլինի իրենց Ուսուցիչը, Բարեկամն ու Խորհրդատուն: Իմանալով նրանց մեծ կարիքի մասին՝ Քրիստոսը խոստացավ նրանց ուղարկել Իր Ներկայացուցչին, որպեսզի Նա բնակվի նրանց հետ:

Քրիստոսն ինչպե՞ս անվանեց Իր Ներկայացուցչին: Հովհաննես 14.16-18: Այդ անունն ինչո՞ւ է ճշգրիտ բնութագրում Սուրբ Հոգուն: Հովհաննես 14.26: _____

_____

_____

_____

Օգնականը, Խորհրդատուն և Մխիթարիչը հունարեն «պարակլետոս» բառի տարբեր թարգմանություններն են, որը կազմված է «պարա» նախածանցից (կողքին) և «կլետոս» ածականից (կանչված): Այս բառը տառացիորեն նշանակում է «կողքին լինելու կանչված»՝ ներկայացնելով օգնության կանչված անձի: Այն կարող է մատնացույց անել միջնորդի, պաշտպանի, օգնականի, խորհրդատուի և անգամ փաստաբանի:

Նոր Կտակարանում միայն Հովհաննեսն է օգտագործում «պարակլետոս» եզրույթը: Հետաքրքրական է նշել, որ նա այն օգտագործել է նաև Իր՝ Հիսուսի վերաբերյալ (Ա Հովհաննես 2.1):

Իր երկրային ծառայության ժամանակ Քրիստոսը աշակերտների համար Խորհրդատու էր, Օգնական և Մխիթարիչ: Այդ պատճառով միանգամայն տրամաբանական է, որ Նրա հաջորդը ստացավ նույն անունը: Սուրբ Հոգին ուղարկված է Հոր կողմից՝ Որդու խնդրանքին ի պատասխան և հանուն Որդու (Հովհաննես 14.16,26): Հոգին շարունակում է երկրի վրա Քրիստոսի աշխատանքը:

Հիսուսը աշակերտների հետ ներկա էր Սուրբ Հոգու միջոցով: «Ձեզ որբ չեմ թողնի, կգամ ձեզ մոտ» (Հովհաննես 14.18), - ասաց Տերը: Նա խոսում էր ոչ թե պատահական այցի մասին, որը շատ չէր մխիթարի անօգնական «որբերին», այլ մշտական սերտ փոխհարաբերությունների մասին. «Ես ձեզանում եմ» (Հովհաննես 14.20): Սա հնարավոր դարձավ միայն Սուրբ Հոգու բնակության միջոցով:

Իհարկե, Քրիստոսի մարդկային էությունը Նրան թույլ չէր տալիս անձամբ միաժամանակ լինել տարբեր վայրերում: Մյուս կողմից, Սուրբ Հոգին ամենագո է (Սաղմոս 139.7): Հոգու միջոցով մեր Փրկիչը հասանելի է դարձել բոլորի համար՝ անկախ նրանց գտնվելու վայրից, անկախ ֆիզիկական հեռավորությունից, որ իրենց բաժանում է Քրիստոսից:

Դուք զգացե՞լ եք Սուրբ Հոգու իրական լինելը, թեև մեզ համար հեշտ չէ ըմբռնել Նրա էությունն ու գործողությունը մեր կյանքում:

Երկուշաբթի հուլիսի 14

Սուրբ Հոգին Անձ է

Է. Ուայթը գրում էր. «Սուրբ Հոգու էությունը մնում է առեղծված, որ մենք ի զորու չենք ըմբռնել... Այդ խորհրդավորությունը չափազանց խորն է մարդկային ընկալման համար, և այստեղ լռությունը ոսկի է» (Գործք առաքելոց, 52):

Սակայն նա նաև պնդում էր. «Սուրբ Հոգին Անձ է, այլապես Նա չէր կարողանա վկայել ձեր հոգուն և մեր հոգու հետ միասին, որ մենք Աստծո զավակներն ենք: Սուրբ Հոգին պետք է լինի հատկապես աստվածային Անձ, հակառակ դեպքում Նա չէր կարող իմանալ Աստծո բանականության մեջ թաքնված գաղտնիքները (Է. Ուայթ, Ավետարանչություն, 617): Այս պնդումը հիմնված է Աստվածաշնչի վրա (Հռոմեացիս 8.16 և Ա Կորնթացիս 2.10,11): Այսպիսով, թեև մենք սահմանափակ ենք մեր մարդկային էությամբ, սակայն կարող ենք իմանալ Սուրբ Գրքից, որ Սուրբ Հոգին աստվածային Անձ է: Այս եզրակացությունն իր հաստատումն է գտնում նաև Հիսուսի խոսքերում:

Սուրբ Հոգու ո՞ր գործողություններն են ցույց տալիս, որ Նա Անձ է: Հովհաննես 14.26, 15.26, 16.7-14: _____

_____

_____

Հիսուսը հիշատակել է Հոգու մի շարք գործողությունների մասին, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է անձի գաղափարը: Ո՞վ կարող է անձից ավելի լավ մեզ սովորեցնել և օգնել հիշել այն ամենը, ինչ ասել է Քրիստոսը (Հովհաննես 14.26): Կամ ո՞վ կարող է անձնային էակից ավելի լավ վկայել Հիսուսի մասին (Հովհաննես 15.26), հանդիմանել աշխարհին (Հովհաննես 16.8), մեզ առաջնորդել դեպի ամեն

ճշմարտությունը, ինչպես նաև լսել ու խոսել (Հովհաննես 16.13): Եվ միայն բանական անձը կարող է փառավորել Քրիստոսին (Հովհաննես 16.14):

Հետևելով Հիսուսի ուսմունքին՝ Նոր Կտակարանը գրողները հըստակ կերպով ցույց են տվել, որ Սուրբ Հոգին ունի անձի անկապտելի բնութագրեր՝ կամք (Ա Կորնթացիս 12.11), բանականություն (Գործք առաքելոց 15.28, Հռոմեացիս 8.27), հույզեր (Հռոմեացիս 15.30, Եփեսացիս 4.30):

Քանի որ Սուրբ Հոգին աստվածային Անձ է, մենք պետք է խոնարհաբար հնազանդվենք Նրա կամքին ու առաջնորդությանը: Մենք Նրան կանչում ենք ապրել մեր սրտերում (Հռոմեացիս 8.9), վերափոխել մեր կյանքը (Տիտոս 3.5) և մեր բնավորության մեջ Հոգու պտուղ աճեցնել (Գաղատացիս 5.22,23): Մենք ինքնին անօգնական ենք, միայն մեր մեջ գործող Նրա կամքով կարող ենք դառնալ այնպիսին, ինչպես մեզ խոստացված էր Հիսուսում:

Սուրբ Հոգին նույնպես պարգև է, և, ինչպես պարգևների մեծ մասը, Նրան կարելի է մերժել: Դուք չե՞ք հրաժարվում այն բանից, ինչ ձեր կյանքում ձգտում է կատարել Սուրբ Հոգին: Ինչպե՞ս կարելի է համոզվել դրանում:

Երեքշաբթի հուլիսի 15

Սուրբ Հոգին աստվածային Անձ է

Երբ Հիսուսն աշակերտներին ասում էր Սուրբ Հոգու մասին, Նա Նրան «ուրիշ» Մխիթարիչ անվանեց (Հովհաննես 14.16): Հիսուսի կողմից հունարեն «ալլոս» բառի օգտագործումը նշանակում է «մեկ այլ՝ նույն տեսակի» (ևս մեկը), ի տարբերություն «հետերոս» բառի, որը նշանակում է «ուրիշ՝ տարբեր տեսակի կամ որակի»: Հորն ու Որդուն կապող էության նույն նմանությունը բացահայտված է Որդու և Սուրբ Հոգու միջև փոխհարաբերություններում:

Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգին «կպատմի մեզ» (Հովհաննես 16.13): Միայն աստվածային Անձը կարող է հայտնել ապագան (Եսայիա 46.9,10):

Սուրբ Հոգու աստվածայնությունը հաստատվում է նաև Նրա դերով Սուրբ Գրքի ներշնչման մեջ, Հոգու այդ գործառույթը միանշանակ ընդունում էր Հիսուսը: Նա պնդում էր. «ինքը՝ Դավիթը, Սուրբ Հոգով ասում է» (Մարկոս 12.36, համեմատե՛ք Սաղմոս 110.1):

Ապրելով երկրի վրա՝ Հիսուսը անդադար հետևում էր Սուրբ Հոգու առաջնորդությանը: Հոգու օծումն ստանալով մկրտության ժամանակ (Մատթեոս 3.16,17)՝ նա «Հոգով տարվեց անապատ» (Ղուկաս 4.1): Հաղթելով փորձչին՝ «Հիսուսը Հոգու զորությամբ հետ դարձավ Գալիլեա», որպեսզի իրականացնի Իր ծառայությունը (Ղուկաս 4.14): Նա Իր հրաշքները կատարում էր Սուրբ Հոգու միջոցով (Մատթեոս 12.28): Այն փաստը, որ Աստծո Որդին կախված էր Հոգուց, Հոգու աստվածայնության ևս մեկ ապացույց է, քանի որ դժվար է պատկերացնել, որ Աստծո Որդին կախված լինի ինչ-որ ավելի փոքր բանից, քան Աստվածությունն է:

Հոգու աստվածայնության մասին ևս մեկ վկայություն կարելի է տեսնել այն բանում, թե ինչպես այդ Անձը Հոր և Որդու հետ հավասար հիշատակվում է որոշ աստվածաշնչյան տեքստերում: Այսպես, Հիսուսը առաքյալներին հանձնարարեց նոր աշակերտներին մկրտել «Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթեոս 28.19):

Հետևյալ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ՝ հասկանալ Սուրբ Հոգու աստվածայնությունը: Մատթեոս 12.31,32:

_____

_____

_____

Մարդի Որդու դեմ (մեղք, որը կարող է ներվել) և Սուրբ Հոգու դեմ (մեղք, որը չի կարող ներվել) ասված խոսքերի համեմատությունը ցույց է տալիս, որ Հոգին արտասովոր Անձ է: Աստվածահայհոյությունն անմիջականորեն Աստծո դեմ կատարված մեղք է: Այդպիսով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Սուրբ Հոգին հանդիսանում է Աստվածության երեք Անձնավորություններից մեկը: Թեև շատ է գրված «չներվող մեղքի» մասին, անմիջական համատեքստը պատկերում է մարդկանց, ովքեր այնքան խստացած էին Սուրբ Հոգու և փրկության մեջ Նրա դերի դեմ, որ նրանք Նրա աշխատանքը վերագրում էին սատանային:

Չորեքշաբթի **հուլիսի 16**

Սուրբ Հոգու գործունեությունը

Մենք արդեն հիշատակել ենք մարմնացած Քրիստոսի կյանքում և Սուրբ Գրքի ներշնչման մեջ Սուրբ Հոգու կարևոր դերը: Այժմ եկե՛ք կենտրոնանանք հանուն մեր փրկության Հոգու գործունեության վրա:

Ի՞նչ է կատարում Սուրբ Հոգին՝ ձգտելով նախապատրաստել մեզ Փրկչի ընդունմանը: Հովհաննես 16.8: _____

_____

_____

_____

_____

Ո՞վ դեղ կընդունի՝ առանց գիտակցելու, որ ինքը հիվանդ է: Ճիշտ այդպես էլ մենք չենք կարող փրկություն ստանալ, եթե չընդունենք մեր մեղավորությունը: Սուրբ Հոգին մեղմ, բայց հաստատորեն համոզում է մեզ, որ մենք մեղք ենք գործել, մեղավոր ենք և ենթակա ենք Աստծո արդար դատաստանի:

Հետո Հոգին մեզ առաջնորդում է դեպի Քրիստոսը՝ վկայելով Նրա մասին (Հովհաննես 15.26)՝ որպես մեր միակ Փրկչի: Քանի որ Հիսուսը ճշմարտությունն է (Հովհաննես 14.6), ապա, մեզ առաջնորդելով դեպի Հիսուսը, Հոգին նաև մեզ տանում է դեպի ճշմարտություն (Հովհաննես 16.13): Այլ կերպ լինել չի կարող, քանի որ Սուրբ Հոգին անվանված է ճշմարտության Հոգի (տե՛ս Հովհաննես 14.17):

Երբ մենք հանդիմանվում ենք մեղքերի մեջ (ինչը ենթադրում է դրանց ապաշխարություն) և ուղղորդվում ենք դեպի Հիսուսն ու Նրա ճշմարտությունը, մենք պատրաստ ենք, որպեսզի Սուրբ Հոգին մեր մեջ կատարի Իր մեծ աշխատանքը:

Ինչո՞ւ է այդքան կարևոր «Հոգուց ծնվելը»: Հովհաննես 3.5-8:

Այն մարդիկ, ովքեր ջանում են սեփական ուժերով փոխել իրենց կյանքը, գիտեն, թե որքան ապարդյուն են իրենց ջանքերը: Առանց Աստծո միջամտության մենք չենք կարող վերափոխել մեր աղավաղված մեղավոր կյանքը: Մեղավորի վերածնունդը այնպիսի ստեղծագործ զորությունն է պահանջում, որը կարող է պարգևել միայն Աստծո Սուրբ Հոգին: Մենք փրկված ենք «մյուս անգամ ծնվելու ավազանով և Սուրբ Հոգու նորոգությունով» (Տիտոս 3.5): Հոգու աշխատանքը ոչ թե նախկին կյանքի ձևափոխությունը կամ բարելավումն է, այլ մարդու բարոյական էության փոփոխումը, նոր կյանքի ստեղծումը: Այդպիսի հրաշքի արդյունքները պարզորոշ երևում են և անհերքելի փաստեր են Ավետարանի օգտին:

Սուրբ Հոգու աշխատանքն անհրաժեշտ է ոչ միայն մեր քրիստոնեական կյանքի սկզբում, մենք Նրա կարիքն ունենք մշտապես: Նպաստելով մեր հոգևոր աճին՝ Նա մեզ սովորեցնում է և մեզ հիշեց-

նում այն ամենը, ինչ սովորեցնում էր Հիսուսը (Հովհաննես 14.26): Եթե մենք թույլ տանք, Հոգին միշտ կբնակվի մեզանում՝ որպես մեր Օգնական, Մխիթարիչ և Խորհրդատու (Հովհաննես 14.16):

Վատ սովորություններն ու բնավորության հատկանիշները դժվար է փոխել, այնպես չէ՞: Դրանք կրկին ու կրկին կարող են հաղթել մեզ, եթե միայն մենք մշտական զգոնություն չպահպանենք: Մեր ժառանգական թուլություններն ու մեղքի հանդեպ հակումն ի՞նչ պետք է ասեն մեզ Սուրբ Հոգու առաջնորդության մեր մշտական կարիքի մասին:

Հինգշաբթի հուլիսի 17

Սուրբ Հոգով առլեցուն

Անկասկած, իմանալը, թե ով է Սուրբ Հոգին, կարևոր է: Բայց այդ իմացությունն իմաստ չունի, եթե մեզ չի տանում մեր կյանքում Նրա ներկայության համար մեր լիակատար բաց լինելուն: Հիսուսը հստակ կերպով հասկացրեց. եթե մենք երկնային Մխիթարիչին ամեն օր չհրավիրենք բնակվել մեզանում, կա մեկ այլ հոգի, որը ծարավի է իրենով լցնել դատարկ կյանքը և դրանում հոգևոր աղետ առաջ բերել (Մատթեոս 12.43-45): Հիսուսն Ինքը «լցված էր Սուրբ Հոգով» (Ղուկաս 4.1): «Նա ամեն օր նոր մկրտություն էր ստանում Սուրբ Հոգով» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 139):

Ի՞նչ են հայտնում Ղուկաս 11.9-13 տեքստերն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգին: Մեզ ի՞նչ են վկայում այդ համարները Սուրբ Հոգին մեզ պարգևելու Հոր ցանկության մասին: _____

_____

_____

_____

_____

Խորհրդավոր ընթրիքի ժամանակ Հիսուսը խոստացավ Իր աշակերտներին, որ նրանց մոտ կուղարկի Սուրբ Հոգին: Նա ընդգծեց Հոգու մխիթարող և ուսուցանող ծառայությունը, որը պետք է ճիշտ ժամանակին լրացներ նրանց կարիքը: Սակայն Քրիստոսի հարությունից հետո փոխվեցին հանգամանքները, և աշակերտները բախվեցին նոր դժվարությունների:

Ո՞րն է Սուրբ Հոգու մասին Հիսուսի խոստման իմաստը, Ում աշակերտները պետք է ստանային Քրիստոսի հարությունից հետո: Գործք առաքելոց 1.4-8: _____

_____

_____

Միայն Գործք առաքելոց 1.5-ում գրառում կա այն մասին, որ Հիսուսը խոսել է Սուրբ Հոգով մկրտության մասին: Հովհաննես Մկրտիչը նույնպես հայտնում էր այդ հատուկ մկրտության մասին (Մատթեոս 3.11, Հովհաննես 1.33), բայց այն պետք է տեղի ունենար Քրիստոսի համբարձումից հետո: Ի՞նչ է նշանակում Հոգով մկրտությունը:

Գործք առաքելոց 1.8-ում Հիսուսն Ինքը բացատրեց դա զուգահեռաբանությամբ: Դուք «Սուրբ Հոգով կմկրտվեք» (Գործք առաքելոց 1.5), «երբ որ Հոգին ձեզ վրա կգա» (Գործք առաքելոց 1.8): Սուրբ Հոգով մկրտվել նշանակում է, որ մարդը լիովին գտնվում է Հոգու ազդեցության ներքո, լցված է Հոգով (Եփեսացիս 5.18): Այդ փորձառությունը տեղի չի ունենում «մեկընդմիշտ», այլ կարիք ունի մշտական նորոգման:

Դուք ի՞նչ և ինչո՞ւ կպատասխանեք, եթե որևէ մեկը հարցնի ձեզ. «Դուք երբևէ եղե՞լ եք Հոգով առլեցուն»:

Ուրբաթ հուլիսի 18

Հեպագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Վկայություններ Եկեղեցու համար» գրքի 8-րդ հատորից կարդացեք «Խոստացված զորությունը» գլուխը (19-23), «Գործք առաքելոց» գրքից՝ «Հոգու պարգևը» (47-56):

Ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում, բոլոր տրտմությունների և բոլոր ուրախությունների մեջ, երբ ապագան թվում է մռայլ ու անորոշ, երբ մենք մեզ անօգնական ու միայնակ ենք զգում, մեզ կուղարկվի Մխիթարիչը՝ ի պատասխան հավատքի աղոթքի: Հանգամանքները կարող են մեզ անջատել բոլոր երկրային բարեկամներից, բայց ոչ մի իրադարձություն, ոչ մի տարածություն չի կարող մեզ բաժանել երկնային Մխիթարիչից: Եվ որտեղ էլ մենք լինենք և ուր էլ գնանք, Նա միշտ մեր աջ կողմում է, որպեսզի օգնի, աջակցի, սատարի ու քաջալերի» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 669):

«Սուրբ Հոգին մեծագույնն է այն բոլոր պարգևներից, որոնք Նա կարող էր Հորից խնդրել Իր ժողովրդի բարոյական վերելքի համար: Հոգին պետք է վերածնող ազդեցություն գործի, իսկ առանց Նրա Քրիստոսի զոհը իզուր կլիներ: Չարի ազդեցությունը մեծանում է շատ դարերի ընթացքում, և ապշեցուցիչ է, թե ինչ հնազանդությամբ են մարդիկ տրվում սատանայի ստրկությանը: Մեղքին կարելի է դիմադրել ու դիմակայել միայն Աստվածության երրորդ Անձի՝ Սուրբ Հոգու մեծազոր ազդեցության շնորհիվ, Ով Իրենց դրսևորում է ոչ թե որպես փոխակերպված էներգիա, այլ սիրտը մաքրող Աստծո զորության ողջ լիությամբ: Հոգին գործուն է դարձնում այն ամենը, ինչ գործել է աշխարհի Փրկիչը» (նույն տեղում, 671):

Հարցեր քննարկման համար

1. Հաշվի առնելով ինքնամեծարման մարդկային հակումը՝ մեզ ի՞նչ է սովորեցնում Սուրբ Հոգու խոնարհ ու ենթարկված գործունեությունը:
2. Շփվելով Նիկոդեմոսի հետ՝ Հիսուսը Սուրբ Հոգու գործունեությունը համեմատեց քամու հետ: Ի՞նչ հոգևոր դասեր մենք կարող ենք քաղել այդ համեմատությունից:
3. Որոշ մարդիկ պնդում են, որ Հոգով մկրտության վկայությունը այսպես կոչված լեզուներով խոսելու ընդունակությունն է: Մենք ի՞նչ պետք է պատասխանենք նման պնդումներին:
4. Մենք համարում ենք, որ Սուրբ Հոգին ազդում է յուրաքանչյուր առանձին մարդու վրա, և դա ճիշտ է: Միևնույն ժամանակ, մենք ինչպե՞ս կարող ենք, լինելով միասնական Մարմին, վերապրել Նրա ներկայության փաստը մեր եկեղեցում:

ԴԱՍ 4

ՀՈՒԼԻՍԻ 19-25

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 18.9-14, Հովհաննես 6.44, Ղուկաս 15.3-10, Մատթեոս 20.28, Հովհաննես 8.34-36, Հովհաննես 6.35,47-51:

Հիշելու համարը.

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.16):

Արդիկ հաճախ ասում են, որ մահը կյանքի մի մասն է: Ո՛չ, մահը կյանքի դադարումն է, ոչ թե նրա մասը: Բայց մենք այնքան ենք վարժվել մահվան իրողությանը, որ դրան սխալ բնորոշում ենք տալիս, այն սահմանում ենք ամենևին ոչ այնպես, ինչ նա իրականում կա: Ինչպես էլ մենք ըմբռնենք այս հարցը, մի բան կարելի է ճշգրիտ ասել. առանց Աստծո օգնության մեր ընդհանուր ճակատագիրը կդառնար հավիտենական մահը:

Բարեբախտաբար, այդ օգնությունը եկավ: Աստված Իր անսահման սիրով մեզ առաջարկում է փրկություն Քրիստոսի միջոցով: Երբ հրեշտակը հայտնեց Մեսիայի ծնվելու մասին, Նա Նրան Հիսուս անվանեց (Եբրայերեն բառից, որը նշանակում է «փրկություն»), «որովհետև Նա Իր ժողովրդին կփրկի նրանց մեղքերից» (Մատթեոս 1.21):

Շաբաթվա ընթացքում մենք կդիտարկենք Հիսուսի փրկարար աշխատանքը: Առաջին հերթին ուշադրություն կդարձնենք մեր փրկության հիմքին, իսկ հետո՝ դրա արդյունքներին:

Աստվածաշունչը մեր մեղքերի համար հատուցման միայն երկու ճանապարհ է ներկայացնում. կա՛մ մենք մեր մեղքերի համար հատուցում ենք կրակի լճում, կա՛մ էլ ընդունում ենք այն հատուցումը, որ Քրիստոսը դրանց համար վճարել է խաչի վրա: Դիտարկելով Քրիստոսի միջոցով պարգևված Աստծո շնորհի առատաձեռն պարգևը՝ ևս մեկ անգամ խոնարհությամբ կնորոգենք Հիսուսի հանդեպ մեր հավատը՝ որպես մեր անձնական Փրկչի:

Միաշաբթի **հուլիսի 20**

Փրկությունը Աստծո պարգև է

Հովհաննես 3.16 տեքստում նկարագրելու համար, թե ինչ կատարեց Աստված փրկության համար, երկու բայ է օգտագործվում: Որո՞նք են այդ բայերը և ինչպե՞ս են հարաբերակցվում միմյանց հետ: Դրանք ի՞նչ են ասում մեր փրկության աղբյուրների մասին: _____

_____

_____

_____

Այսօր «սիրել» բայը դրա հաճախակի օգտագործման պատճառով բոլորովին չի հաղորդում այն ճշմարիտ շահագրգռվածության խորությունը, որը ներդրված է հունարեն «ագապո» («սիրել») բայի մեջ: Նոր կտակարանում այս եզրույթն ու դրա ազգակից «ագապե» («սեր») գոյականը բացահայտում է Աստծո խորը, անփոփոխ սերը Իր արարչագործության հանդեպ, որն ամենևին էլ արժանի չէ այդ սիրուն: Սերը Աստծո բնավորության ամենանշանակալից հատկանիշն է: Նա ոչ միայն սիրում է մեզ, այլ նաև Նա *սեր է* (Ա Հովհաննես 4.8):

Աստծո սերը զգացմունքների կամ գերակայությունների վրա հիմնված պոռթկում չէ: Նրա սերը ընտրողական չէ, այն կախված չէ մեր գործերից: Աստված սիրեց աշխարհը, այսինքն՝ բոլոր մարդկանց, ներառյալ՝ նրանց, ովքեր չեն սիրում Նրան:

Ճշմարիտ սերը կարելի է ճանաչել դրա կատարած գործողություններով: Մենք երբեմն ասում ենք, որ սիրում եք ինչ-որ մեկին, իսկ մեր արարքները խոսում են հակառակի մասին (Ա Հովհաննես 3.17,18): Բայց Աստված այդպիսին չէ: Նրա սերն արտացոլված է գործողություններում: Սիրուց դրդված՝ Նա Իր Միածին Որդուն տվեց մեր փրկության համար: Այս գործողությամբ Աստված մեզ տվեց ամեն բան, ինչ Ինքն ուներ, Նա մեզ տվեց Իրեն:

Կարդացե՛ք Ղուկաս 18.9-14: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը Աստծո և Նրա շնորհի նկատմամբ:

_____

_____

_____

Մենք բազմիցս կարդացել ենք այդ առակը, և մեզ արդեն չի զարմացնում Հիսուսի դատավճիռը. «Ասում եմ ձեզ, թե սա արդարացած

իջավ իր տունը, քան թե նա» (Ղուկաս 18.14): Սակայն Հիսուսի ունկնդիրները, ամենայն հավանականությամբ, ցնցված էին, որբ Նա ասաց այդ խոսքերը: Մի՞թե դա արդարացի է:

Իհարկե ո՛չ: Մեղավորը առանց արժանի լինելու ներում ստացավ: Բայց այդպիսին է փրկության էությունը: Դա Աստծո ընծան է: Ընծաների չեն արժանանում, դրանք պարզապես ընդունում են: Մենք չենք կարող գնել փրկությունը, մենք կարող ենք լոկ ստանալ այն: Թեև Հիսուսը հազվադեպ էր օգտագործում «շնորհ» եզրույթը, Նա հստակ կերպով սովորեցնում էր, որ փրկությունը շնորհված է, այսինքն՝ մարդը ստանում է այն, ինչին չի արժանացել:

Եթե Աստված մեզ հատուցեր այն, ինչի մենք արժանի ենք, մենք ի՞նչ կստանայինք և ինչո՞ւ:

Երկուշաբթի հուլիսի 21

Փրկություն. Աստծո նախաձեռնությունը

Ավետարանների պարզ ընթերցանությունը ցույց է տալիս, որ մենք մեր փրկությամբ լիովին պարտական ենք Աստծուն: Հիսուսն այս աշխարհ եկավ ոչ թե այն պատճառով, որ մենք Նրան հրավիրել ենք, այլ՝ որովհետև Նա կամավոր կերպով որոշում ընդունեց Իրեն զոհաբերել մեր փոխարեն, և Հայրը մեր հանդեպ սիրուց Նրան երկիր ուղարկեց: Քրիստոսն Ինքը մեկ անգամ չէ, որ ասել է. «Ինձ ուղարկողը», «Ինձ ուղարկող Հայրը» (տե՛ս Հովհաննես 7.28, 8.29, 12.49):

Աստված է՞լ ինչ է անում մեր փրկության համար: Հովհաննես 6.44: _____

_____

_____

_____

Թեև մենք մեղավորներ էինք և չէինք սիրում Աստծուն, Նա սիրում էր մեզ և հոգ տարավ այն մասին, որ մեր մեղքերը ներվեն Իր Որդու միջոցով (Ա Հովհաննես 4.10): Այս զարմանահրաշ սերը մեզ քաշում է դեպի Նա:

Մեր փրկության մեջ ներգրավված են Աստվածության բոլոր Անձերը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Հիսուսն աշխարհ եկավ որոշակի առաքելությամբ: «Մարդի Որդին եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին» (Ղուկաս 19.10): Ամեն անգամ, երբ մենք նայում ենք Նրան՝ բարձրացված երկրից, Նա մեզ քաշում է դեպի Իրեն (Հովհաննես 12.32):

Մեզ փրկելու Իր ջանքերի մեջ որքա՞ն հեռուն է պատրաստ գնալ Աստված: Ղուկաս 15.3-10: _____

_____

_____

_____

Այս երկու առակները ցույց են տալիս, որ Աստված անգործ չի սպասում, թե երբ մենք կգանք Իր մոտ, այլ ակտիվորեն որոնում է մեզ: Մեր Աստված որոնող Աստված է: Անկախ այն բանից, թե մենք մոլորվել ենք մի հեռավոր վտանգավոր վայրո՞ւմ, թե՞ մեր տան մեջ ենք կորել, Տերը անխոնջ կերպով փնտրելու է մեզ, մինչև որ գտնի:

«Հենց որ բացահայտվում է այդ միակ գառնուկի անհետացումը, անհանգստությունը տիրում է հովվի սրտին: Նա հաշվում ու վերահաշվում է հոտը: Համոզվելով կորստի մեջ՝ նա ոչ մի րոպե չի կորցնում: Նա իննսունինը գառներին թողնում է փարախում և ուղևորվում է կորածին որոնելու: Որքան ավելի մութ է գիշերը, և ավելի վտանգավոր է ճանապարհը, այնքան ավելի ուժեղ է հովվի անհանգստությունը, և ավելի ջանադիր են նրա փնտրտուքները: Նա անում է ամեն բան, որպեսզի գտնի այդ միակ կորած գառանը:

Ի՜նչ թեթևությամբ է նա հեռվում լսում նրա առաջին մայունը: Առաջ շարժվելով դեպի այդ ձայնը՝ նա մագլցում է բարձր ժայռերը, գնում է ձորի հենց պռնկով՝ վտանգի ենթարկելով սեփական կյանքը: Նա շարունակում է որոնումները, իսկ ձայնն ավելի ու ավելի է թուլանում, նշանակում է՝ գառնուկը մահամերձ է: Բայց ահա վերջապես նրա ջանքերը հատուցվում են՝ կորածը գտնված է» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 187, 188):

Երեքշաբթի **հուլիսի 22**

Անհրաժեշտ մահը

Հովհաննես Մկրտիչը Հիսուսին նկարագրում է որպես Աստծո Գառ, «*Որ* վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29): Այս կերպարը լիովին հասկանալի էր ցանկացած հրեայի, ով ծանոթ էր տաճարում կատարվող զոհաբերություններին և Հին կտակարանի սրբազան պատմությանը: Աբրահամը դրսևորեց իր հավատն առ այն, որ «Աստված կտեսնի Իր գառը ողջակեզի համար», և Տերը իսկապես պարգևեց կենդանի, որն էլ զոհաբերվեց Իսահակի փոխարեն (Ծննդոց 22.8,13): Եգիպտոսում հրեաները գառ զոհաբերեցին՝ որպես եգիպտական

գերությունից նրանց աստվածային ազատագրման խորհրդանիշ (Ելից 12.1-13): Ավելի ուշ, երբ հաստատվեց սրբարանի ծառայությունը, ամեն օր զոհասեղանին անփոփոխ կերպով երկու գառ էր զոհաբերվում՝ մեկը առավոտյան, իսկ մյուսը՝ երեկոյան (Ելից 29.38,39): Այս բոլոր զոհերը եկող Մեսիայի խորհրդանիշներն էին, Ով, «գառան նման, տարվեց ... մորթվելու», որովհետև «Տերը Նրա վրա դրեց մեր ամենի մեղքը» (Եսայիա 53.6,7): Այդ պատճառով, Հիսուսին ներկայացնելով որպես Աստծո Գառի, «Որ վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29), Հովհաննես Մկրտիչը բացահայտեց Քրիստոսի քավչարար մահվան փոխարինող բնույթը:

Իր ծառայության ժամանակ Հիսուսը բազմիցս խոսել է Իր մահվան մասին, թեև աշակերտների համար դժվար էր հասկանալ, թե ինչու Նա պետք է մահանար (Մատթեոս 16.22): Հիսուսը նրանց աստիճանաբար բացատրում էր Իր առաքելության վիթխարի նպատակը:

Ի՞նչ պատկերներ էր օգտագործում Հիսուսը՝ ցույց տալու համար, որ Ինքը պետք է մահանա որպես մեր Փոխարինող: Մատթեոս 20.28, Հովհաննես 10.11: _____

_____

_____

«Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13). այս պնդումը մնում է ճշմարտություն, անգամ եթե մարդիկ չեն հասկանում և չեն ընդունում այս զոհը: Խաչի վրա Հիսուսը Իր արյունը թափեց «շատերի համար», «ի թողություն մեղաց» (Մատթեոս 26.28):

Կարևոր է նկատել, որ Հիսուսը կամավոր մահացավ: Ինչպես Հայրը տվեց Իր միակ Որդուն, այնպես էլ Որդին տվեց Իր կյանքը, որ փրկագնի մարդկությանը: Ոչ ոք Աստծուն չի ստիպել անել դա: «Ոչ ոք նրան [կյանքը] վեր չի առնում ինձանից, այլ ես Ինքս եմ ինձանից դնում նրան», - հայտարարեց Հիսուսը (Հովհաննես 10.18):

Անգամ Կայիափան, ով բացահայտորեն մերժում էր Հիսուսին և դավադրություն կազմակերպեց Նրա սպանության վերաբերյալ, միտք արտահայտեց Հիսուսի քավչարար մահվան մասին՝ չհասկանալով դրա նշանակությունը (Հովհաննես 11.49-51):

Խորհեցե՛ք այն մասին, թե որքա՜ն ապերախտորեն են մարդիկ վերաբերվում Աստծուն՝ Քրիստոսում իրենց պարգևված փրկության համար: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ չենք ընկել այդ նույն թակարդը: Ինչո՞ւ է այդ-

քան հեշտ այնտեղ ընկնելը, հատկապես երբ մենք դժվար ժամանակներ ենք ապրում:

Չորեքշաբթի հուլիսի 23

Մեղքից ազատվածները

Առանց Քրիստոի մենք կլինեինք մեղքի գերիներ, մեր ընկած մարդկային էության մեղավոր պոռթկումների գերիներ: Մենք ապրում էինք եսասիրական կյանքով՝ հաճույք պատճառելով ինքներս մեզ՝ Աստծո փառքի համար ապրելու փոխարեն: Այդպիսի հոգևոր ստրկության անխուսափելի արդյունքն էր մահը, որովհետև մահը մեղքի հատուցումն է:

Բայց Հիսուսն եկավ՝ «գերիներին թողություն քարոզելու... խոցվածների արձակելու ազատելով» (Ղուկաս 4.18): Նրանք տառացի գերիներ չեն, այլ սատանայի հոգևոր գերիները (տե՛ս Մարկոս 5.1-20, Ղուկաս 8.1,2): Հիսուսը Հովհաննես Մկրտչին դուրս չբերեց Հերովդեսի բանտից, սակայն ազատեց մեղավոր կյանքի շղթաներով կապվածներին, նրանց ազատագրեց մեղավորության ծանր բեռից և հավիտենական դատապարտումից:

Ի՞նչ մեծ խոստում է բովանդակվում բերված համարներում: Հովհաննես 8.34-36: _____

_____

_____

«Յիրավի» բառի օգտագործումը 36-րդ համարում ցույց է տալիս, որ գոյություն ունի նաև կեղծ ազատություն, պսևդոազատություն, որը շղթայում է մարդկանց, և նրանք շարունակում են ընդդիմանալ Աստծուն: Հիսուսի ունկնդիրները հույս ունեին, որ Աբրահամի հետ իրենց կապը իրենց ազատության գրավականն է: Մենք ենթակա ենք այդ նույն վտանգին: Թշնամին ցանկանում է, որ փրկության հարցում մենք ապավինենք ինչի պատահի, օրինակ՝ ուսմունքների իմացությանը, անձնական բարեպաշտությանը, բարեգործությանը, մասնակցությանը Աստծուն երկրպագելուն, միայն թե ոչ Քրիստոսին: Բայց թվարկվածներից ոչ մի բան, որքան էլ այն կարևոր լինի, ի վիճակի չէ մեզ ազատել մեղքից և դրա դատապարտումից: Միակ ճշմարիտ Ազատիչը Որդին է, Ով երբեք մեղքին գերի չի եղել:

Հիսուսը ուրախությամբ ներում էր մարդկանց մեղքերը: Երբ չորս տղամարդ Նրա մոտ բերեցին անդամալույծին, Նա գիտեր, որ այդ

մարդը հիվանդ էր իր թեթևաբարո կյանքի հետևանքով, բայց Նա նաև գիտեր, որ անդամալույծը ապաշխարել էր: Նրա աղերսող աչքերում Տերը ներվելու ձգտում և Հիսուսի՝ որպես իր միակ Օգնականի հանդեպ հավատ տեսավ: Հիսուսը քնքշանքով ասաց նրան. «Որդյակ, թողված են քեզ քո մեղքերը» (Մարկոս 2.5): Դրանք ամենահիասքանչ բառերն էին այն ամենից, ինչ անդամալույծը երբևէ լսել էր: Նրա միտքն ազատագրվեց հուսահատության բեռից, ներումը նրա հոգին խաղաղությամբ լցրեց: Քրիստսում նա հոգևոր և ֆիզիկական ապաքինում ստացավ:

Փարիսեցու տանը մեղավոր կինը Հիսուսի ոտքերը լվաց արցունքներով և օծեց յուղով (Ղուկաս 7.37,38): Հասկանալով փարիսեցու ոչ համամիտ լինելը՝ Հիսուսը բացատրեց նրան. «Սրա շատ մեղքերն իրան թողված կլինեն» (Ղուկաս 7.47): Հետո Նա ասաց կնոջը. «Քո մեղքերը թողված լինեն քեզ» (Ղուկաս 7.48):

«Թողված են քեզ քո մեղքերը»: Ինչո՞ւ են սրանք լավագույն բառերը, որ մեզանից ցանկացածը երբևէ լսել է:

Հինգշաբթի հուլիսին 24

Քրիստոսը հավիտենական կյանք է պարգևում

Մենք մեղավորներ ենք և այդ պատճառով արժանի ենք մահվան: Բայց Քրիստոսը մեր տեղն զբաղեցրեց խաչի վրա և ճաշակեց մահը, որը հակառակ դեպքում մենք պետք է զգայինք: Լինելով անմեղ՝ Նա Իր վրա առավ մեր մեղքը և կրեց մեր պատիժը, որպեսզի մենք, ապաշխարելով մեր մեղքերը, կարողանանք անմեղ լինել: Նրա միջոցով ենք մենք կործանման փոխարեն հավիտենական կյանք ստանում: Հովհաննես 3.15-ում մեզ զարմանահրաշ խոստում է տրված. «Որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա». այս նույն խոստումը կրկնվում է Հովհաննես 3.16-ում:

Ոմանք կարծում են, որ անգամ Քրիստոսին որպես Փրկիչ ընդունելուց հետո հավիտենական կյանքի խոստումը իրական կդառնա միայն Նրա երկրորդ գալուստից *հետո*: Սակայն փրկության խոստումն արտահայտված է ներկա ժամանակով. «Նրան հավատացողը... հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.36): Քրիստոսին հավատացողը «հավիտենական կյանքն ունի» այժմ և «դատաստան չի մտնի» վերջին օրը, «այլ մահից փոխվեց դեպի կյանք» (Հովհաննես 5.24): Այսպիսով, անգամ եթե մենք մահանում ենք և հանգչում գերեզմանում,

այդ ժամանակավոր քունը չի փոքրացնում հավիտենական կյանքի իրողությունը:

Երբ Հիսուսը դառնում է մեր Փրկիչը, կյանքը միանգամայն նոր նշանակություն է ստանում, և մենք կարող ենք վայելել դրա բարիքներն ու լիությունը: «Ես եկել եմ, - պնդում էր Հիսուսը, - որպեսզի կյանքն ունենան և էլ ավելին ունենան» (Հովհաննես 10.10) Ժամանակավոր աշխարհային հաճույքների փոխարեն, որոնք ճշմարիտ բավականություն չեն բերում, Փրկիչը մեզ առաջարկում է կատարելապես այլ կյանք՝ լի Նրանում անհատնելի բավականությամբ: Այս նոր օրհնյալ կյանքը լցնում է մեր ողջ էությունը: Հիսուսը բազում հրաշքներ է գործել՝ վերականգնելու համար բազմաթիվ մարդկանց ֆիզիկական կյանքը: Բայց ամենից առաջ Նա ցանկանում էր նրանց նորոգված հոգևոր կյանք պարգևել՝ մաքրված մեղքից, լեցուն Իր հանդեպ հավատով և փրկության հույսով:

Ի՞նչ փոխաբերություն էր օգտագործում Հիսուսը, որպեսզի փոխանցի Իրեն որպես Փրկիչ ընդունելու արդյունքները: Դա ի՞նչ նշանակություն ունի մեր գործնական ամենօրյա կյանքում: Հովհաննես 6.35,47-51: _____

_____

_____

_____

Խորհեցե՛ք հավիտենական կյանքի հայեցակարգի մասին: Դա ոչ թե չդադարող գոյություն է, այլ օրհնված, ուրախ, երջանիկ կյանք, նոր երկրում Աստծո հետ սիրով առլեցուն շփում: Շարունակելով ապրել այժմյան աշխարհում՝ մենք ինչպե՞ս կարող ենք սկսել վայելել (գոնե մասնակիորեն) հավիտենական կյանքի գիտակցությունը:

Ուրբաթ **հուլիսի 25**

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Քայլեր դեպի Քրիստոս» գքրից կարդացե՛ք «Մեղավորը Փրկչի կարիքն ունի» գլուխը (17-22), «Հատընտիր լուրեր» գրքի առաջին հատորից՝ «1883 թվականին ծառացած հարցը» գլուխը (350-354):

«Նայելով խաչված Փրկչին՝ մենք առավել լիարժեք են գիտակցում երկնքի Մեծության բերած զոհի նշանակալիությունն ու իմաստը: Մենք

ըմբռնում ենք փրկության ծրագրի փառքը, և Գողգոթայի միտքը մեր սրտերում կենդանի, սրբազան զգացմունքներ է առաջ բերում: Մենք մեր սրտով ու շուրթերով փառաբանելու ենք Աստծուն և Գառին, որովհետև հպարտությունն ու ինքնահիացումը չեն կարող արմատավորվել Գողգոթայի տառապանքները հիշողության մեջ պահող մարդկանց մեջ:

Նա, ով տեսնում է Փրկչի անգերազանցելի սերը, կհամբարձվի մտքերով, կմաքրվի սրտով, կվերափոխվի իր ողջ էությամբ: Նա լույս կդառնա աշխարհի համար և որոշ չափով կարտացոլի այդ խորհրդավոր սերը: Եվ որքան ավելի շատ մտորենք Քրիստոսի խաչի մասին, այնքան ավելի լավ կհասկանանք առաքյալի խոսքերը Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով. որ նրանով աշխարն ինձ համար խաչված է, և ես էլ աշխարհի (Գաղատացիս 6.14)» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 661):

Հարցեր քննարկման համար

1. Փրկությունը պարգև է, իսկ դա նշանակում է, որ դրա համար հարկավոր չէ վճարել: Միևնույն ժամանակ՝ մի՞թե այն ոչ մի արժեք չունի: Մեզ ի՞նչ է հարկավոր, որպեսզի ընդունենք այդ պարգևը, և ինչո՞ւ, ինչ էլ դա մեզ արժենա, փրկության պարգևը, միևնույնն է, անհամեմատ ավելի թանկ արժե:
2. Երկուշաբթի մենք տեքստեր էինք կարդում այն մասին, որ փրկությունը Աստծո նախաձեռնության արդյունքն է: Նա Իր կողմից անում է ամեն բան, որ փրկի մեզ: Սակայն Հիսուսն ասել է, որ մենք պետք է Աստծո Արքայությունն ու Նրա արդարությունը խնդրենք (Մատթեոս 6.33): Փրկչի խոսքերը՝ «Ջանք արեք, որ նեղ դռնով մտնեք» (Ղուկաս 13.24) ենթադրում են, որ մենք պետք է ջանքեր ներդնենք փրկության որոնումներում: Մենք ինչպե՞ս կարող ենք դա բացատրել:
3. Խաչի վրա Հիսուսի մահն ինչպե՞ս է բացահայտում Աստծո արդարությունն ու ողորմությունը:
4. Եթե մենք կարողանայինք հավիտենական կյանքը վաստակել մեր սեփական ջանքերով, բարի գործերով կամ անգամ օրենքի ինքնուրույն պահպանմամբ, դա ի՞նչ կասեր մեղքի լրջության մասին: Խորհեցե՛ք, թե որքան սոսկալի է մեղքը, որ միայն Հիսուսի մահը կարողացավ մեզ փրկագնել մեղքից:

5. Կրոնասեր հրեաները շաբաթը համարում են հավիտենական կյանքի կանխաձաշակումը: Մենք ինչո՞ւ կարող ենք այդ գաղափարը (հավիտենական կյանքը՝ ներկայացված շաբաթվա մեջ) միանգամայն խելամիտ համարել:

ԴԱՍ 5

ՀՈՒԼԻՍԻ 26 – ՕԳՈՍՏՈՍԻ 1

ԻՆՉՊԵ՞Ս ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 5.27-32, 13.1-5, Մատթեոս 22.2-14, Զաքարիա 3.1-5, Հովհաննես 8.30,31, Ղուկաս 14.25-27:

Հիշելու համարը.

«Եվ ինչպես Մովսեսն օձը բարձրացրեց անապատում, այնպես պետք է Մարդի Որդուն բարձրացվել, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.14,15):

Երբ անապատում օձերը խայթում էին հրեաներին, Աստված Մովսեսին հրամայեց պղնձե օձ պատրաստել և այն բարձրացնել ձողի վրա, որ օձի խայթած ցանկացած մարդ կարողանա նայել նրան և կենդանի մնալ:

Ի՞նչ բուժիչ հատկություններ կարող է ունենալ պղնձե օձը: Ո՛չ մի: Ապաքինումը բխում էր Աստծուց: Սակայն, նայելով պղնձե կերպարանքին, հրեաներն արտահայտում էին Աստծո՝ որպես կյանքի ու փրկության միակ հույսի հանդեպ իրենց հավատը:

Տերը ցանկում էր նրանց հոգևոր դաս տալ: Նա մահվան խորհրդանիշը փոխակերպեց կյանքի խորհրդանիշի: Պղնձե օձը Քրիստոսի խորհրդանիշն էր, Ով հանուն մեր փրկության դարձավ մեր մեղքերը Կրողը: Հավատով մենք ամենքս կարող ենք նայել խաչ բարձրացված Քրիստոսին և ապաքինում գտնել հին օձի՝ սատանայի խայթոցից: Հակառակ դեպքում մենք դատապարտված ենք մահանալու սեփական մեղքերի մեջ: Աստծո Խոսքը մեզ բացահայտում է մի անհերքելի ճշմարտություն. որպես մարդիկ՝ մենք շնորհի կարիք ունեցող մեղավորներ ենք, և այդ շնորհը մեզ առաջարկվել է Քրիստոս Հիսուսում:

Շաբաթվա ընթացքում մենք կուսումնասիրենք Հիսուսի խրատները այն հասարակ գործնական քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են փրկության համար:

Սեփական կարիքը խոստովանելը

Կարդացե՛ք Ղուկաս 5.27-32-ը: Դուք ինչպե՞ս կարող եք իմանալ, թե այստեղ հիշատակված մարդկանց որ խմբին եք պատկանում: _____

_____

_____

_____

Շատ մարդիկ ֆիզիկապես առողջ են և բժշկի կարիք չունեն: Բայց ո՞վ է իսկապես առողջ հոգևորապես: Մարդկանց մեջ «բարի գործող չկա, մեկն էլ չկա» (Սաղմոս 14.3), «արդար չկա, մեկն էլ չկա» (Հռոմեացիս 3.10): Մենք կարող ենք ճիշտ արարքներ գործել, բայց չենք կարող մեզ արդար դարձնել Աստծո առջև: Ասելով, որ Նա «չի եկել կանչելու արդարներին» (Ղուկաս 5.32), Հիսուսը նկատի ուներ փարիսեցիներին, ովքեր իրենց համարում էին արդար, սակայն այդպիսին չէին: Թեև նրանք հավատում էին, որ Աստված իրենց մասին լավ կարծիք ունի, սակայն հոգևորապես կույր էին (Հովհաննես 9.40,41):

Այսպիսով, մեղքից բժշկություն ստանալու առաջին քայլը սեփական մեղավոր վիճակի և սեփական անձը բժշկելու կատարյալ անընդունակության խոստովանումն է: Բայց մենք ինչպե՞ս կարող ենք տեսնել մեր կարիքը, եթե մենք կույր ենք: Ինչպե՞ս խոստովանել, որ մենք մեղավոր ենք, եթե հենց մեղքերը մեզ թույլ չեն տալիս տեսնել մեր իսկական վիճակը:

Ո՞վ կարող է բացել մեր հոգևոր աչքերը, որպեսզի մենք գիտակցենք Փրկչի հանդեպ մեր հուսահատ կարիքը: ___

_____

_____

Միակ «աչքերի դեղը», որ ի վիճակի է օգնել մեզ՝ տեսնել մեր իսկական հոգևոր վիճակը, Սուրբ Հոգին է: Նախքան մեզանում որևէ գործ կատարելը՝ Նա պետք է հանդիմանի մեր մեղքերը: Նա հաստատակամորեն կոչ է անում մեր սրտերին, որ մեզ բերի սեփական մեղքերի գիտակցմանը և մեղքի խորը զգացմանը, և միայն այդ ժամանակ մենք կտեսնենք Փրկչի հանդեպ մեր մեծագույն կարիքը: Լսելով այդ կոչը՝ մենք պետք է հնազանդվենք նրան, հակառակ դեպքում այնքան անզգա կդառնանք Սուրբ Հոգու ազդեցության հանդեպ, որ Նա արդեն ոչինչ չի կարողանա անել մեզ համար: Որքա՜ն սոսկալի միտք է:

Թեև մեղքի զգացումը երբեմն կարող է ուժերից վեր բեռ դառնալ, սակայն ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին այդ զգացմունքն օգտագործել մեր հոգևոր օգտի համար:

Երկուշաբթի հուլիսի 28

Ապաշխարությունը

Բավական չէ պարզապես սեփական մեղքերը խոստովանելը, խոստովանությունը պետք է ուղեկցվի ապաշխարությամբ: Աստվածաշնչյան ապաշխարությունն իր մեջ երեք տեսանկյուն է ներառում. սեփական մեղքի խոստովանում, տրտմություն կատարված մեղքի համար և չմեղանչելու ցանկություն: Եթե բացակայում է այս տեսանկյուններից մեկը, ճշմարիտ ապաշխարություն տեղի չի ունենում: Օրինակ, Հուդան խոստովանեց իր մեղքը, բայց նա տրտմություն չէր զգում այն բանի համար, որ ինքը մատնել է իր Ուսուցչին (Մատթեոս 27.3,7): Նրան տանջում էր խիղճը, բայց ճշմարիտ ապաշխարություն չկար: Նրա խոստովանությունը պայմանավորված էր հնարավոր հետևանքների վախով, բայց ոչ թե Քրիստոսի հանդեպ սիրով:

Ապաշխարության կարևորությունը մենք կարող ենք տեսնել այն փաստում, որ Հովհաննես Մկրտիչն ու Հիսուսն իրենց ծառայությունն սկսեցին՝ քարոզելով. «Ապաշխարեցե՛ք, որովհետև Երկնքի Արքայությունը մոտեցել է» (Մատթեոս 3.2, 4.17): Ավելի ուշ, երբ Հիսուսը տասներկու աշակերտներին ուղարկեց նրանց առաջին ավետարանչական ճանապարհորդությանը, նրանք նույնպես քարոզում էին «ապաշխարություն» (Մարկոս 6.12): Եվ Պենտեկոստեից հետո էլ Պետրոսը ժողովրդին կոչ էր անում ապաշխարել (Գործք առաքելոց 2.38, 3.19):

Հիսուսն ինրպե՞ս էր ընդգծում փրկություն ձեռք բերելու համար յուրաքանչյուր մարդու կարիքը: Ի՞նչ լուր է Նա փոխանցում մեզ: Ղուկաս 13.1-5 _____

_____

_____

_____

Հիսոսը պնդում էր, որ բոլոր մարդիկ մեղավոր են, այդ պատճառով նախազգուշացնում էր Իր ունկնդիրներին. «Եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույն կերպ կկորչեք» (համար 5): Առանց ապաշխարության փրկագնումն անհնար է, քանի որ ապաշխարության բացակայությունը

վկայում է այն մասին, որ մարդիկ հրաժարվում են վստահել Տիրոջը:

Պողոս առաքյալն ընդգծում էր. «Աստծո քաղցրությունը քեզ ապաշխարության է տանում» (Հռոմեացիս 2.4): Ի՞նչ է սա նշանակում: Սառույցի բեկորը կարող է փշրվել մանր կտորների, բայց այդ փշուրներն այդպես էլ կմնան սառցակտորներ: Բայց նույն սառցաբեկորը կարելի է տեղադրել կրակի կողքին, և այն կհալվի՝ վերածվելով ջրի: Մեր հպարտության սառույցը կարող է հալվել, միայն եթե մեզ վրա ազդի Աստծո բարության և սիրո ջերմությունը: Այդ պատճառով շատ կարևոր է հնարավորինս հաճախ նայել մեզ պարգևված Աստծո սիրո վկայություններին:

«Ոչ թե մենք ապաշխարում ենք, որպեսզի Աստված կարողանա սիրել մեզ, այլ Նա մեզ բացահայտում է Իր սերը, որպեսզի մենք կարողանանք ապաշխարել» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 189):

Աստծո սիրո ի՞նչ վկայություններ կարող եք դուք բերել: Ձեր կամ այլ մարդկանց վերապրածներից ի՞նչն է դրդում ձեզ՝ վստահել Աստծո բարությանը: Ինչո՞ւ է կարևոր հիշել այդ փորձառությունները, հատկապես՝ դժվար պահերին:

Երեքշաբթի **հուլիսի 29**

Հավատալ Հիսուսին

Իսկական ապաշխարհությունը քայլում է Հիսուսի՝ որպես մեր միակ Փրկչի հանդեպ մեր հավատի հետ ձեռք-ձեռքի: Հիսուսը հաճախ էր խոսում Իրեն հավատալու անհրաժեշտության մասին՝ Իր օրհնությունները ստանալու համար: «Եվ շուտով տղայի հայրն աղաղակեց և արտասուքով ասեց, Հավատում եմ, Տեր, իմ անհավատությանն օգնիր» (Մարկոս 9.23): Հավատը չափազանց կարևոր է փրկության համար: Սատանան գիտի այդ մասին, այդ պատճառով ներդնում է բոլոր ջանքերը, որ խանգարի մեզ հավատալ (Ղուկաս 8.12):

Համաձայն Հիսուսի ուսմունքի՝ ի՞նչ է նշանակում հավատալ: Դա աղոտ զգացողություն չէ, թե ինչ-որ բան հանկարծ կկատարվի: Դա մտավարժանք չէ: Փրկարար հավատը որոշակի նպատակ ունի՝ Հիսուս Քրիստոսը: Հավատալ կարելի է ոչ միայն ինչ-որ բանի, այլև, որ գլխավորն է, ինչ-որ Մեկի: Հավատը վստահությունն է առ Հիսուս և հանուն մեզ Նրա մահվանն ապավինելը: Հավատալ Հիսուսին՝ նշանակում է ճանաչել Նրան, հասկանալ, թե Ո՞վ է Նա (Հովհաննես 6.69), և անձամբ ընդունել Նրան (Հովհաննես 1.12):

Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց Հիսուսին, որ ամենքը, ովքեր իսկապես հավատում են Նրան, ժառանգեն հավիտենական կյանքը: Սակայն Նրա մահը չի նշանակում, թե ամենքը կփրկվեն: Մենք պետք է ծածկվենք Նրա արդարությամբ: Հավատալով Նրան՝ մենք ձեռք ենք բերում արդարություն, վստահություն և մեծագույն խոստումն այն մասին, որ Նա մեզ հարություն կտա վերջին օրը (Հովհաննես 6.40):

Այն կնոջը, ով մեղավոր կյանք էր վարում, Հիսուսը հավաստիացրեց. «Ներված են քեզ քո մեղքերը... քո հավատը փրկեց քեզ» (Ղուկաս 7.48,50): Դա ի՞նչ է նշանակում: Մեզ փրկո՞ւմ է մեր հավատը: _____

_____

_____

Համաձայն ավետարանի պատումների՝ երբ Հիսուսը բժշկում էր որոշ մարդկանց, Նա նրանց ասում էր. «Քո հավատը փրկեց քեզ» (Մատթեոս 9.22, Մարկոս 10.52, Ղուկաս 17.19): Այս խոսքերն ասելիս Տերը նրանց հավատին որևէ բուժիչ զորություն չէր վերագրում: Նրանց հավատը Հիսուսի՝ իրենց ապաքինելու ընդունակ զորությանը լիակատար ապավինումն էր: Հավատի ուժը բխում է ոչ թե մարդուց, այլ Աստծուց, Ում այդ մարդը հավատում է:

Ինչո՞ւ մենք պետք է կշռադատված գնահատենք աղոթքի մեջ հավատի դերը, հատկապես՝ երբ խնդրում ենք ապաքինման մասին: Հաշվի առնելով վերը բերված համարները՝ ինչո՞ւ սխալ կլինի եզրակացնել, որ եթե մեր աղոթքի արդյունքում ապաքինում տեղի չի ունենում, նշանակում է՝ մեր հավատը պակաս է:

Չորեքշաբթի **հուլիսի 30**

Հարսանիքի զգեստը

Երբեմն Հիսուսն ասում էր ունկնդիրներին ցնցող խոսքեր, օրինակ՝ «Եթե չավելանա ձեր արդարությունը ավելի, քան դպիրներինն ու փարիսեցիներինը, բնավ չեք մտնի երկնքի արքայությունը» (Մատթեոս 5.20): Քչերն են ավելի մանրակրկիտ հետևել օրենքի տառին, որքան փարիսեցիները: Սակայն նրանք անհաջողություն կրեցին, որովհետև ավելի շատ ձգտում էին տպավորություն գործել մարդկանց վրա, ոչ թե հնազանդվել Աստծուն: Հիսուսը մեզ զգուշացնում է այդպիսի սխալից (Մատթեոս 6.1):

Իսկ ինչպե՞ս մենք կարող ենք արդար լինել Աստծո առջև: Ամուսնական խնջույքի մասին առակը ցույց է տալիս ճշմարիտ արդարության աղբյուրը:

Կարդացե՛ք Մատթեոս 22.2-14-ը: Թագավորն ինչո՞ւ էր ցանկանում համոզվել, որ յուրաքանչյուր հյուր հարսանիքի զգեստ է հագած: Ի՞նչ էր խորհրդանշում այդ հագուստը: Տե՛ս նաև Եսայիա 61.10, Զաքարիա 3.1-5: _____

_____

_____

_____

Թագավորը հյուրերին հարսանիքի զգեստներ էր բաժանել, որոնց համար հարկավոր չէր վճարել: Ներկաները հրավիրվել էին պատահականորեն: Նրանց հավաքել էին տարբեր վայրերից, և, հավանաբար, նրանք հարսանիքի համապատասխան հագուստ չունեին, իսկ ոմանք փող էլ չունեին այն ձեռք բերելու համար: Ե՛վ հրավիրյալները, և՛ հագուստը թագավորի ընծաներն էին: Միակ բանը, ինչ պահանջվում էր ներկաներից, երկու ընծաներն էլ ընդունելն էր:

Եդեմի այգում մեղանչումից ի վեր յուրաքանչյուր մարդ հոգևորապես մերկ է: Անհնազանդություն դրսևորելով՝ Ադամն ու Եվան զգացին իրենց մերկությունը և փորձեցին ծածկվել թզենու տերևներով: Սակայն այդպիսի հագուստը անհարմար և անտեղի դուրս եկավ (Ծննդոց 3.7): Լավագույն արդարությունը, որ մարդը կարող է ձեռք բերել իր ջանքերով, համեմատելի է կեղտոտ հագուստի հետ (Եսայիա 64.6):

Առակի թագավորի նման, Աստված մեզ ընծայում է հարկավոր հագուստը: Նա զգեստներ պատրաստեց Ադամի ու Եվայի համար և հագցրեց նրանց (Ծննդոց 3.21), ինչը Նրա արդարության խորհրդանիշն էր, որ ծածկում է ապաշխարող մեղավորին: Տերը նույն կերպ Քրիստոսի արդարության հագուստն է պարգևում Իր Եկեղեցուն, որպեսզի վերջինս կարողանա «սուրբ և լուսափայլ բեհեզ հագնել» (Հայտնություն 19.8) և «չունենա ոչ մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ» (Եփեսացիս 5.27): «Բեհեզը Իր՝ Քրիստոսի արդարությունն է, Նրա սեփական անարատ բնավորությունը, որ հավատի միջոցով տրվում է ամենքին, ովքեր Քրիստոսին ընդունում են որպես իրենց անձնական Փրկիչ» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 310):

Մենք ինչո՞ւ պետք է հիշենք, որ մեր փրկությունը կախված է Քրիստոսի արդարությունից, որ Նա անհատույց տալիս է մեզ: Մենք ինչո՞ւ պետք է *միշտ* հիշենք այդ մասին:

Հետևելով Հիսուսին

Երբ մենք, հավատալով, ընդունում ենք մեր կարիքը, ապաշխարում ենք, խոստովանում ենք մեր մեղքերը և ապավինում Քրիստոսի արդարությանը, դառնում ենք Նրա աշակերտները: Իր ծառայության ժամանակ Հիսուսը տարբեր մարդկանց, ինչպես Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը, կանչում էր դառնալու Իր աշակերտները: Այդ կոչը ենթադրում էր ամեն բան թողնել հանուն Նրան հետևելու (Մատթեոս 4.20,22, Մարկոս 10.28, Ղուկաս 5.28): Փաստորեն Ավետարաններում «հետևել» բայը դարձել է «աշակերտի» հոմանիշը:

Ի՞նչ երկու բաղադրիչներ են անհրաժեշտ Հիսուսի աշակերտը լինելու համար: Հովհաննես 8.30,31: _____

_____

_____

_____

Որոշ մարդիկ փորձում են Հիսուսի հանդեպ հավատն առանձնացնել Նրա ուսմունքին հետևելուց, ասես առաջինն ավելի կարևոր է, քան երկրորդը: Բայց Հիսուսը նման բաժանում չի արել: Ճշմարիտ աշակերտության համատեքստում Նա սերտորեն կապում էր այդ երկու տեսանկյունները: Հիսուսի աշակերտը Նրա Անձին նվիրված է նույնքան, որքան և Նրա խոսքերին: Թեև միշտ գոյություն ունի դավանաբանությունների և հավատի ձևերի վրա չափազանց կենտրոնանալու և Իրեն՝ Հիսուսին տեսադաշտից կորցնելու վտանգը, սակայն մենք պետք է նաև գիտակցենք վտանգը՝ ընկնել մեկ այլ ծայրահեղության գիրկը և վճռել, որ միայն Հիսուսի հանդեպ հավատը նշանակություն ունի Տիրոջ հետ մեր փոխհարաբերություններում:

Ո՞րն է աշակերտության գինը: Ղուկաս 14.25-27: _____

_____

_____

_____

Հիսուսը «ատել» բայն օգտագործում էր որպես չափազանցություն՝ փոխանցելու համար «ավելի քիչ սիրել» գաղափարը: Զուգահեռ հատվածը Մատթեոս 10.37-ում լույս է սփռում Նրա այս խոսքերի նշանակության վրա՝ «Ով իր հորը կամ իր մորը սիրում է ավելի շատ, քան Ինձ, Ինձ արժանի չէ, և ով որ իր որդուն կամ դստերը ավելի շատ է սիրում, քան Ինձ, Ինձ արժանի չէ»: Եթե մենք ցանկանում ենք լինել

Հիսուսի աշակերտները, Նա պետք է առաջին տեղը գրավի մեր կյանքում:

Դուք ի՞նչ գին եք վճարում, որպեսզի հետևեք Քրիստոսին և լինեք Նրա աշակերտը: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում Տիրոջ հետ ձեր փոխհարաբերությունների մասին:

Ուրբաթ օգոստոսի 1

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Քայլեր դեպի Քրիստոս» գրքից կարդացե՛ք «Ապաշխարություն» գլուխը (23-32):

«Մենք ինչպես որ չենք կարող ապաշխարել առանց խիղճը արթնացնող Քրիստոսի Հոգու, այնպես էլ չենք կարող ներում ստանալ առանց Քրիստոսի» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 26):

«Նայելով Գողգոթայի խաչին գամված Աստծո Գառանը՝ մենք սկսում ենք ավելի լավ հասկանալ փրկագնման խորհուրդը, և Աստծո բարությունը մեզ տանում է դեպի ապաշխարություն: Հանուն մեղավորների փրկության Իր մահով Քրիստոսը անկրկնելի սեր դրսևորեց: Այդ սերը, ըմբռնվելով մեղավորի կողմից, փափկացնում է նրա սիրտը, գերում է միտքը և հոգում ապաշխարություն է արթնացնում» (նույն տեղում, 26, 27):

«Խոնարհ և կոտրված սիրտը՝ նվաճված ճշմարիտ ապաշխարությամբ, կկարողանա թեկուզ մասամբ ըմբռնել Աստծո սերն ու Գողգոթայի վրա բերված զոհը: Ինչպես որդին է իր զանցանքներն ընդունում սիրող հոր առջև, այդպես էլ իսկապես ապաշխարող մեղավորը Աստծուն կբացի իր բոլոր անօրենությունները: «Եթե խոստովանում ենք մեր մեղքերը, - ասում է Աստվածաշունչը, - ապա Նա, լինելով հավատարիմ և արդար, մեզ կների մեր մեղքերը և մեզ կմաքրի ամեն անիրավությունից» (Ա Հովհաննես 1.9)» (նույն տեղում, 41):

Հարցեր քննարկման համար

1. Շատերը փորձում են մեղքի զգացումը խլացնել ոգելից խմիչքներով, թմրանյութերով, աշխարհային բավականություններով կամ գործերի մեջ չափից դուրս մխրճվելով: Ինչո՞ւ այդ մեթոդներից ոչ մեկն արդյունավետ չէ: Ինչպե՞ս օգնել նման վիճակում գտնվող մարդուն՝ գալ մեղքի խնդրի իսկական լուծմանը:

2. Կարելի է խոստովանել սեփական մեղքերը՝ առանց «ապաշխարության պտուղներ բերելու»: Կարո՞ղ է պատահել՝ դրանք բարի գործեր են, որ գործվում են Աստծո բարյացակամությանը հասնելու նպատակով: Պարզաբանեք ձեր պատասխանը:
3. Խորհեցե՛ք այն փաստի մասին, որ Քրիստոսի արդարությունը մեզ տրվում է անվճար, բայց շատ թանկ է նստում: Թեև դուք կարիք չունեք վճարելու դրա համար, սակայն Տերը խաչի վրա ստիպված եղավ անչափելի գին վճարել դրա համար: Խորհեցե՛ք, թե որքան ընկած վիճակում ենք մենք գտնվում, պատկերացրե՛ք մեղքի ողջ լրջությունը. չէ՞ որ դրանից մեր փրկության համար պահանջվեց այնքան «ծայրահեղ» մի բան, ինչպես Իր՝ Աստծո Որդու մահն էր:

ԴԱՍ 6

ԱՃ ՔՐԻՍՈՏՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 2-8

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 3.1-15, Մատթեոս 13.33, Բ Կորնթացիս 5.17, Հովհաննես 15.4-10, Մատթեոս 6.9-13, Ղուկաս 9.23,24:

Հիշելու համարը.

«Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. Եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել» (Հովհաննես 3.3):

Նիկոդեմոսը ձգտում էր դեպի Քրիստոսը, բայց նա չէր համարձակվում բացահայտորեն այցելել Նրան, այդ պատճառով եկավ գիշերով: Նա քաղաքավարի ողջունեց Հիսուսին՝ Նրան ընդունելով որպես Աստծուց ուղարկված Ուսուցիչ: Տերը գիտեր, որ այդ քաղաքավարի ողջույնի հետևում ճշմարտություն որոնող է կանգնած, այդ պատճառով, առանց ժամանակ կորցնելու, ասաց Նիկոդեմոսին, որ նրան հարկավոր են ոչ այնքան տեսական գիտելիքներ, որքան հոգևոր վերածնունդ, նոր ծնունդ:

Նիկոդեմոսի համար դժվար էր դա ընդունելը: Որպես Աբրահամի սերունդ՝ նա համարում էր, որ Աստծո արքայության մեջ իր տեղը երաշխավորված է: Բացի դրանից, լինելով բծախնդիր փարիսեցի, նա անշուշտ արժանի էր Աստծո բարեհաճությանը, այնպես չէ՞: Նրա ինչի՞ն էր պետք այդքան արմատական փոփոխությունը:

Հիսուսը համբերությամբ բացատրեց, որ հոգևոր վերափոխումը Սուրբ Հոգու կողմից կատարվող գերբնական գործողություն է: Թեև մենք չենք տեսնում և հաճախ չենք հասկանում, թե ինչպես է դա տեղի ունենում, սակայն կարող ենք տեսնել այդպիսի գործողության արդյունքները: Մենք դա անվանում ենք դարձի գալ, նոր կյանք Քրիստոսում:

Մենք ոչ միայն պետք է միշտ հիշենք, թե ինչպես Տերը կանչեց ու դարձի բերեց մեզ, այլ նաև մեզ հարկավոր է մշտապես, ամեն օր կենալ Նրանում, որպեսզի Նա ավելի ու ավելի վերափոխի մեզ՝ Իր պատկերի նմանությամբ:

Միաշաբթի **օգոստոսի 3**

Վերսփին ծնունդ

Մի նախանձախնդիր քրիստոնյա կին, հանդիպելով մի քաղաքական գործչի, հարցրեց. «Դուք երկրորդ ծնունդ ունեցե՞լ եք»: Զայրանալով այդքան խիստ անձնական հարցից (համենայնդեպս, կնոջն այդպես թվաց) քաղաքագետը պատասխանեց. «Հաջողվել է առաջին իսկ անգամից, շնորհակալություն»:

Հաշվի առնելով մեր ընկած բնույթը՝ առաջին ծնունդը մեզ ակնհայտորեն բավական չէ, առնվազն՝ հավիտենական կյանքի համար: Այդ պատճառով մենք պետք է ծնվենք վերստին:

Կարդացե՛ք Նիկոդեմոսի հետ Հիսուսի զրույցը՝ Հովհաննես 3.1-15-ում: Հիսուսն ինչպե՞ս բացատրեց, թե ինչ է նշանակում վերստին ծնվել: _____

_____

_____

_____

Անշուշտ, Նիկոդեմոսը, ուսուցիչ լինելով Իսրայելում, գիտեր հինկտակարանյան Սուրբ Գիրքը, որտեղ խոսվում է «նոր սիրտ» ունենալու անհրաժեշտության և Աստծո ցանկության մասին. այն արարել մեզանում (Սաղմոս 50.12, Եզեկիել 36.26): Հիսուսը Նիկոդեմոսին բացատրում էր տվյալ ճշմարտությունը, և թե ինչպես դա կարող է տեղի ունենալ:

Հովհաննեսի գրի առած երկխոսությունն ավարտվում է Հիսուսի խոսքերով: Նիկոդեմոսը պատասխան չի տալիս: Հավանաբար, նա տուն գնաց խորը մտորումներում խորասուզված: Սուրբ Հոգին մեղմորեն աշխատում էր նրա հետ, և երեք տարի անց Նիկոդեմոսը պատրաստ էր բացահայտորեն Հիսուսի աշակերտը դառնալու:

Այն փաստը, որ մեզ հարկավոր է ծնվել ի վերուստ, վկայում է՝ հոգևոր տեսակետից առաջին ծնունդը բավական չէ: Նոր ծնունդը պետք է լինի կրկնակի՝ ջրից և Հոգուց: Հովհաննես Մկրտչի ծառայության լույսի ներքո Նիկոդեմոսը լիովին հասկանում էր, որ ջրից ծնունդը վերաբերում է ջրի մկրտությանը: Բայց նրան անհրաժեշտ էր նաև իմանալ, որ Հոգուց ծնունդը սրտի նորոգումն է Սուրբ Հոգով:

Ֆիզիկական և հոգևոր ծննդի միջև նմանություններ կան: Երկուսն էլ նշանավորում են նոր կյանքի սկիզբը: Բացի դրանից, ոչ մի ծնունդ մարդն ինքը չի իրականացնում, ուրիշներն են դա անում նրա համար:

Բայց դրանց միջև նաև կարևոր տարբերություն կա. եթե ֆիզիկական ծնունդը տեղի է ունեցել առանց մեր համաձայնության, ապա հոգևոր ծննդի վերաբերյալ միայն մենք ենք իրավասու ընտրություն կատարելու: Ի վերուստ ծնվում են միայն այն մարդիկ, ովքեր հաճույքով թույլ են տալիս Սուրբ Հոգուն՝ նոր հոգևոր էություն արարելու իրենց մեջ: Աստված հարգում է մեր ազատությունը և, չնայելով մեզ փոխելու խորը ցանկությանը, Նա բռնությամբ չի անում դա:

Խորհեցե՛ք այն մասին, թե ինչպես է Աստված ձեր մեջ կատարել վերափոխումը: Հնարավոր է՝ վերափոխումը տեղի էր ունենում դրամատիկ հանգամանքների արդյունքում, կամ, հնարավոր է, դա երկարատև աննկատելի գործընթաց էր: Դուք ի՞նչ կերպ եք ապրել վերստին ծնունդը:

Երկուշաբթի **օգոստոսի 4**

Նոր կյանք Քրիստոսում

Ի վերուստ ծնվել հնարավոր է միայն Սուրբ Հոգու աշխատանքի շնորհիվ: Հիսուսն օգտագործում էր հունարեն «պնեումա» բառը, որը նշանակում է «հոգի» և «քամի», որպեսզի ներկայացնի դարձի գալու գործընթացը (Հովհաննես 3.8): Քամին փչում է, և մեզանից ոչ ոք չի կարող նրան հետ կանչել, ուղղորդել կամ կանգնեցնել: Դա մեծ ուժ է՝ մարդկային վերահսկողությանը ոչ ենթակա: Մենք կարող ենք լոկ արձագանքել դրան, ընդդիմանալ կամ էլ նրա հնարավորություններն օգտագործել սեփական շահերի համար:

Ճիշտ նույն կերպ էլ Սուրբ Հոգին մշտապես աշխատում է յուրաքանչյուր մարդու սրտի վրա՝ նրան բերելով դեպի Քրիստոսը: Ոչ ոք չի կարող վերահսկել Նրա վերափոխող մեծ զորությունը: Մենք կարող ենք դիմադրել նրան կամ ընդունել այն: Երբ մենք բաց ենք Սուրբ Հոգու հրահանգների և հանդիմանությունների համար, Նա նոր կյանք է արարում մեր մեջ:

Հնարավո՞ր է որևէ կերպ իմանալ, թե մեր մեջ տեղի ունեցե՞լ է նոր ծնունդը: Այո՛: Հոգին գործում է աննկատ, սակայն Նրա գործողության արդյունքներն ակնառու են: Ծրջապատող մարդիկ հասկանում են, որ Հիսուսը մեր մեջ նոր սիրտ է ստեղծել: Միշտ էլ Հոգին արտաքին դրսևորումներում ցույց է տալիս այն վերափոխումները, որ Ինքը կատարում է մեր ներսում: Ինչպես ասել է Հիսուսը՝ «Իրենց պտուղներից ճանաչեցեք նրանց» (Մատթեոս 7.20):

Նոր կյանքը Քրիստոսում ինչ-որ երերուն բան չէ, որ դրսևորվում է որոշ արտաքին փոփոխություններում: Դա նախկին կյանքի ձևափոխումը կամ բարելավումը չէ. դա լիակատար կերպարանափոխություն է:

Բերված համարներն ի՞նչ են հաղորդում մեր մեջ տեղի ունեցող գործընթացների մասին՝ նոր ծննդի արդյունքում: Տիտոս 3.5-7, Բ Կորնթացիս 5.17, Գաղատացիս 6.15: _____

_____

_____

Սուրբ Հոգու միջոցով Քրիստոսը մեր մեջ նոր մտքեր, զգացմունքներ ու դրդումներ է առաջ բերում: Այն արթնացնում է մեր խիղճը, փոխում է գիտակցությունը, օգնում է ճնշել ամեն մի արատավոր ցանկություն և մեզ լցնում է երկնքի քաղցր խաղաղությամբ: Թեև փոփոխությունը արագ չի տեղի ունենում, ժամանակի ընթացքում մենք իսկապես դառնում ենք նոր արարածներ Քրիստոսի մեջ: Դա անհրաժեշտ է, քանի որ մարդը մեղավոր է, և ինքն ընդունակ չէ փոխվելու:

Խորհեցե՛ք վերջին 24 ժամվա ձեր կյանքի մասին: Ձեզ շրջապատող մարդիկ տեսե՞լ են Քրիստոսին ձեր խոսքերում, հայացքներում, գործողություններում: Աղոթե՛ք ձեր բնավորության այն գծերի փոփոխության մասին, որոնք տրտմեցնում են Քրիստոսին:

Երեքշաբթի **օգոստոսի 5**

Կենալ Քրիստոսում

Հաջողակ հոգևոր կյանքը հնարավոր է միայն այն դեպքում, եթե մենք անդադար կառչած ենք Քրիստոսին: Հիսուսն օգտագործում էր խաղողի որթի պատկերը՝ մեզ սովորացնելու համար այդ կախվածությունը: «Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը», - ասաց Հիսուսը (Հովհաննես 15.5): Հին Կտակարանում Իսրայելը պատկերվում էր որպես Աստծո տնկած խաղողի այգի (Եսայիա 5.1-7, Սաղմոս 80.8, Երեմիա 2.21): Բայց Հիսուսը Իրեն է ներկայացնում որպես ճշմարիտ Որթ (Հովհաննես 15.1) և Իր հետևորդներին կոչ է անում միասնական լինել Իր հետ, ինչպես ճյուղերը միասնական են որթի հետ:

Բերված աստվածաշնչյան հատվածը ի՞նչ է հայտնում մեզ Քրիստոսում մշտապես կենալու մասին: Հովհաննես 15.4-10: _____

_____

Որթից նոր կտրված ճյուղը կարող է ինչ-որ ժամանակ կենդանի թվալ, սակայն այն անպայման կչորանա և կմահանա, քանի որ կտրվել է կյանքի աղբյուրից: Նմանապես էլ մենք կյանք ենք ստանում միայն Քրիստոսի հետ կապի շնորհիվ: Բայց արգասավոր լինելու համար հարկավոր է պահպանել այդ կապը: Աստծո հետ առավոտյան շփումը կարևոր է, բայց այն պետք է շարունակվի ողջ օրվա ընթացքում: Քրիստոսում կենալը նշանակում է անդադար ձգտում դեպի Նա, խնդրանքներ Նրա առաջնորդության մասին, աղոթք Նրա զորության մասին՝ Նրա կամքին հնազանդվելու համար, և աղերսանքներ՝ Նրա սիրով լցվելու մասին:

Տիրոջից անկախ քրիստոնեական կյանքով ապրելու փորձը ամենանենգ ծուղակներից մեկն է: «Առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.5): Առանց Նրա մենք չենք կարող դիմակայել ոչ մի գայթակղության, չենք կարող հաղթահարել ոչ մի մեղք կամ մեր մեջ քրիստոսանման բնավորություն զարգացնել: Նոր հոգևոր կյանքը կարող է զարգանալ միայն Քրիստոսի հետ անընդմեջ շփման արդյունքում:

Կարդալով Աստծո խոսքը և խորհելով դրա մասին՝ մենք սնվում և ամրանում ենք: «Այն բանը, որ Ես ձեզ հետ խոսեցի, հոգի է և կյանք», - ասաց Հիսուսը (Հովհաննես 6.64): Պահպանվելով սրտում և մտքում՝ այդ խոսքերը կոգեշնչեն մեր աղոթքները, որպեսզի մենք կարողանանք կապ պահպանել Տիրոջ հետ: Թեև շատ հեշտ է շեղվել «աշխարհիս հոգսերով» (Մարկոս 4.19), մենք պետք է նպատակամղված ջանքեր թափենք՝ Հիսուսում կենալու համար:

Ի՞նչն է ամենից ավելի խանգարում ձեզ՝ մշտապես Քրիստոսի մեջ մնալու համար: Ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել, որպեսզի վերացնեք այդ խոչընդոտները կամ էլ հաղթահարեք դրանք:

Չորեքշաբթի **օգոստոսի 6**

Աղոթք

Քրիստոսի մեջ մնալու և հոգևորապես աճելու համար Աստվածաշնչին զուգահեռ անհրաժեշտ է նաև աղոթքը: Անգամ Ինքը՝ Հիսուսն, աղոթքի կարիք ուներ՝ Հոր հետ կապը պահպանելու համար: Փրկիչը մեզ աղոթքի կյանքի օրինակ է թողել: Աղոթքով են աչքի ընկնում Նրա կյանքի բոլոր ճգնաժամային պահերը: Նա աղոթում էր, երբ մկրտություն ընդունեց, հաճախ աղոթում էր անմարդաբնակ վայրերում՝ նախ-

քան առավոտյան արշալույսը, կամ էլ լեռան լանջին՝ մայրամուտից հետո: Հաճախ Հիսուսը աղոթքի մեջ էր անցկացնում ողջ գիշերը, օրինակ՝ տասներկու առաքյալների ընտրությունից առաջ: Նա աղոթում էր Ղազարոսի հարությունից առաջ: Անգամ խաչը չէր կարող խանգարել Նրան՝ աղոթել:

Բայց ինչո՞ւ մենք պետք է աղոթքով Աստծուն ներկայացնենք մեր կարիքները, եթե «Հայրը գիտի, թե ինչեր են պետք մեզ» (Մատթեոս 6.8): Որովհետև աղոթքի միջոցով մենք սովորում ենք ապավինել ոչ թե ինքներս մեզ, այլ Աստծուն և զգում ենք մեր կախվածությունը Նրանից:

«Խնդրեցե՛ք, և կտրվի ձեզ, որոնեցե՛ք, և կգտնեք, դուռը թակեցե՛ք, և կբացվի ձեզ» (Մատթեոս 7.7): Թեև անհրաժեշտություն չկա անվերջ աղոթքներով տպավորություն գործելու Նրա վրա, որոնք բաղկացած են զուր կրկնություններից (Մատթեոս 6.5-8), մենք պետք է հաստատուն լինենք աղոթքի մեջ՝ ցանկացած պարագայում ապավինելով Նրա խոստումներին (Հովհաննես 15.7, 16.24):

Տերունական աղոթքի տարբեր հատվածներն ինչպե՞ս կարող են նպաստել մեր աճին՝ Քրիստոսի մեջ: Մատթեոս 6.9-13: _____

_____

_____

_____

_____

Հիսուսը մեր Միջնորդն է երկնքում: Այդ պատճառով Նա մեզ սովորեցրեց մեր աղոթքներն ուղղել Հորը՝ հանուն Հիսուս Քրիստոսի: «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. թե ինչ որ Հորից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ» (Հովհաննես 16.23): Քրիստոսը սովորեցնում էր, որ այդ զարմանահրաշ խոստման կատարման համար անհրաժեշտ է որոշակի պայմաններ կատարել: Մեզ հարկավոր է հավատալ, որ Աստված կարող է մեզ պատասխանել (Մատթեոս 21.22): Եվ ամենագլխավորը՝ մեր կամքը միշտ պետք է ենթարկեցնենք Հոր կամքին (Մատթեոս 6.10, Ղուկաս 22.42): Պատասխանի ցանկացած «հետաձգում» չպետք է հիասթափեցնի մեզ, ընդհակառակը, մենք պետք է մշտապես աղոթենք և չընկճվենք (Ղուկաս 18.1):

«Տե՛ր, սովորեցրու մեզ աղոթք անել» (Ղուկաս 11.1). այս խնդրանքը միշտ արդիական է՝ անկախ այն բանից, թե որքան վաղուց ենք մենք Քրիստոսին ընդունել որպես մեր Փրկիչ: Ձեր աղոթքի կյանքի ո՞ր բաղադրիչն ունի աճի և Աստծո շնորհին դիպչելու կարիք:

Հինգշաբթի **օգոստոսի 7**

Ամենօրյա մահ սեփական «ես»-ի համար

Հակասություն է, բայց միայն մահանալով (փոխաբերական իմաստով) մենք կարող ենք ապրել իսկապես: Մկրտությունը հին, մեղավոր էության մահն է և հարությունը նոր կյանքի համար: Հիանալի կլիներ, եթե հին մեղքի մարդն ընդմիշտ մահանար մկրտության ջրի մեջ ընկղմվելու ժամանակ: Սակայն վաղ թե ուշ մենք ամենքս հայտնաբերում ենք, որ մեր անցյալ սովորությունները և հակումները դեռևս կենդանի են և ջանադրաբար փորձում են իշխել մեզ: Մկրտությունից հետո անհրաժեշտ է կրկին ու կրկին սպանել մեր հին էությունը: Այդ պատճառով քրիստոնեական կյանքը Հիսուսը համեմատում էր խաչի հետ:

Ի՞նչ է նշանակում խաչը, որի մասին խոսվում է Ղուկաս 9.23,24 համարներում: _____

_____

_____

Շատերը համարում են, որ խաչը, որն իրենք պետք է տանեն, լուրջ հիվանդություն է, անբարենպաստ կենցաղային հանգամանքներ կամ էլ մշտական անաշխատունակություն: Թեև այս ամենն իսկապես շատ ծանր է, և երբեմն «խաչ» բառը կարող է և այդպիսի նշանակություն ունենալ, սակայն Հիսուսի խոսքերն առավել խորը նշանակություն ունեն: Վերցնել խաչը՝ նշանակում է ամեն օր ուրանալ սեփական անձը: Ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ ամեն օր, ոչ թե մեր մեջ եղած ինչոր բանից, այլ մեր ողջ անձից:

Քրիստոնեական կյանքը խաչի նման կյանք է: «Ես Քրիստոսի հետ խաչված եմ, և կենդանի եմ այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղատացիս 2.19,20): Հին աշխարհում խաչի զոհերը մահանում էին ո՛չ միանգամից: Սովորաբար նրանք տառապում էին երկար ժամեր, իսկ երբեմն էլ մի քանի օր՝ խաչից կախված մնալով: Թեև մեր հին էությունը խաչված է, ջանում է կենդանի մնալ՝ ազատվելով խաչից:

Հեշտ չէ ինքդ քեզ մերժելը: Մեղսավոր էությունը չի նահանջում, հին մարդը չի ցանկանում մահանալ: Բացի դրանից, մենք չենք կարող մեզ գամել խաչին: «Ոչ ոք չի կարող ազատվել իր «ես»-ից: Մենք լոկ կարող ենք թույլ տալ Քրիստոսին՝ կատարելու այդ աշխատանքը: Ձեր հոգին պետք է բացականչի. «Տե՛ր, վերցրո՛ւ իմ սիրտը, քանի որ ես ինքս ի

վիճակի չեմ այն Քեզ տալու: Այն իրավամբ Քեզ է պատկանում: Մաքրի՛ր այն, որովհետև ես ինքս չեմ կարող այն մաքուր պահել Քեզ համար: Փրկի՛ր ինձ՝ իմ թույլ, Քո պատկերը կորցրած «ես»-ի ձգտումներին հակառակ: Վերստեղծի՛ր և նորոգի՛ր ինձ, բարձրացրո՛ւ ինձ մինչև երկնային մաքուր ու սուրբ բարձունքները, որտեղ Քո սիրո շռայլ հոսանքը կարող է լվանալ իմ հոգին»:

Նման ինքնուրացումը պետք է կատարվի ոչ միայն մեր քրիստոնեական կյանքի սկզբում: Մենք պետք է նորոգվենք դեպի երկինք տանող յուրաքանչյուր նոր քայլի հետ միասին... Լոկ մշտական ինքնուրացության և Քրիստոսից կախվածության շնորհիվ մենք կարող ենք ապրել անվտանգ» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 159): Անհրաժեշտ է ամեն օր սեփական անձը նվիրել Տիրոջը:

Վերջին անգամ ե՞րբ եք մահացել սեփական «ես»-ի համար: Ի՞նչ է բացահայտում ձեր պատասխանը, հատկապես՝ այսօր ուսումնասիրվող համարների համատեքստում:

Ուրբաթ **օգոստոսի 8**

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Քայլեր դեպի Քրիստոս» գրքից կարդացե՛ք «Նվիրաբերում» գլուխը (43-48), «Դարերի փափագը» գրքից՝ «Նիկոդեմոսը» գլուխը (167-177):

«Սեփական «ես»-ի դեմ պայքարն ամենամեծ մարտն է, որ մարդիկ երբևէ ստիպված են լինում մղել: Սեփական «ես»-ը խոնարհեցնելու, Աստծո կամքին լիովին ենթարկվելու համար հարկավոր է ջանքեր ներդնել: Առանց Աստծուն նվիրաբերվելու՝ մարդու համար անմատչելի է սրբության մեջ նոր կյանքը» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 43):

«Մենք չենք կարող կառչել մեր սեփական «ես»-ին և միևնույն ժամանակ լցվել Աստծո լիությամբ: Մենք պետք է ազատվենք եսասիրությունից: Եթե հասնենք էլ երկնքին, դա տեղի կունենա միայն սեփական «ես»-ից հրաժարվելու և Քրիստոս Հիսուսի միտքն ու կամքն ընդունելու միջոցով» (Է. Ուայթ, Երկնային բնակարաններում, 155):

«Երբ Աստծո Հոգին տիրում է սրտին, Նա վերափոխում է կյանքը: Անհետանում են մեղսավոր շարժառիթները, մարդը դադարում է չար արարքներ գործել, և այնտեղ, որտեղ իշխում էին բարկացկոտությունը, նախանձն ու խռովությունները, կթագավորեն սերը, խոնարհու-

թյունն ու խաղաղությունը: Տրտմությունը փոխարինվում է ուրախությամբ, մարդու դեմքը պայծառանում է՝ արտացոլելով երկնքի լույսը... Օրհնությունները տրվում են այն մարդուն, ում հոգին հավատով հնազանդվում է Աստծուն: Եվ այդ ժամանակ մարդկային աչքի համար աներևույթ զորությունը նոր էակ է արարում Աստծո պատկերով» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 173):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպիսի՞ն է Քրիստոսի մեջ մնալու ձեր անձնական փորձառությունը: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դուք միավորվում եք Հիսուսի հետ: Ի՞նչ է տեղի ունենում հակառակ դեպքում:
2. Ո՞վ չի տառապել այն աղոթքների պատճառով, որոնք իբրև թե մնացել են առանց պատասխանի: Ինչպե՞ս է հաջողվում Ձեզ՝ պահպանել Աստծո և Նրա խոստումների հանդեպ հավատը, երբ ձեր խնդրանքների համար ցանկալի պատասխան չեք ստանում: Այդպիսի իրավիճակներում ինչի՞ մասին պետք է միշտ հիշենք, որ չափազանց կարևոր է:
3. Ի՞նչը պետք է ամեն օր ուրանանք մեր մեջ, մեր բուն էության մեջ: Խորհեցե՛ք. եթե դուք չեք ուրացել ինքներդ ձեզ՝ թույլ տալով եսասիրությանը կառավարել ձեր մտքերը և արարքները, ինչպիսին էլ որ լինի ձեր կյանքը: Ի՞նչ է ասում Ձեր պատասխանը ձեր մասին, դուք ինչպիսի՞ն կլինեիք առանց Քրիստոսի:

ԴԱՍ 7 ԱՊՐԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՄԱՆ

ՕԳՈՍՏՈՍԻ 9-15

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 9.36, Մարկոս 10.21, Ղուկաս 10.30-37, Մատթեոս 25.31-46, Ղուկաս 6.32-35, Հովհաննես 15.4-12:

Հիշելու համարը.

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք, ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհաննես 13.34):

Երձավորի հանդեպ սիրո պատվիրանը տրվել է Նոր Կտակարանից շատ ավելի առաջ: Հին Կտակարանում Աստված արդեն պատվիրել էր Իր ժողովրդին. «Քո ընկերին սիրես քո անձի պես» (Ղևտացոց 19.18) և «նրան [օտարականին] սիրես քո անձի պես» (Ղևտացոց 19.34):

Իսկ ինչո՞ւ Հիսուսն ասաց. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ»: Հիսուսի տված պատվիրանի նորությունը դրա նոր չափման մեջ է՝ «Ինչպես Ես սիրեցի ձեզ»: Քրիստոսի մարմնացումից առաջ մարդկանց դեռ բացահայտված չէր Աստծո սիրո ողջ լիությունը: Իսկ այժմ Իր անշահախնդիր կյանքի և մահվան մեջ Հիսուսը հայտնեց սիրո իսկական, խորագույն իմաստը:

«Սերն այն տարերքն էր, որով Քրիստոսը գործում էր, քայլում և աշխատում: Նա եկավ, որ աշխարհն առնի Իր սիրո թևերի մեջ... Մենք պետք է հետևենք Քրիստոսի թողած օրինակին, Նրան դարձնենք մեր օրինակը, մինչև որ մենք չունենանք շրջապատողների հանդեպ նույնպիսի սեր, ինչպիսին Նա է դրսևորել մեր հանդեպ» (Է. Ուայթ, Մեր Հոր հոգատարությունը, 27):

Շաբաթվա ընթացքում մենք կմտորենք մարդկանց հանդեպ Հիսուսի քնքուշ, կարեկցանքով ու ուշադրությամբ լի, սրտացավ կյանքի մասին: Ուրեմն թող Նա դիպչի մեր սրտերին, և դրանք լցվեն եռանդուն սիրո Նրա աստվածային սկզբունքով, որ ճշմարիտ քրիստոնեության դրոշն է:

Միաշաբթի **օգոստոսի 10**

Ինչպես ապրում էր Հիսուսը

Թեև Հիսուսը մշտապես Իր վրա զգում էր սատանայի կատաղի հարձակումները, Նրա անշահախնդիր սիրտը լի էր սիրով ու ծառայությամբ: Առաջին հերթին Նրա ուշադրությունը կենտրոնացած էր շրջապատող մարդկանց, ոչ թե Իր վրա: Մանկությունից մինչև խաչ Նա շրջապատողներին ծառայելու անխոնջ ցանկություն էր դրսևորում: Հիսուսը միշտ պատրաստ էր ձեռք մեկնել՝ թեթևացնելու Իր արարածների ցանկացած տառապանք: Նա սիրով հոգ էր տանում այն մարդկանց մասին, ովքեր այդ հասարակության մեջ մեծ արժեք չունեին, այնպիսիք, ինչպիսին երեխաները, կանայք, օտարականները, բորոտները, մաքսավորներն էին: «Ինչպես Մարդի Որդին *նրա համար* չեկավ, որ Իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայի» (Մատթեոս 20.28): Այդ պատճառով «Նա ման եկավ բարիք գործելով և բոլոր դիվահարներին բժշկելով» (Գործք առաքելոց 10.38): Նա կարեկցում էր և անկեղծորեն շահագրգռված էր շրջապատողների բարեկեցությամբ, և դա Նրա համար ավելի կարևոր էր, քան սննդի ու տանիքի՝ Իր սեփական ֆիզիկական կարիքների բավարարումը: Անգամ խաչի վրա Փրկչին ավելի շատ անհանգստացնում էր Իր մոր բարեկեցությունը, քան իր սեփական տառապանքները (Հովհաննես 19.25-27):

Բերված համարներն ի՞նչ են հայտնում այն մասին, թե ինչպես էր Հիսուսը վերաբերվում մարդկանց: Մատթեոս 9.36, 14.14, 15.32: _____

_____

_____

Հիսուսը նրբազգաց էր մարդկանց կարիքների հանդեպ և իսկապես հոգ էր տանում նրանց մասին: Նրա սիրտը լի էր կարեկցանքով հոգնած ու ցրված մարդկանց մեծ բազմության հանդեպ: Նա կարեկցանքով էր լցվում՝ հանդիպելով այնպիսի անօգնական մարդկանց, ինչպիսին Երիքովի մոտ հանդիպած երկու կույրերը (Մատթեոս 20.34), օգնություն աղերսող բորոտը (Մարկոս 1.40,41) և միակ որդուն կորցրած այրին էին (Ղուկաս 7.12,13):

Ի՞նչ սկզբունքով էր ղեկավարվում Հիսուսը՝ շփվելով տարբեր մարդկանց հետ: Մարկոս 10.21, Հովհաննես 11.5:

_____

_____

Գթասրտության յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր հըրաշք, Հիսուսի ամեն բառ դրդված էին Նրա անեզր, աներեր ու հավիտենական սիրուց: Իր կյանքի ավարտին Նա համոզիչ կերպով հայտարարեց աշակերտներին, որ, ի սկզբանե սիրելով նրանց, «մինչև վերջ սիրեց նրանց» (Հովհաննես 13.1): Խաչի վրա Իր մահով Փրկիչը ցույց տվեց, որ անշահախնդիր սերը ամենահաղթ ուժ է: Գողգոթայի լույսի ներքո հստակորեն երևում է, որ ինքնուրաց սիրո սկզբունքը երկրի վրա և երկնքում կյանքի միակ հուսալի հիմքն է:

«Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, քան եթե մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13): Դուք ինչպե՞ս եք հասկանում այդ բառերի նշանակությունը առօրյա գործնական կյանքում: Ինչպե՞ս կարելի է օրեցօր այդպիսի սեր դրսևորել:

Երկուշաբթի **օգոստոսի 11**

Սիրել մերձավորին

Ապրել Հիսուսի նման, նշանակում է դրսևորել նույնպիսի սեր, ինչպիսին դրսևորում էր Նա: Այդ սերը Տերը նկարագրեց բարի սամարացու մասին առակում (Ղուկաս 10.30-37), որ պատմել էր մի օրինապաշտի: Օրինապաշտը հանրագումարի բերեց Աստծո և մերձավորի հանդեպ մեր պարտքը. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր անձով, քո բոլոր զորությունով և քո բոլոր մտքով, և քո ընկերին՝ քո անձի պես» (Ղուկաս 10.27): Օրինամոլը լավ գիտեր Սուրբ Գիրքը (Նա անգիր մեջբերեց Երկրորդ Օրինաց 6.5 և Ղևտացոց 19.18-ը), բայց, հավանաբար, մեղքի զգացում ուներ այն պատճառով, որ սեր չէր զգում մերձավորի հանդեպ: Ջանալով արդարացնել իրեն՝ նա հարցրեց Հիսուսին. «Եվ իմ ընկերն ո՞վ է» (Ղուկաս 10.29):

Ինչպե՞ս բացատրեց Հիսուսը, թե ով է մերձավորը: Բարի սամարացու առակն ի՞նչ նշանակություն ունի մեզ համար: Տե՛ս Ղուկաս 10.30-37: Այն պատվիրանը, որ պետք է մերձավորին սիրենք, ինչպես ինքներս մեզ, ինչպե՞ս է կապված ոսկե կանոնի հետ: Մատթեոս 7.12: _____

_____

_____

Պատասխանելով «Ո՞վ է իմ մերձավորը» հարցին՝ Հիսուսը ցույց տվեց, որ մերձավորը կարող է լինել ցանկացած մարդ, ով մեր օգ-

նության կարիքն ունի: Այդ պատճառով հարցնելու փոխարեն՝ «Իմ մերձավորը ի՞նչ կարող է անել ինձ համար», մենք պետք է հարցնենք. «Ես ի՞նչ կարող եմ անել իմ մերձավորի համար»:

Հիսուսը այդ կանոնի՝ այն ժամանակվա համար բնորոշ մեկնաբանությունից՝ «Ուրիշներին մի՛ արա այն, ինչ քեզ դուր չի գալիս», շատ ավելի հեռուն գնաց: Հաստատելով կանոնը՝ Նա ներկայացրեց ոչ միայն այն, թե ինչից պետք է խուսափենք, այլև այն, թե ինչ պետք է անենք: Մեզ համար կարևոր է հիշել. այս սկզբունքը չի ասում, որ մենք պետք է շրջապատողներին վերաբերվենք այնպես, ինչպես նրանք վերաբերվում են մեզ: Ի վերջո, հեշտ է բարի լինել նրանց հանդեպ, ովքեր բարիք են գործում մեր հանդեպ, կամ անբարյացակամ լինել մեզ վատ վերաբերվողների հանդեպ, ինչը հատուկ է մեծամասնությանը: Սակայն մերձավորի հանդեպ մեր սերը երբեք չպետք է կախված լինի մեր հանդեպ նրա վերաբերմունքից:

Խորհեցե՛ք այն մարդու մասին, ով վատ է վերաբերվում ձեզ: Ինչպե՞ս եք արձագանքում դրան: Հիշե՛ք, թե ինչպես էր Հիսուսը վերաբերվում Իր հետ դաժան վերաբերվողներին: Քրիստոսի օրինակն ինչպե՞ս է դրդում մեզ՝ ավելի լավ վերաբերվել նրանց, ովքեր բարյացակամ չեն մեր հանդեպ:

Երեքշաբթի **օգոստոսի 12**

Սիրո ծառայությունը

Ո՞րն է Մատթեոս 25.31-46-ում բովանդակվող հիմնական լուրը: _____

_____

Վերջին օրը շատ անակնկալներ կլինեն: Մարդի Որդու աջ կողմում կանգնածները երբեք չէին պատկերացնում, որ նրանց անշահախնդիր սիրո դրսևորումը վճռորոշ նշանակություն կունենա: Քրիստոսը գնահատում է ոչ միայն արտասանված պերճախոս քարոզները, բարեխղճորեն կատարված մեծածավալ աշխատանքը, շռայլ դրամական ընծաները: Նա ուրախությամբ երկինք կհրավիրի անգամ նրանց, ովքեր չնչին հոգատարություն են ցուցաբերել Նրա փոքրագույն եղբայրների հանդեպ:

Զախ կողմում կանգնածները նույնպես կապշեն Թագավորի կայացրած վճռի պատճառից: «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունով մարգարեացանք, և քո անունով դևեր հանեցինք, և քո անունով շատ զո-

րություններ գործեցինք» (Մատթեոս 7.22): Թեև դրանք բարի գործեր էին, բայց, զուրկ լինելով սիրուց, դրանք զրկվեցին նաև իրենց արժեքից: Այդ մարդիկ բացահայտորեն հայտարարում էին, թե ծառայում են Քրիստոսին, բայց Տերը նրանց Իրենը չի ճանաչի (Մատթեոս 7.23), քանի որ նրանք երբեք իսկապես չեն սիրել Իրեն ու Իր եղբայրներին: Նրանք չէին կիրառում ճշմարիտ կրոնի սկզբունքները (Հակոբոս 1.27):

Մեկնիչները տարբեր մեկնաբանություններ են առաջարկում այն մասին, թե ովքեր են «փոքր եղբայրները» (Մատթեոս 25.40): Կարևոր է սահմանել, թե ովքեր են նրանք՝ իմանալու համար մեր քրիստոնեական պատասխանատվության աստիճանը: Որոշ մեկնիչներ պնդում են, որ Հիսուսի փոքր եղբայրները առաքյալներն են և մյուս քրիստոնեական ավետարանիչները: Նրանք իրենց տեսակետը հիմնավորում են Մատթեոս 10.40-42-ով և համարում են, որ ողջ մարդկության ճակատագիրը կախված է այն բանից, թե մարդիկ ինչպես են վերաբերվել քրիստոնեական ավետարանիչներին: Այլ հետազոտողներ, հիմնվելով Մատթեոս 12.48-50-ի վրա, համարում են, թե Հիսուսի փոքր եղբայրները, ընդհանուր առմամբ, Նրա բոլոր հետևորդներն են: Անկասկած, Հիսուսի բոլոր հետևորդները Նրա եղբայրներն են, բայց Հիսուսի խոսքերի մասշտաբն է՛լ ավելի լայն է: Քրիստոսն «Իրեն նույնականացնում է յուրաքանչյուր մարդու հետ... Նա Մարդի Որդին է, այդ պատճառով Նա Ադամի յուրաքանչյուր որդու և յուրաքանչյուր դստեր եղբայրն է» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 638):

Խորհեցե՛ք այն պահի մասին, երբ դուք հուսահատորեն օգնության կարիք ունեիք, և ինչ-որ մեկն օգնեց ձեզ: Ձեր տառապանքների ու ցավի մեջ Ձեզ համար ի՞նչ էր նշանակում այդ օգնությունը: Տվյալ փորձն ինչպե՞ս է օգնում հասկանալու մեր անկեղծ ու համակողմանի օգնության կարևորությունը՝ շրջապատողների կարիքների հարցում:

Չորեքշաբթի **օգոստոսի 13**

Սիրել թշնամիներին

Ճշմարիտ քրիստոնեության բարձրագույն հաստատումը թշնամիների հանդեպ սերն է: Հիսուսը այդ բարձր ստանդարտը սահմանեց՝ ի տարբերություն այն ժամանակվա գերակշռող գաղափարի: «Քո ընկերին սիրես քո անձի պես» (Ղևտացոց 19.18) պատվիրանին շատերը ավելացրել էին շարունակություն, որ Տերը երբեք չի ասել և չի

ծրագրել. «և ատիր թշնամուդ»: Իհարկե՛, այդ շարունակությունը ոչ մի կերպ կապված չէ աստվածաշնչյան համարի հետ:

Համաձայն Քրիստոսի ուսմունքի՝ ինչպե՞ս է գործնականում դրսևորվում թշնամիների հանդեպ սերը: Ղուկաս 6.27,28: _____

_____

_____

Թշնամին կարող է մեր հանդեպ թշնամանք դրսևորել երեք ուղղություններով՝ ատելության միջոցով («ձեզ ատողներին»), վատ խոսքերով («ձեզ անիծողներին») և վիրավորական գործողությունների միջոցով («ձեզ նեղացնողներին») (Մատթեոս 5.44): Քրիստոսը սովորեցնում է, որ թշնամանքի այս եռակի արտահայտությանը հարկավոր է պատասխանել սիրո եռակի դրսևորմամբ՝ նրանց բարիք անելով («բարի արեք» նրանց), նրանց բարին ասելով («օրհնեցեք» նրանց) և նրանց համար բարեխոսելով Աստծո առջև («աղոթք արեք» նրանց համար): «Մի՛ հաղթվիր չարից, այլ բարիով հաղթե՛ք չարին» (Հռոմեացիս 12.21). սա քրիստոնեական պատասխանն է թշնամանքին ու ատելությանը:

Նկատե՛ք, որ նախ Հիսուսն է մեզ խնդրում սիրել մեր մերձավորներին, և հետո դրա արդյունքում այդ սերը դրսևորել բարի գործերի, խոսքերի և բարեխոսական աղոթքի մեջ: Առանց ի վերուստ ներշնչված սիրո այդ գործողությունների՝ խոսքերն ու աղոթքները ձայն հանող պղինձ կամ հնչող ծնծղա կլինեն (տե՛ս Ա Կորնթացիս 13.1):

Ի՞նչ պատճառներ բերեց Հիսուսը՝ բացատրելով, թե ինչու պետք է մենք սիրենք մեր թշնամիներին: Ղուկաս 6.32-35: _____

_____

_____

Մեզ օգնելու համար, որ հասկանանք այդ վսեմ պատվիրանը, Տերը երեք փաստարկ օգտագործեց: Նախ, մեր կյանքը պետք է կառուցվի առավել բարձր ստանդարտների հիման վրա, քան այս աշխարհի ստանդարտներն են: Անգամ մեղավորները սիրում են միմյանց, և անգամ հանցագործները օգնում են միմյանց: Եթե Քրիստոսին հետևելը չի վեհացնում մեզ, չի դրդում ապրել ավելի լավ ու սիրել ավելի ուժգին, քան աշխարհիկ մարդիկ, ապա ո՞րն է այդ հետևելու արժեքը: Երկրորդ՝ Աստված մեզ կպարգևատրի թշնամիների հանդեպ սիրո համար, ու թեև մենք սիրում ենք ո՛չ պարգևի համար, Նա շռայլորեն մեզ

պարգևում է այն: Եվ երրորդ, այդպիսի սերը ապացույց է մեր երկնային Հոր հետ մեր սերտ շփման, Ով «քաղցր է նաև երախտամոռների ու չարերի համար» (Ղուկաս 6.35):

Հինգշաբթի **օգոստոսի 14**

Ինչպե՞ս ապրել Հիսուսի նման

Հիսուսի ուսմունքը անշահախնդիր, սիրով լի կյանքի այնքան բարձր իդեալ է սահմանում, որ մեզանից շատերը, հավանաբար, ապշած ու տարակուսած են: Ինչպե՞ս կարող ենք մենք, եսասեր լինելով մեր էությամբ, անշահախնդիր սիրել մեր մերձավորին: Ավելին, մենք առհասարակ կարո՞ղ ենք սիրել մեր թշնամիներին: Մարդկային տեսակետից դա անհնար է:

Բայց Տերը երբեք չի խնդրի սիրել և ծառայել մեզ համար ատելի և տհաճ մարդկանց՝ մեզ չպարգևելով դրա համար ամեն անհրաժեշտը: «Յուրաքանչյուր պատվիրանի, Աստծո յուրաքանչյուր հրահանգի հիմքում որոշակի կենսահաստատ խոստում է ընկած: Աստված ստեղծել է բոլոր պայմանները, որ մենք կարողանանք նմանվել Իրեն, և Նա կկատարելագործի բոլորին, ովքեր Նրան չեն հակադրում իրենց այլասերված կամքը և դրանով իսկ չեն մերժում Նրա շնորհը» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 76):

Ի՞նչ խոստում կա թշնամիների հանդեպ սիրո պատվիրանի հիմքում: Այն հավաստիացում է, որ Աստված բարի ու ողորմած է անշնորհակալների ու չարերի հանդեպ (Ղուկաս 6.35,36), ինչպես նաև մեր: Մենք կարող ենք սիրել մեր թշնամիներին, որովհետև նախ Աստված է սիրել մեզ, թեև մենք Նրա թշնամիներն էինք (Հռոմեացիս 5.10): Երբ մենք ամեն օր հաստատում ենք, որ ընդունում ենք Նրա՝ սիրով առլեցուն զոհը, որ հանուն մեզ բերվեց խաչի վրա, Նրա զոհաբերական, անշահախնդիր սերը լցնում է մեր կյանքը: Որքան շատ գիտակցենք և զգանք Տիրոջ սերը մեր հանդեպ, այնքան ավելի շատ մեր միջոցով այն կհեղվի ուրիշների, անգամ մեր թշնամիների վրա:

Ինչպե՞ս է Քրիստոսի մեջ, Նրա սիրո մեջ մնալը կապված մերձավորի հանդեպ սիրո հետ: Հովհաննես 15.4-12:

Մենք ամեն օր կարիք ունենք ո՛չ միայն Քրիստոսի մահն ընդունելու, որ տեղի ունեցավ հանուն մեզ, այլև մեր կամքը Նրան ենթարկելու և

Նրանում կենալու: Մենք պետք է կախված լինենք Հիսուսից և Նրա կամքից, ինչպես վարվում էր Հիսուսն Ինքը. չէր որոնում Իր կամքը, այլ Հոր կամքը (Հովհաննես 5.30): Չէ՞ որ առանց Նրա մենք ոչինչ չենք կարող անել:

Երբ մենք ամեն օր մեզ Հիսուսին ենթարկելու որոշում ենք ընդունում, Նա ապրում է մեր մեջ և մեր միջոցով: Այդ ժամանակ «արդեն ոչ թե ես եմ կենդանի, այլ Քրիստոսն է կենդանի իմ մեջ» (Գաղատացիս 2.20) և Նա իմ եսակենտրոն կողմնորոշումները փոխարինում է ինքնուրաց, սիրով լի կյանքով:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հովհաննես 15.4-12-ը: Ի՞նչ ուրախության մասին է այստեղ խոսում Հիսուսը: Մենք ինչպե՞ս կարող ենք մեր կյանքում զգալ այն ուրախությունը, որ գալիս է Նրան ծառայելու արդյունքում, անգամ եթե առանձնապես գոհ չենք մեզ շրջապատող հանգամանքներից:

Ուրբաթ օգոստոսի 15

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Բարի սամարացին» (497-505) և «Իմ այս փոքր եղբայրներից մեկին» (637-641) գլուխները:

«Մեր շուրջը խեղճ, հոգնած հոգիներ են, ովքեր կարիք ունեն կարեկից խոսքի և գործով աջակցության: Այրիներ, ովքեր ուշադրության և օգնության կարիք ունեն, որբեր, ում մասին հոգատարությունը Քրիստոսը վստահել է Իր հետևորդներին... Նրանք Աստծո մեծ ընտանիքի անդամներ են, և քրիստոնյաները, լինելով Նրա կառավարիչները, պատասխանատու են նրանց համար: «Նրա արյունը, - ասում է Նա, - քեզանից եմ պահանջելու»» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 386, 387):

«Ոչ թե մեր արած աշխատանքի մեծությունը, այլ սերն ու հավատարմությունը, որով այն կատարում ենք, արժանի են Փրկչի հավանությանը» (Է. Ուայթ, Երկնային բնակարաններում, 325):

Հարցեր քննարկման համար

1. Առաջին հայացքից թվում է, թե գառների ու այծերի մասին առակը գործերով փրկություն է սովորեցնում, այսինքն՝ ինչքան ավե-

լի շատ բարի գործեր ենք մենք անում, այնքան ավելի շատ հնարավորություն ունենք հայտնվելու Աստծո արքայությունում: Բայց փրկվածների զարմանքը վկայում է այն մասին, որ նրանք սեր են դրսևորել ո՛չ ինչ-որ բանի արժանանալու նպատակով: Հիսուսը հստակ կերպով սովորեցնում էր, որ հավիտենական կյանքը Նրա հանդեպ հավատի արդյունքն է (Հովհաննես 3.15, 6.40,47, 11.25,26): Սիրո ճշմարիտ գործերը բխում են Աստծո հանդեպ հավատից ու սիրուց (Գաղատացիս 5.6): Այդպիսի գործերը փրկության վկայությունն են, ոչ թե դրա պատճառը: Ինչպե՞ս կարող ենք մենք ջանալ սիրո գործեր գործել և միևնույն ժամանակ խուսափել այն սխալ պատկերացումից, թե մենք այդ ամենն անում ենք երկնքում լինելու իրավունք վաստակելու նպատակով: Ինչո՞ւ է անհրաժեշտ տեսնել տարբերությունը փրկության պտղի և դրան հասնելու միջոցի միջև:

2. Մի բան է սիրել «թշնամիներին», երբ նրանք սոսկ վրդովմունք պատճառող, անընկերասեր մարդիկ են, ասենք՝ տհաճ աշխատակիցներ, անտաշ ծանոթներ կամ անշնորհակալ հարևաններ: Դա բավականին բարդ է: Բայց ի՞նչ կարելի է ասել իսկական թշնամիների՝ այն մարդկանց մասին, ովքեր վնաս են պատճառում կամ էլ մտադիր են վնաս պատճառել ձեզ կամ ձեր բարեկամներին: Մենք ինչպե՞ս կարող ենք սիրել նրանց: Որևէ թեթևացում կա՞ այն բանի մեջ, որ մեզ հրամայված չէ նրանց սիրել այնպես, ինչպես մեզ:
3. Մարդիկ կարող են բանավիճել մեզ հետ աստվածաբանական թեմաներով, մեր ուսմունքների, կենսակերպի և այլ հարցերի մասին: Բայց ի՞նչ կարելի է ասել անշահախնդիր, ոչ եսամոլ սիրո մասին: Անշահախնդիր սերը դրսևորում է զորություն, որը գերազանցում է ռացիոնալ կամ տրամաբանական փաստարկները: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել դրսևորել այդպիսի սեր, ինչ էլ դա մեզ արժենա:

ԴԱՍ 8

ՕԳՈՍՏՈՍԻ 16-22

ԵԿԵՂԵՑԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Երկրորդ Օրինաց 32.4, Սաղմոս 28.1, Հովհաննես 17, Հովհաննես 15.1-5, Մատթեոս 7.1-5, Մատթեոս 5.23,24, 18.15-18:

Հիշելու համարը.

«Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան Մեզ, որ ամենքը մեկ լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում. որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն, որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ» (Հովհաննես 17.20,21):

Քրիստոնեական եկեղեցու արմատները հասնում են Ադամին, Աբրահամին և Իսրայելի որդիներին: Տերը կանչեց Աբրահամին, իսկ ավելի ուշ՝ հրեաներին, որ ուխտի հարաբերությունների մեջ մտնի նրանց հետ և նրանց միջոցով օրհնի ողջ աշխարհը: Դարեր անց այդ ուխտի հարաբերությունների ժառանգորդ դարձավ եկեղեցին:

Եկեղեցին չեն հորինել առաքյալները կամ որևէ այլ մարդ: Իր ծառայության ժամանակ Քրիստոսն Ինքը հայտարարեց եկեղեցի հիմնադրելու մտադրության մասին «Ես կշինեմ Իմ եկեղեցին» (Մատթեոս 16.18): Եկեղեցին իր գոյությամբ պարտական է Հիսուս Քրիստոսին: Նա նրա Հեղինակն է:

Համաձայն Ավետարանների՝ Հիսուսը միայն երեք անգամ է հիշատակել «եկեղեցի» բառը (Մատթեոս 16.18, 18.17): Սակայն դա չի նշանակում, որ Նա չի զբաղվել տվյալ հարցով: Փաստորեն Նա շատ կարևոր հայեցակարգեր է շարադրել եկեղեցու վերաբերյալ: Մեր հետազոտությունը այս շաբաթվա ընթացքում կենտրոնացված կլինի երկու գլխավոր գաղափարների վրա՝ եկեղեցու հիմնադրումը և եկեղեցու միասնությունը:

Միաշաբթի **օգոստոսի 17**

Եկեղեցու հիմնադրումը

Հիսուսն ասաց. «Այս վեմի վրա Ես կհիմնեմ Իմ եկեղեցին» (Մատթեոս 16.18): Ո՞վ է այդ «վեմը» (հունարեն՝ պետրա - ժայռ, քարաժայռ, քարաբեկոր), որի վրա ստեղծվել է եկեղեցին: Որոշ հետազոտողներ համարում են, որ այդ քարը Պետրոսն է: Սակայն հունարեն տեքստի առավել խորը հետազոտությունը թույլ չի տա այդպիսի եզրակացություն անել: Տերը բառախաղ է արել՝ «քար» և «ժայռ» (հունարեն համապատասխանաբար «պետրոս» և «պետրա»): Մատթեոսի գրի առած հունարեն տեքստը տարբերում է *պետրոս* (քար) և *պետրա* (ժայռ) բառերը, և այս տարբերության վրա չի կարելի ուշադրություն չդարձնել:

Բոլոր հիմքերը կան՝ պնդելու, որ *պետրա* բառը վերաբերում է Քրիստոսին: Հիսուսի պնդման անմիջական համատեքստը (Մատթեոս 16.13-20) կենտրոնացած է Քրիստոսի, ոչ թե Պետրոսի առաքելության և նույնականության վրա: Բացի դրանից, Հիսուսն ավելի վաղ օգտագործել էր քարի վրա կառուցված շենքի պատկերը՝ հստակորեն որոշելով, որ քարը ցույց է տալիս Իրեն և Իր ուսմունքը (Մատթեոս 7.24,25):

Ո՞րն էր Հին Կտակարանում «ժայռ» («ամրություն») բառի խորհրդանշական իմաստը: Երկրորդ Օրինաց 32.4, Սաղմոս 28.1, 31.2,3, 62.2, Եսայիա 17.10:_____

_____

_____

Երբ Պետրոսն ու մյուս առաքյալները լսեցին, որ Հիսուսը Իր եկեղեցին կստեղծի ժայռի վրա, նրանք պետք է այդ կերպարը մտաբերեին Հին Կտակարանից, մասնավորապես, որ դա Աստծո խորհրդանիշն է:

Պետրոսն ինքը պնդում էր, որ Քրիստոսն է «շինարարների կողմից անարգված քարը, որ անկյունի գլուխ եղավ» (Գործք առաքելոց 4.11): Իր ուղերձում նա նաև «քար» բառը օգտագործում է Քրիստոսի՝ որպես եկեղեցու հիմքի վերաբերյալ (Ա Պետրոս 2.4-8, այստեղ արդեն մեկ այլ բառ է՝ ոչ թե *պետրոս*, այլ *լիտոս*): Քրիստոնյաներին համեմատելով «կենդանի քարերի» հետ՝ Պետրոսը «ժայռ» (պետրա) բառն օգտագործում էր միայն Քրիստոսի վերաբերյալ: Աստվածաշնչում, բացի Հիսուսից, ոչ մի մարդու չեն անվանել *պետրա* բառով:

Պողոս առաքյալը, խոսելով Քրիստոսի մասին, նույնպես օգտագործում էր *պետրա* բառը (Հռոմեացիս 9.33, Ա Կորնթացիս 10.4) և վճռականորեն հայտարարում էր, որ «ոչ ոք չի կարող այլ հիմք դնել,

քան այն, որ դրված է, որ է Հիսուս Քրիստոսը» (Ա Կորնթացիս 3.11): Այդ պատճառով մենք գալիս ենք եզրակացության, որ առաքելական եկեղեցին միաբան հասկանում էր՝ Հիսուս Քրիստոսն Ինքն է հիմնաքարը՝ *պետրա* (ժայռ), որի վրա ստեղծված է եկեղեցին, իսկ բոլոր մարգարեներն ու առաքյալները, ներառյալ Պետրոսը, եկեղեցու հոգևոր կառույցի մեջ կենդանի քարերի առաջին «շերտն» են:

Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ եկեղեցին, որ երբեմն կարող է անուժ թվալ, հիմնված է Իր՝ Քրիստոսի վրա:

Երկուշաբթի **օգոստոսի 18**

Քրիստոսի աղոթքը միաբանության մասին

Դա հինգշաբթի գիշերն էր: Խորհրդավոր ընթրիքից հետո Հիսուսը և աշակերտներն ուղղվեցին դեպի Ձիթենյաց սարը: Գեթսեմանի ճանապարհին Հիսուսը կանգ առավ և աղոթեց Իր, Իր աշակերտների և բոլոր նրանց համար, ովքեր հետագայում կհավատան Նրան առաքյալների քարոզի միջոցով: Թեև առջևում Նրան սպասվում էր խաչի հոգեվարքը, Տերն ամենից շատ անհանգստանում էր ոչ թե Իր, այլ Իր հետևորդների մասին: Հովհաննես 17-ում ներկայացված է Հիսուսի ամենաերկար բարեխոսական աղոթքը, որ գրի է առնված Աստվածաշնչում: Հաճելի է գիտակցել, որ Նա աղոթում էր բոլոր Իրեն հավատացողների համար, նաև մեզանից յուրաքանչյուրի համար:

Կարդացե՛ք Հովհաննես 17-ը: Ո՞րն էր հավատավորների մասին Հիսուսի հիմնական խնդրանքը Հորը (առանձնահատուկ ուշադրություն դարձրեք 21-23 համարների վրա)

_____

_____

_____

Միաբանությունը ծայրահեղ կարևոր է եկեղեցու կյանքի համար: Դրա կարևորությունը մենք կարող ենք գնահատել թեկուզ հենց այդ փաստով, որ Քրիստոսը չորս անգամ կրկնել է Իր ջերմ ցանկությունը Իր հետևորդների միաբանության մասին (Հովհաննես 17.11,21-23): Այս առանձնահատուկ վերջին ժամին Տերը կարող էր խնդրել բազմաթիվ այլ նշանակալի և անհրաժեշտ հարցերի մասին: Բայց Նա Իր աղոթքը կենտրոնացրել էր միայն հավատավորների միաբանության նրա: Նա գիտեր՝ եկեղեցու համար մեծագույն վտանգ է ներկայացնելու մրցակցության և բաժանման ոգին:

Հիսուսն աղոթում էր ոչ թե միապաղաղության, այլ մարդկանց միասնականության մասին՝ նման՝ Հոր հետ Իր միաբանությանը: Հիսուսն ու Հայրը երկու աստվածային Անձնավորություններ են, ովքեր տարբերվում են միմյանցից և ունեն տարբեր գործառույթներ: Բայց Նրանք միաբան են իրենց էությամբ և նպատակներով: Նույն կերպ էլ մենք՝ տարբեր խառնվածքներով, տարբեր ծագմամբ, տարբեր ընդունակություններով և դերերով մարդիկ, պետք է միաբան լինենք Հիսուս Քրիստոսում:

Նման միաբանությունը ինքնաբերաբար չի առաջանում: Միաբանության հասնելու համար մեզ հարկավոր է մեր կյանքում կատարելապես հնազանդվել Քրիստոսի տիրապետությանը: Նա պետք է ձևավորի մեր բնավորությունը, իսկ մենք մեր կամքը ենթարկենք Նրա կամքին:

Միասնությունը ինքնանպատակ չէ: Այն ծառայում է որպես վկայություն, որն աշխարհին ոգևորում է՝ հավատալու Քրիստոսին՝ որպես Հոր կողմից ուղարկված Փրկչի: Ներդաշնակությունը և միաբանությունը զանազան մարդկանց միջև՝ այն բանի ամենազորեղ ապացույցներից մեկն է, որ Աստված Իր Որդուն ուղարկել է փրկելու մեղավորներին: Եվ մենք առավելություն ունենք տանել այդ վկայությունը:

Հաճախ միաբանությանը սպառնում է եսասիրությունը: Համայնքի միաբանությունը չի՞ ջախջախում ձեր եսասիրական հավակնությունները: Դուք ինչպե՞ս կարող եք համոզվել դրանում:

Երեքշաբթի **օգոստոսի 19**

Քրիստոսի հոգածությունը միաբանության մասին

Ի՞նչ էր ցանկանում տեսնել Հիսուսը Իր եկեղեցու միասնության հիմքում: Հովհաննես 17.23 և Հովհաննես 15.1-5:

«Դուք Ինձանում եք, և Ես՝ ձեզանում» (Հովհաննես 14.20)՝ այսպիսի սերտ փոխհարաբերություններ մենք պետք է ունենանք Հիսուսի հետ: Քրիստոսի ներկայությունը մեր սրտերում՝ միաբանություն է ծնում: Այն միաբանության համար անհրաժեշտ երկու բաղադրիչ է ներմուծում մեր կյանք՝ Աստծո խոսքը և Աստծո սերը:

Եթե Հիսուսն ապրում է մեր սրտում, նշանակում է՝ մենք ունենք

նաև Նրա Խոսքը, որը փաստորեն Հոր Խոսքն է (Հովհաննես 14.24, 17.8,14): Հիսուսն է «ճշմարտությունը (Հովհաննես 14.6), և Հոր Խոսքը նույնպես «ճշմարտություն է» (Հովհաննես 17.17): Միաբանությունը Հիսուսում՝ միասնություն է Աստծո Խոսքի շուրջ: Միաբանության հասնելու համար մեզ հարկավոր է ընդունել այն ճշմարտությունը, որ ներկայացված է Աստծո Խոսքում: Առանց աստվածաշնչյան ուսմունքին հետևելու՝ միաբանություն ձեռք բերելու ցանկացած փորձ դատապարտված է անհաջողության:

Տերը նաև ցանկանում է, որ Իր հետևորդները միավորվեն ճշմարիտ սիրով: Եթե մեր սրտում ապրում է Հիսուսը, նշանակում է՝ մենք ունենք կատարյալ սեր, որ Հայրը տածում է դեպի Որդին (Հովհաննես 17.26): Այդպիսի սերը ժամանակավոր հույզ չէ կամ անցողիկ զգացմունք, այլ գործունեության կենդանի, հավերժական սկզբունք: Ճշմարիտ սեր ունենալու համար մեզ հարկավոր է ավելի քիչ մտածել մեր մասին, ավելի շատ՝ Հիսուսի մասին: Մեր հպարտությունը պետք է մահանա, իսկ դրա տեղը պետք է զբաղեցնի Հիսուսը: Այդ ժամանակ մենք իսկապես, անկեղծորեն կսիրենք միմյանց՝ հանդես բերելով կատարյալ միաբանություն, որի մասին աղոթում էր Հիսուսը: «Երբ իրենց քրիստոնյա անվանողները իսկապես լուսավորվեն ճշմարտությամբ, երբ նրանք Քրիստոսից սովորեն Նրա գեղեցկությունն ու խոնարհությունը, այդ ժամանակ եկեղեցում կլինի լիակատար և կատարյալ միաբանություն» (Է. Ուայթ, Ժամանակի նշանները, սեպտեմբերի 19, 1900թ.):

Ճշմարտության բարձր չափանիշներին հետևելը և միևնույն ժամանակ միմյանց հանդեպ խոր սեր ունենալը միշտ չէ, որ հեշտ է: Վտանգ գոյություն ունի՝ ինչ-որ մի բան անել մյուսի հաշվին: Կար ժամանակ, երբ միաբանության գլխավոր տարրը համարվում էր դավանաբանությունը: Բարեբախտաբար, այդպիսի չհավասարակշռված դիրքորոշումն աստիճանաբար հարթվեց: Սակայն այսօր մենք ենթարկվում ենք մեկ այլ ծայրահեղության մեջ ընկնելու ռիսկին՝ մտածել, որ միաբանության համար սերն ավելի կարևոր է, քան ճշմարտությունը: Մենք պետք է հիշենք՝ սերն առանց ճշմարտության կույր է, իսկ ճշմարտությունն առանց սիրո՝ անպտուղ: Սիրտն ու բանականությունը պետք է միասին աշխատեն:

Առաքելական եկեղեցին դրսևորում էր միաբանությունը, որի մասին աղոթում էր Քրիստոսը: «Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հաց կտրելուն և աղոթքներին» (Գործք առաքելոց 2.42):

Չորեքշաբթի **օգոստոսի 20**

Լուրջ խոչընդոտ միաբանության համար

Մատթեոս 7.1-5-ում գրի առնված Հիսուսի խոսքերն ինչպե՞ս կարող են օգնել մեզ, որ եկեղեցում խուսափենք պառակտումներից և հակամարտություններից: _____

_____

_____

_____

Անհամեմատ ավելի հեշտ է տեսնել շրջապատողների թերությունները, քան մեր սեփականները: Քննադատությունը տալիս է սեփական առավելության կեղծ զգացում, քանի որ քննադատն իրեն համեմատում է շրջապատող մարդկանց հետ, ովքեր նրան իրենից ավելի վատն են թվում: Սակայն մեր նպատակն է՝ մեզ համեմատել ոչ թե շրջապատողների, այլ Հիսուսի հետ:

Որքա՜ն խնդիրներից մենք կարող էինք խուսափել, եթե ամենքը հնազանդվեին Աստծո պատվիրանին. «Քո ժողովրդի մեջ չարախոսություն մի արա» (Ղևտացոց 19.16): Դառն ու արդարացի են հնչում հետևյալ խոսքերը. «Քսուն մտերիմներին կբաժանի» (Առակաց 16.28):

Մյուս կողմից, լինում են պարագաներ, երբ անհրաժեշտ է խոսել մեկ այլ մարդու մասին: Սակայն դա անելուց առաջ մենք պետք է ինքներս մեզ երեք հարց տանք.

Ճշմարտությո՞ւն է այն, ինչ ես ուզում եմ ասել: «Քո դրացու դեմ սուտ վկայություն չանես» (Ելից 20.16): Մենք երբեմն խոսում ենք ինչ-որ բանի մասին՝ որպես փաստի, այն դեպքում, երբ դա լոկ ենթադրություն կամ կռահում է: Բացի դրանից, մենք կարող ենք անգիտակցաբար մեր սեփական սուբյեկտիվ գնահատականն ավելացնել՝ ենթարկվելով այլ մարդկանց մտադրությունները սխալ ներկայացնելու ռիսկին:

Խրատակա՞ն է այն, ինչ ես ուզում եմ ասել: Իմ խոսքերը կօգնե՞ն նրանց, ովքեր լսում են դրանք: Պողոսը մեզ կոչ է անում ասել «այն, որ բարի է՝ շինության համար հարկավոր» (Եփեսացիս 4.29): Եթե ինչ-որ տեղեկատվություն ճշմարտություն է, բայց ուսուցողական չէ, միգուցե, ավելի լավ է չասե՞լ դա:

Կարելի՞ է դա ասել սիրով: Այն, թե *ինչպես* ենք մենք խոսում, նույնքան կարևոր է, որքան և այն, թե *ինչ* ենք ասում (տե՛ս Առակաց 25.11): Եթե տեղեկատվությունը ճիշտ է, եթե այն խրատում է, մենք

պետք է համոզված լինենք, որ կարող ենք դա ասել այնպես, որ չվիրավորենք մյուս մարդկանց:

Հակոբոսը լեզուն համեմատում է փոքրիկ կայծի հետ, որը կրակի է մատնում ողջ անտառը (Հակոբոս 3.5,6): Բամբասանքներ լսելով՝ մենք չպետք է բորբոքենք կրակը, քանի որ «Փայտ չլինելիս կրակը կհանգչի, և քսու չլինելիս կռիվը կդադարի» (Առակաց 26.20): Լուրերի տարածման համար բամբասանքներ տարածողների կենդանի շղթա է անհրաժեշտ: Մենք կարող ենք ընդհատել այդ շղթան՝ պարզապես հրաժարվելով լսել, իսկ եթե ինչ-որ բան էլ լսել ենք, դա չփոխանցենք: «Բամբասելու և դրանով իսկ չարիք ստեղծելու փոխարեն՝ եկե՛ք պատմենք Քրիստոսի զորության մասին և խոսենք Նրա փառքի մասին» (Է. Ուայթ, Վեր նայելով», 306):

Կասկածի ենթակա չէ այն փաստը, որ մեր շրջապատողների հանդեպ մեր քննադատությունն օգնում է մեզ՝ զգալու մեր առավելությունը: Սակայն ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք մեզ համեմատում ենք Հիսուսի հետ:

Հինգշաբթի **օգոստոսի 21**

Միաբանության վերականգնումը

Ինչո՞ւ է հաշտությունը նեղացած եղբոր հետ հանդիսանում այն պայմանը, որով Աստված ընդունում է երկրպագությունը: Մատթեոս 5.23,24: _____

_____

_____

Զոհասեղանի մոտ զանազան պարգևներ էին բերում, բայց Հիսուսը, ակներևաբար, նկատի ուներ զոհաբերությունը, որը մեղավորին թույլ էր տալիս ստանալ Աստծո ներումը: Սակայն, նախքան Աստծո ներումն ստանալը, մենք պետք է հարթենք շրջապատողների հետ մեր փոխհարաբերությունները: Հաշտությունը սեփական մեղքի խոնարհ ճանաչում է պահանջում: Ինչպե՞ս ներում խնդրել Աստծուց՝ առանց մերձավորի հետ հաշտության:

Ի՞նչ երեք քայլեր պետք է ձեռնարկել, եթե ինչ-որ մեկը նեղացրել է մեզ: Մատթեոս 18.15-18: _____

_____

_____

_____

Հիսուսը սովորեցնում է. շրջապատողների դեմ որևէ մեկի սխալ արարքը դատապարտելու փոխարեն՝ մենք պետք է ամենից առաջ խոսենք սխալ թույլ տված մարդու հետ: Ավելին, մեր զրույցի նպատակը պետք է լինի ոչ թե քննադատությունը, այլ մարդուն օգնելու, նրա սխալը մատնացույց անելու և ապաշխարության հրավիրելու ճշմարիտ ցանկությունը (Ղևտացոց 19.17): Հեզության և քնքուշ սիրո ոգով մենք պետք է ամեն բան անենք մեր կողմից, որպեսզի նրան օգնենք տեսնելու իր սխալը, թույլ տանք ապաշխարել և ներողություն խնդրել: Ծատ կարևոր է մարդուն չխայտառակելը՝ նրա սխալը բոլորի առջև մատնացույց անելով: Դա կարող է նշանակալիորեն բարդացնել նրա վերափոխման ընթացքը:

Իդեալական տարբերակում զրույցը պետք է հանգեցնի ապաշխարության և հաշտության: Սակայն եթե վիրավորողը չի ընդունում իր արարքը և չի ցանկանում ուղղել ամեն բան, հաջորդ քայլը կլինի մեկ կամ երկու վկաներ հրավիրելը (Երկրորդ Օրինաց 19.15), որ նրանք օգնեն մոլորված մարդուն: Նրանք չպետք է անձամբ ներքաշվեն հակամարտության մեջ, որպեսզի շահագրգիռ կողմ չլինեն՝ մարդուն ապաշխարության կոչ անելիս: Եթե նեղացնողը չի ցանկանում ունկնդրել նրանց խորհրդին, նրանք կարող են վկայել հաշտեցման ու հանդիմանության ուղղությամբ իրենց ձեռնարկած փորձերի մասին:

Ի վերջո, եթե առաջին երկու փորձերը հաջողությամբ չեն պսակվել, միայն այդ դեպքում մենք պետք է հայտնենք համայնքին, բայց ոչ թե հանուն կարգապահությունը արտահայտելու, այլ ապաշխարության վերջին կոչի համար: Սկզբից մինչև վերջ այս ամբողջ գործընթացի նպատակն է ուղղելը, և ոչ թե պատժելը (Գաղատացիս 6.1);

Մենք պետք է հիշենք, որ ուղղումը հակամարտության մեջ ներգրավված յուրաքանչյուր մարդու ապաքինմանը նպաստելու լավագույն եղանակն է: Երբ ինչ-որ մեկը մեզ ցավ է պատճառում, ինչո՞ւ մենք հաճախ չենք հետևում Հիսուսի սահմանած գործողությունների կարգին: Ինչպե՞ս սովորել սանձահարել միտքը մթագնող վրեժի ցանկությունը:

Ուրբաթ օգոստոսի 22

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վկայություններ եկեղեցու համար» գրքի 5-րդ

հատորից կարդացե՛ք «Քրիստոնեական միաբանություն» (236-248), նույն գրքի 8-րդ հատորից՝ «Միասնություն Քրիստոսի հետ» (239-243) գլուխները:

«Միաբանության մեջ զորություն կա, պառակտման մեջ՝ թուլություն: Երբ ներկա ժամանակի ճշմարտությանը հավատացողները միաբան են, նրանք խոշոր ազդեցություն են գործում: Սատանան լավ է հասկանում սա: Դեռ երբեք նա առավել վճռականորեն տրամադրված չի եղել, քան հիմա, Աստծո ճշմարտությունը զրկելու իր արդյունավետությունից՝ վիրավորանքներ ու տարաձայնություններ առաջ բերելով Աստծո ժողովրդի մեջ» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 5, 236):

«Մենք պետք է ձգտենք բոլոր մարդկանց մասին լավը մտածել, հատկապես՝ մեր եղբայրների, եթե միայն հանգամանքները չեն ստիպում այլ կերպ մտածել: Մենք չպետք է հապճեպորեն որսանք օտար լուրերը և դրանք ընդունենք հավատով: Լուրերը հաճախ նախանձի կամ թյուրիմացությունների արդյունք են, կամ էլ դրանք կարող են լինել փաստերի չափազանցման կամ մասնակի թաքցնելու արդյունքը» (նույն տեղում, 58):

Հարցեր քննարկման համար

1. Դուք ինչպե՞ս եք շփվում այն մարդկանց հետ, ովքեր, ունենալով սխալ տեսակետներ (դուք դրանում վստահ եք), բարի են, լավ են տրամադրված ձեր հանդեպ, սեր են դրսևորում՝ չնայած հայացքների տարբերությանը: Դուք ինչպե՞ս պետք է վերաբերվեք նրանց: Մյուս կողմից՝ դուք ինչպե՞ս եք վերաբերվում այն մարդկանց, ովքեր, չնայած աստվածաբանական հարցերում համաձայն են ձեզ հետ, բայց կոպիտ են, հակված քննադատության և սեր չեն դրսևորում այլախոհների հանդեպ:
2. Հաջողվո՞ւմ է միաբանություն պահպանել ձեր համայնքում: Ինչպե՞ս կարող է ոչ քրիստոնյան, նայելով քրիստոնյային, տեսնել քրիստոնեական միաբանությունը:
3. Հիսուսը մեզ սովորեցնում է ներել մեզ նեղացնողներին: Բայց ի՞նչ անել, եթե նրանք չեն ապաշխարում և մեզանից ներում չեն խնդրում: Մենք ինչպե՞ս կարող ենք վերաբերվել նրանց:
4. Ինչպե՞ս են կապակցված սերն ու կարգապահությունը:

5. Էկումենյան շարժման ներկայացուցիչները հայտարարում են միաբանություն ստեղծելու իրենց մտադրության մասին, որի մասին աղոթում էր Քրիստոսը: Որքան էլ բարի լինեն նրանց դրդապատճառները, ի՞նչ խնդիրներ ենք մենք տեսնում էկումենյան շարժման մեջ, բացի մեզ հայտնի խնդիրներից, որոնք վերաբերում են վերջին ժամանակի իրադարձություններին:
6. «Մենք պետք է ձգտենք բոլոր մարդկանց մասին լավը խորհել, հատկապես՝ մեր եղբայրների, եթե միայն հանգամանքները մեզ չեն ստիպում այլ կերպ մտածել»: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք Էլեն Ուայթի այս արտահայտությունը, հատկապես՝ մեր մարդկային էության համատեքստում:

ԴԱՍ 9

ՕԳՈՍՏՈՍԻ 23-29

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 5.14-16, Ղուկաս 24.48,49, Հովհաննես 20.21, Մատթեոս 28.19,20, Հայտնություն 14.6-12:

Հիշելու համարը.

«Եվ արքայության այս Ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզվի՝ ամեն հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24.14):

Իր ծառայության սկզբում Հիսուսը կանչեց Պետրոսին ու Անդրեասին, որպեսզի նրանք լինեն Իր աշակերտները: Դա նշանակում էր, որ նրանք պետք է այլ մարդկանց բերեին Նրա մոտ. «Իմ հետևից եկե՛ք, և Ես ձեզ մարդկանց որսորդ կդարձնեմ» (Մատթեոս 4.19): Ավելի ուշ Տերը տասներկու աշակերտ նշանակեց, «որ Իր հետ լինեն և որ նրանց ուղարկի քարոզելու» (Մարկոս 3.14): Քրիստոսը տասներկու առաքյալներին, իսկ ավելի ուշ յոթանասուն աշակերտներին ուղարկեց Ավետարանը քարոզելու (Մատթեոս 10.5-15, Ղուկաս 10.1-12): Իր հարությունից հետո քառասուն օրվա ընթացքում Քրիստոսը մի քանի անգամ հայտնվեց աշակերտներին (Ա Կորնթացիս 15.3-8) և նրանց վրա պատասխանատվություն դրեց՝ քարոզել Աստվածաշունչը (Գործք առաքելոց 1.2,3): Կրկին ու կրկին Նա նրանց հանձնարարում էր քարոզել Բարի լուրը: Թեև Ավետարանների հեղինակներից ոչ ոք չի գրանցել Հիսուսի արտաբերած յուրաքանչյուր խոսքը, սակայն ամեն մեկը մի քանի նախադասություն գրել է Տիրոջ հանձնարարության մասին, և յուրաքանչյուր այդպիսի պատումն ընդգծում է ավետարանի հանձնարարության մի առանձին տեսանկյունը: Այդպիսով, մենք ունենք տվյալ հանձնարարության նպատակի, մեթոդաբանության և մասշտաբի արժեքավոր տեսլականը:

Շաբաթվա ընթացքում մենք դիտարկելու ենք ավետարանի հանձնարարությունն այն բանի լույսի ներքո, թե ինչպես էր այն ներկայացնում Հիսուսն Ինքը:

Միաշաբթի **օգոստոսի 24**

Լույս լինել աշխարհին

Կարդացե՛ք Մատթեոս 5.14-16-ը: Այստեղ ի՞նչ է ասում Հիսուսը մեզանից յուրաքանչյուրին և ամբողջ եկեղեցուն:

_____

_____

_____

Ողջ Աստվածաշնչում լույսը կապակցվում է Աստծո հետ: «Տերն է իմ լույսը», - երգում էր Դավիթը (Սաղմոս 26.1), իսկ Հովհաննեսը պնդում էր. «Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում» (Ա Հովհաննես 1.5): Աստված լույսի աղբյուրն է: Նա փաստորեն ստեղծեց լույսը ամենասկզբում, որովհետև լույսն անհրաժեշտ է կյանքի համար:

Պատկերելով լույսի և Աստծո միջև կապը՝ Սուրբ Գիրքը հաճախ լույսն օգտագործում է որպես ճշմարտության, գիտելիքի և արդարության հոմանիշ: Քայլել լույսի մեջ՝ նշանակում է աստվածանման բնավորություն ունենալ (Եփեսացիս 5.8, Ա Հովհաննես 1.7): Լույսը խորհրդանշում էր Աստծուն, խավարը՝ սատանային: Այդ պատճառով ծանր մեղք են գործում այն մարդիկ, ովքեր «խավարը դարձնում են լույս և լույսը՝ խավար» (Եսայիա 5.20):

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո հավերժական Որդին, «մարդկանց լույսն է... ճշմարիտ լույսը, Որ ամեն մարդու լուսավորում է» (Հովհաննես 1.4,9): Միայն Նա է Լույս՝ ընդունակ լուսավորելու աշխարհի մեղքերի մեջ խեղդվողի խավարը: Նրա միջոցով մենք կարող ենք լուսավորվել «Աստծո փառքի գիտությամբ» (Բ Կորնթացիս 4.6), այսինքն՝ ճանաչել Նրա բնավորությունը:

Քրիստոսին ընդունելով որպես մեր Փրկիչ՝ մենք դառնում ենք «լույսի որդիներ» (Հովհաննես 12.36, Ա Թեսաղոնիկեցիս 5.5): Բայց մենք ինքներս մեր մեջ լույս չունենք: Լուսնի նման՝ մենք կարող ենք սոսկ արտացոլել մեզ լուսավորող լույսը: Հիսուսին թույլ տալով շողալ մեր միջոցով՝ մենք բարի գործեր ենք գործում ոչ թե որպեսզի ցուցադրենք մեր սեփական առաքինությունը, այլ որպեսզի մարդկանց առաջնորդենք դեպի Աստծո փառաբանությունը:

«Երբ սրտի մեջ բնակվում է Քրիստոսը, Նրա ներկայության լույսն ահնար է թաքցնել: Եթե իրենց Քրիստոսի հետևորդներ անվանող մարդիկ... իրենց շուրջը լույս չեն սփռում, նշանակում է՝ նրանք կապ չունեն լույսի Աղբյուրի հետ» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 41):

Անհեթեթություն չէ՞ր լինի ճրագը վառել միայն այն «գրվանի կամ մահճի տակ դրվելու» համար (Մարկոս 4.21): Ուրեմն մենք ինչո՞ւ ենք երբեմն այդպես վարվում Քրիստոսի լույսի հետ: Գաղտնի աշակերտն առավել օգտակար չէ, քան գրվանի տակ թաքցված ճրագը մութ գիշերին: Այդ պատճառով Տերը կոչ է անում. «Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա» (Եսայիա 60.1):

Ինչպես արդեն ասել ենք վերը, լուսինը սեփական լույս չունի, այլ արտացոլում է արեգակի լույսը: Ելնելով այս օրինակից՝ խորհեցե՛ք, թե ինչպես պետք է հայտնվի մեր հոգևոր լույսը:

Երկուշաբթի **օգոստոսի 25**

Լինել վկաներ

Իր հարությունից հետո Հիսուսի առաջին հանդիպումը աշակերտների հետ շատ կարևոր էր: Նրանք վախեցած էին, հիասթափված, շփոթահար, տառապում էին: Վախից աշակերտները փակել էին այն սենյակի դռները, որտեղ գտնվում էին, բայց Հիսուսը ներս մտավ և կանգնեց նրանց միջև: Հստակ ջերմ ձայնով Նա ասաց. «Խաղաղությո՛ւն ձեզ»: Ապշած ու վախեցած՝ առաքյալները չէին կարողանում հավատալ իրենց աչքերին ու ականջներին: Հիսուսը աշակերտներին սիրով ցույց տվեց Իր ձեռքերն ու ոտքերը՝ բացատրելով այն ամենը, ինչ Իր մասին ասում էր Սուրբ Գիրքը: Այդ գիշեր Նրա ներկայությունն ու խոսքերը վերափոխեցին նրանց՝ փարատելով անհանգստությունն ու թերահավատությունը, լցնելով խաղաղությամբ ու ցնծությամբ, որ բխում էին Նրա հարության վստահությունից:

Հետո Քրիստոսն սկսեց աշակերտներին բացատրել նրանց առաքելությունը, աստիճանաբար նրանց օգնեց՝ հասկանալու իրենց վրա դրված պատասխանատվության նշանակությունը՝ որպես Իր կյանքի, մահվան, հարության, մեղքեր ներելու և կյանքեր վերափոխելու Իր զորության վկաներ (Ղուկաս 24.46-48): Նրանք հաստատ տեսել էին, որ Նա մահացել է, իսկ այժմ Նրան ողջ էին տեսնում: Աշակերտներն այժմ կարող էին վկայել այն մասին, որ Հիսուսը աշխարհի Փրկիչն է:

Վկա կարող է լինել այն մարդը, ով անձամբ տեսել է ինչ-որ իրադարձություն կամ պատահար: Եթե մարդը ցուցմունք է տալիս որևէ մեկի խոսքերի հիման վրա, նա չի կարող վկա լինել: Մենք կարող ենք

վկայել՝ հիմնվելով միայն սեփական փորձառության, և ոչ թե մեկ այլ մարդու փորձառության վրա: Ներված ու փրկված լինելով մեր մեղքերից՝ մենք արտոնություն ունենք պատմելու շրջապատողներին, թե ինչ է արել Հիսուսը մեզ համար:

Ի՞նչ կապ գոյություն ունի Սուրբ Հոգին ստանալու և Քրիստոսի մասին վկայելու միջև: Ղուկաս 24.48,49, Գործք առաքելոց 1.8: Տե՛ս նաև Եսայիա 43.10,12, 44.8: _____

_____

_____

_____

Գործք առաքելոց գիրքը ցույց է տալիս, որ քրիստոնյաների վկայությունը կարող է համոզիչ ուժ ունենալ միայն նրանց սրտերում Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ: Ստանալով Հոգին՝ «առաքյալները... մեծ զորությամբ վկայում էին Տեր Հիսուս Քրիստոսի հարության մասին» (Գործք առաքելոց 4.33): Այսինքն՝ նրանք կարող էին բացահայտորեն և մեծ զորությամբ խոսել այն մասին, ինչին իրենք վկա էին եղել և ինչ վերապրել էին: Քրիստոսի մասին մեր վկայությունը միշտ պետք է ներառի Նրա հետ մեր անձնական փորձառությունը:

Ինչպիսի՞ն է Տիրոջ հետ շփման ձեր անձնական փորձը: Ի՞նչ է գործել Աստված ձեր կյանքում, ինչի մասին դուք կարող եք վկայել շրջապատողներին: Շաբաթ օրը կիսվե՛ք Ձեր պատասխանով:

Երեքշաբթի **օգոստոսի 26**

«Այնպես էլ Ես եմ ուղարկում ձեզ»

Հովհաննեսի Ավետարանը նույնպես նկարագրում է վերնատանը Հիսուսի առաջին հանդիպումը աշակերտների հետ, սակայն հիշատակում է մանրամասներ, որոնց մասին ասված չէ Ղուկասի Ավետարանում:

Համաձայն Հովհաննեսի Ավետարանի՝ Հիսուսն ինչպե՞ս սահմանեց հավատավորների առաքելությունը: Հովհաննես 20.21: _____

_____

_____

Հիսուսն այս միտքն արդեն հիշատակել էր մի քանի օր առաջ, երբ աղոթում էր. «Ինչպես Դու Ինձ ուղարկեցիր, այնպես էլ Ես եմ նրանց

ուղարկում աշխարհ» (Հովհաննես 17.18): Ինչ-որ մեկին ուղարկելը ենթադրում է, որ ուղարկողը իշխանություն ունի ուղարկվողի նկատմամբ: Այստեղ նաև ներառվում է նպատակի առկայությունը, քանի որ մարդուն ուղարկում են որոշակի առաքելությամբ, որը նա պետք է կատարի: Հիսուսը Հոր կողմից ուղարկվել էր՝ փրկելու աշխարհը (Հովհաննես 3.17), իսկ մենք Հիսուսի կողմից ուղարկված ենք՝ հռչակելու Իր պարգևած փրկությունը: Մեզ հանձնարարված է շարունակել Քրիստոսի աշխատանքը, որը բոլոր մարդկանց անշահախնդիր ծառայության մեջ է (Մատթեոս 9.35): Բայց Նա մեզանից ավելին է սպասում, քան Իր սկսած աշխատանքը շարունակելն է: «Ինձ հավատացողը, - ասաց Տերը, - Իմ արած գործերը կանի, դրանցից էլ ավելին կանի» (Հովհաննես 14.12):

Հիսուսն ուղարկեց Սուրբ Հոգին, որ աշակերտները կարողանան կատարել իրենց առաքելությունը: Արարման ժամանակ Աստված Ադամի մեջ «կենդանության շունչը փչեց» (Ծննդոց 2.7): Ինչպես կյանքի շունչը անկենդան հողը կենդանի էակ դարձրեց, այնպես էլ Սուրբ Հոգին վախկոտ հիասթափված աշակերտներին զորեղ կենդանի վկաների վերածեց, որպեսզի նրանք շարունակեն Հիսուսի գործը: Այսօր անհրաժեշտ է Սուրբ Հոգով նույնպիսի օծում՝ մեզ հանձնարարված առաջադրանքի կատարման համար:

Հիսուսը ձեզ կանչել է վկաներ լինելու: Դուք ինչի՞ մասին կարող եք վկայել: Այսինքն՝ դուք ի՞նչ եք տեսել կամ վերապրել Հիսուսի հետ, ինչի մասին կարող եք պատմել շրջապատողներին:

Չորեքշաբթի **օգոստոսի 27**

Աշակերտներ դարձրեք

Իր հարությունից հետո Հիսուսը աշակերտների հետ հանդիպեց Գալիլեայում՝ լեռան վրա, ուր նրանց հրամայել էր գալ (Մատթեոս 28.16): Ոչ միայն տասնմեկ առաքյալները, այլև ավելի քան հինգ հարյուր եղբայրներ հավաքվել էին այնտեղ, որպեսզի հանդիպեն հարություն առած Տիրոջը (Ա Կորնթացիս 15.6): Մահին հաղթողը ասաց նրանց. «Ամեն իշխանություն Ինձ տրվեց երկնքում և երկրի վրա» (Մատթեոս 28.18): Այժմ Քրիստոսի զորությունն ու իշխանությունն արդեն կամավոր կերպով սահմանափակված չէին, ինչպես նախքան մարմնացումը. Նրա իշխանությունը տարածվեց ողջ տիեզերքում:

Հիմնվելով Իր անվիճելի իշխանության վրա՝ Տերն Իր հետևորդների համար հռչակեց նրանց առաքելությունը:

Համաձայն Մատթեոսի պատումի՝ Հիսուսը, հռչակելով մեծ հանձնարարությունը, չորս բայ օգտագործեց՝ *գնացեք, աշակերտեցեք, մկրտելով և սովորեցնելով:* Ցավոք, Աստվածաշնչի շատ թարգմանություններ չեն արտացոլում այն փաստը, որ հունարեն տեքստում հրամայական ձևով դրված է միայն մեկ բայ՝ «աշակերտեցեք» (հունարեն՝ *աշակերտ դարձրեք*), այն ժամանակ, երբ մյուս երեք բառերը դերբայներ են: Սա նշանակում է, որ նախադասությունը կենտրոնացած է «աշակերտներ դարձրեք» բառակապակցության վրա, իսկ մյուս երեք գործողությունները կախված են դրանից:

Ո՞րն է այնպիսի գործողությունների դերը, իչպիսին գնալը, մկրտելն ու սովորեցնելն են, «աշակերտներ դարձրեք» հրամանը կատարելու մեջ: Մատթեոս 28.19,20:

_____

_____

_____

_____

Հիսուսի հանձնարարությունը ցույց է տալիս երեք գործողություն, որոնք կապված են մարդկանց աշակերտներ դարձնելու հետ: Տվյալ երեք գործողությունները պարտադիր չէ, որ կատարվեն խիստ հաջորդականությամբ, դրանք, ավելի շուտ, լրացնում են միմյանց: Տարբեր վայրեր այցելելով, ժամանակի ընթացքում լուրով ընդգրկելով ողջ աշխարհը՝ մենք պետք է սովորեցնենք այն ամենը, ինչ սովորեցնում էր Հիսուսը, մկրտենք՝ Հիսուսին որպես Փրկիչ ընդունողներին և Նրա բոլոր հրամանները կատարել ցանկացողներին:

Մենք ուրախանում ենք, երբ ինչ-որ մեկն ընդունում է մկրտությունը, բայց մկրտությունը պատմության վերջը չէ: Դա միայն դեպի աշակերտություն տանող ընթացքի մի մասն է: Մեր խնդիրն է՝ մարդկանց դրդել հետևելու Հիսուսին, ինչը նշանակում է հավատալ Նրան, հնազանդվել Նրա ուսմունքին, հետևել Նրա օրինակին և շրջապատողներին ևս հրավիրել՝ դառնալու Նրա աշակերտները:

Մեր դիտարկած համարում *բոլոր* բառը շատ նշանակալից է: Քանի որ Հիսուսին տրվել է *ամեն* իշխանություն, մենք պետք է գնանք *բոլոր* ժողովուրդների մոտ՝ նրանց սովորեցնելով կատարել Ավետարանում տրված *ամեն* բան՝ համոզված, որ Քիստոսը մեզ հետ է միշտ, *ամեն* օր՝ մինչև ժամանակի վերջը:

Խորհեցե՛ք ձեր խոստման մասին: Ի՞նչ են անում հաճախ համայնքի անդամները՝ նորահավատ քրիստոնյաներին սովորեցնելու և խրատելու համար: Նաև հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ ի՞նչ տաղանդներ ունեք դուք, որոնք կարելի է օգտագործել ավետարանի հանձնարարության կատարման մեջ:

Հինգշաբթի օգոստոսի 28

Քարոզե՛ք Ավետարանը

Բնորոշ հակիրճությամբ և հստակությամբ Մարկոսի Ավետարանը մեծ հանձնարարությունը ներկայացնում է մեկ համառոտ նախադասությամբ. «Գնացե՛ք ողջ աշխարհը և Ավետարանը քարոզեք ամեն արարածի» (Մարկոս 16.15): Ինչպես և Մատթեոսի Ավետարանում, «գնացեք» բայը հունարեն բնագրում դերբայ է, որը ցույց է տալիս ոչ թե առաջադրանքը, այլ գործողությունը, որն անհրաժեշտ է այդ առաջարանքի կատարման համար: Բուն առաքելությունն արտահայտված է հունարեն «կերյուսսո» բայով՝ հրամայական խոնարհմամբ: «Կերյուսսո» նշանակում է «բարձրաձայն հռչակել, տեղեկացնել, քարոզել»: Մարկոսն այդ եզրույթն օգտագործում է չորս անգամ, ավելի հաճախ, քան ցանկացած այլ ավետարանիչ: Եկեղեցին պետք է հռչակի Ավետարանը:

Հիսուսի ծառայության ժամանակ տասներկու առաքյալները չէին ուղարկվել հեթանոսների մոտ, այլ միայն «Իսրայելի տան կործանվող ոչխարների» (Մատթեոս 10.6): Իսկ այժմ նրանք ուղարկված են՝ քարոզելու ողջ աշխարհում, քարոզելու «ամեն արարածի»: Տասնմեկ աշակերտները երբեք չէին կարողանա Ավետարանը տանել ողջ աշխարհին, առավել ևս՝ այնտեղ ապրող յուրաքանչյուր մարդու: Համաշխարհային մասշտաբի այդպիսի առաջադրանքը ողջ եկեղեցու մասնակցությունն է պահանջում: Այն հանձնարարված է բոլոր ժամանակներում Հիսուսին հավատացողներին՝ ներառյալ ինձ և ձեզ:

Կարդացե՛ք Հայտնություն 14.6-12-ը: Ի՞նչ է ասված այստեղ եկեղեցու համաշխարհային առաքելության մասին:

Ավետարանը բոլոր մարդկանց հռչակելը չի նշանակում, որ յուրաքանչյուր մարդ ավտոմատ կերպով կընդունի լսածը: Միայն նա,

«ով կհավատա և կմկրտվի, կփրկվի» (Մարկոս 16.16): Մենք պետք է ջանադիր ավետենք՝ հուսալով, որ մեր յուրաքանչյուր ունկնդիր կարձագանքի ավետարանի հրավերին: Սակայն մենք պետք է հիշենք, որ շատերը չեն ընդունի Խոսքը, ինչպես դա պարզորոշ ցույց է տրված լայն դարպասների պատկերով (Մատթեոս 7.13,14):

Ի՞նչ երաշխիք ունենք մենք, որ եկեղեցու համաշխարհային առաքելությունը կիրականացվի: Մատթեոս 24.14: ____

_____

_____

Մենք կարող ենք ոգևորիչ զուգահեռ տեսնել Մարկոս 16.15-ի և Մատթեոս 24.14-ի միջև: Երկու համարներն էլ խոսում են Ավետարանը ողջ աշխարհին հռչակելու մասին, բայց եթե առաջին համարը ներկայացնում է Հիսուսի՝ քարոզելու *հանձնարարությունը*, ապա երկրորդը տալիս է *խոստում*, որ այդ առաքելությունն անպայման կկատարվի:

Քրիստոսը «նրանց օժտել էր առաջիկա աշխատանքի համար ամեն անհրաժեշտով՝ Իր վրա վերցնելով հաջողության պատասխանատվությունը: Քանի դեռ նրանք կառաջնորդվեն Նրա խոսքով և կաշխատեն Նրա հետ մեկտեղ, նրանք անհաջողություն չեն կրի» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 822): Իսկ այժմ եկե՛ք հարցնենք ինքներս մեզ՝ որքանո՞վ ենք մենք պատրաստ, որ Քրիստոսը մեզ օգտագործի այդ կարևորագույն աշխատանքի մեջ:

Ուրբաթ օգոստոսի 29

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Գնացե՛ք և աշակերտեցեք բոլոր ժողովուրդներին» (818-828), «Գործք առաքելոց» գրքից՝ «Մեծ հանձնարարությունը» գլուխները (25-34):

«Յուրաքանչյուր ճշմարիտ աշակերտ ավետարանիչ է դառնում Աստծո Արքայության համար: Ամեն ոք, ով խմում է կենդանի ջուրը, ինքն է դառնում կյանքի աղբյուր: Նա, ով ստացել է, սկսում է տալ: Քրիստոսի շնորհը մարդու հոգում նման է անապատի աղբյուրի՝ բխում է ակից, որպեսզի թարմացնի բոլորին և կործանվող հոգիներում կյանքի ջուրը խմելու ջերմ ցանկություն արթնացնի» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 195):

«Աշակերտներին տրված Փրկչի հանձնարարությունը վերաբերում է բոլոր քրիստոնյաներին: Այն տարածվում է բոլոր՝ Քրիստոսին հավատացողների վրա՝ մինչև ժամանակի վերջը: Ճակատագրական սխալ է՝ մտածել, թե հոգիների փրկությունը միայն ձեռնադրված ծառայողի գործն է... Բոլորը, ովքեր կյանք են ստացել Քրիստոսում, կանչված են աշխատելու՝ հանուն իրենց մերձավորների փրկության: Դրա համար ստեղծված է եկեղեցին և իր վրա վերցնելով նրա սրբազան խոստումները՝ մենք դրանով իսկ խոստանում ենք դառնալ Քրիստոսի զինակիցը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 822);

Հարցեր քննարկման համար

1. Ամեն մեկը չէ, որ կարող է ճանապարհորդել աշխարհում՝ քարոզելով Ավետարանը: Սակայն ինչպե՞ս կարող է մեզանից ամեն մեկը ներգրավվել աշխարհին Ավետարանը քարոզելու գործի մեջ՝ երեք հրեշտակների պատգամի համատեքստում:
2. Ինչպե՞ս է Ձեր համայնքը շարունակում Հիսուսի ծառայությունը ձեր քաղաքում: Դուք ինչպե՞ս կարող եք բարելավել ձեր եկեղեցու ավետարանչական աշխատանքը:
3. Հիսուսն ասել է, որ ավետարանի լուրը կտարածվի ողջ աշխարհում: Այն ժամանակից, երբ Նա արտասանեց այդ խոսքերը, մինչև նորագույն պատմություն կապի համակարգը գործնականում չի փոխվել: Սրանից երկու հարյուր տարի առաջ տեղեկատվության փոխանցման արագությունը շատ ավելի մեծ չէր, քան սրանից 2000 տարի առաջ: Իհարկե, ամեն բան փոխվել է, հատկապես՝ վերջին 50 տարվա ընթացքում, երբ մարդկությունը տեղեկատվության փոխանցման նոր զարմանահրաշ մեթոդներ մշակեց: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել այս անհավատալի տեխնոլոգիաներն օգտագործել Ավետարանի քարոզի գործը կատարելագործելու նպատակով:
4. Վերադառնալով երկուշաբթի օրվա դասի հարցին՝ ցանկացողներին առաջարկե՛ք կիսվել՝ Հիսուսի հետ իրենց անձնական փորձառություններով: Ինչպե՞ս կարող ենք մեր վկայությունն օգտագործել մարդկանց հետ շփման մեջ: Մենք ինչո՞ւ պետք է դիմենք անձնական փորձառությանը:

ԴԱՍ 10

ՕԳՈՍՏՈՍԻ 30 – ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5

ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 5.17-19, 5.21-44, Մարկոս 7.9-13, Մատթեոս 19.16-22:

Հիշելու համարը.

«Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցեք» (Հովհաննես 14.15):

Թեև Իսրայելի շատ հոգևոր առաջնորդներ մեծարում և փառաբանում էին Օրենքը, նրանցից ոմանք սխալ էին հասկանում դրա նպատակը, քանի որ համարում էին, որ, հնազանդվելով Օրենքին, իրենք արդարություն են ձեռք բերում: Ինչպես գրում էր Պողոսը, «Որովետև Աստծո արդարությունը չիմանալով, և իրենց արդարությունը կանգնեցնել կամենալով՝ Աստծո արդարությանը չհնազանդվեցին» (Հռոմեացիս 10.3):

Ահա թե ինչու Հիսուսը հաճախ կասկածի տակ էր դնում և անգամ մերժում էր հայրերի ավանդույթները (Մարկոս 7.1-13): Իսկ նրանք, իրենց հերթին, Օրենքի իրենց սխալ ըմբռնման պատճառով քննադատում էին Նրան և Նրա հայացքները հակադրում էին Օրենքին:

Կարևոր է հասկանալ. թեև Հիսուսը բացահայտորեն քննադատում էր փարիսեցիների օրինամոլ սովորույթները, Նա մեծարում էր Տասը պատվիրանները՝ հստակ հաստատելով Տասնաբանյայի հավերժականությունը, ինչպես նաև բացատրելով Նրա նշանակությունն ու նպատակը: Քրիստոսն Ինքն ասաց, որ եկել է Օրենքը կատարելու (Մատթեոս 5.17): Նրա մահը հաստատեց Աստծո Օրենքի իսկությունը:

Այս շաբաթ մենք կվերլուծենք Հիսուսի ուսմունքը Տասնաբանյայի վերաբերյալ, ինչպես նաև կմտորենք այն ազդեցության մասին, որ Նրա ուսմունքը պետք է թողնի մեր կյանքի վրա:

Հիսուսը չի փոխել Օրենքը

Մատթեոս 5.17-19 համարներն ի՞նչ են ասում Օրենքի հանդեպ Հիսուսի վերաբերմունքի մասին: _____

_____

_____

Թեև «օրենք» բառը հաճախ օգտագործվում է Աստվածաշնչի առաջին հինգ գրքերի վերաբերյալ (որոնք հայտնի են նաև որպես Հնգամատյան կամ Թորա), տվյալ դեպքում համատեքստը ցույց է տալիս, որ Հիսուսը խոսում էր հենց Տասը պատվիրանների մասին: Ընդգծելով, որ Ինքը չի եկել Օրենքը «քանդելու», Հիսուսը տառացիորեն ասաց. «Ես չեկա Տասը պատվիրանները չեղյալ հայտարարելու կամ վերացնելու»: Նրա խոսքը միանգամայն հստակ է: Բացի դրանից, Հիսուսը ցույց տվեց, որ Օրենքը խախտել է ոչ թե Ինքը, այլ կրոնական առաջնորդները (հայրերը)՝ իրենց պատկերացումներով նվազեցնելով նրա իսկությունը (Տե՛ս Մատթեոս 15.2-6): Ի հակակշիռ նրանց վարքի՝ Քրիստոսը բացահայտեց Օրենքի առավել խորը նշանակությունը, կատարեց այն և ցույց տվեց մեզ, թե ինչպիսին պետք է լինի կատարյալ հնազանդությունը Աստծո կամքին (տե՛ս Հռոմեացիս 8.3,4):

Կարդացե՛ք Գործք առաքելոց 7.38-ը: Ո՞վ էր Հրեշտակը, Ով խոսում էր Մովսեսի հետ և Օրենքը նրան տվեց Սինա լեռան վրա: Եսայիա 63.9, Ա Կորնթացիս 10.4: Ինչո՞ւ է կարևոր դա իմանալը: _____

_____

_____

«Քրիստոսը ոչ միայն հրեաներին առաջնորդում էր անապատում... Նա նաև Նա էր, Ով Օրենքը տվեց Իսրայելին: Սինայում շրջապատված կայծակե փառքով՝ Քրիստոսը ողջ ժողովրդի ներկայությամբ հռչակեց Իր Հոր Տասը պատվիրանները: Նա Մովսեսին հանձնեց քարե տախտակների վրա փորագրված Օրենքը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 366):

Այն փաստը, որ Քրիստոսն Ինքը Սինա լեռան վրա Մովսեսին պարգևեց օրենքը, ևս մեկ անգամ ընդգծում է, որ մեզ անհրաժեշտ է դրան վերաբերվել ողջ լրջությամբ: Ավելին, եթե Օրենսդիրն Ինքը Իր ուսմունքի մեջ բացատրեց օրենքը, ինչպես գրի է առնված Ավետարաններում, ապա մենք ճիշտ կվարվենք, եթե հնազանդվենք այդ Օրենքին:

Հիսուսի կյանքում և ուսմունքի մեջ ոչ մի ցուցում չկա այն մասին, որ Տասը պատվիրանները պարտադիր չեն քրիստոնյաների համար: Նրա բառերն ու անձնական օրինակը մեզ հակառակն են սովորեցնում:

Իմանալով, որ Օրենքը պարտադիր է կատարելու համար, մենք նաև գիտենք, որ այն չի կարող փրկել մեզ (տե՛ս Գաղատացիս 3.21): Ինչպե՞ս հասկանալ Օրենքի և շնորհի միջև եղած փոխադարձ կապը:

Երկուշաբթի սեպտեմբերի 1

Հիսուսը խորացրեց Օրենքի նշանակությունը

Հաստատելով Տասը պատվիրանների անփոփոխ բնույթը՝ Հիսուսը շարունակեց Լեռան քարոզը՝ բացատրելով հինկտակարանյան օրենքների որոշ առանձնահատուկ օրինակներ: Մարդիկ չէին հասկանում պատվիրանների իմաստը, այդ պատճառով Հիսուսը անհրաժեշտ էր համարում բացատրել դրանց իսկական նշանակությունը:

Ինչպե՞ս բացատրեց Հիսուսը Լեռան քարոզում շոշափված Օրենքի յուրաքանչյուր տեսանկյանը: Ո՞ւմ հեղինակությանն էր Նա դիմում յուրաքանչյուր դեպքում: _____

_____

_____

Ուշադրություն դարձրեք, որ յուրաքանչյուր դեպքում Հիսուսը նախ մեջբերում է Հին Կտակարանի տեքստը (Ելից 20.13,14, Երկրորդ Օրինաց 5.17,18, Ելից 21.24, Ղևտացոց 24.20, Երկրորդ Օրինաց 19.21), իսկ հետո խորացնում է դրա իմաստը: Արդյո՞ք Հիսուսը բարոյական Օրենքը դնում էր կասկածի տակ: Իհարկե, ո՛չ: Բացատրելով ու ընդլայնելով այն, ինչ կրոնական առաջնորդները հասցրել էին ձևականության մակարդակին, Նա պարզապես համեմատում էր փարիսեցիների ուսմունքը Օրենքի իսկական նշանակության հետ:

Ռաբիները Օրենքի մեկնաբանության ժամանակ ավանդույթի վրա էին հենվում՝ որպես հեղինակություն: Ի տարբերություն նրանց՝ Քրիստոսը հիմնվում էր Իր սեփական հեղինակության վրա՝ որպես Օրենսդիր: «Իսկ ես ասում եմ ձեզ» արտահայտությունը այդ գլխում հանդիպում է վեց անգամ: Իրենից՝ Տիրոջից բացի ո՞վ կարող էր իրավամբ նման հայտարարություններ անել:

Հետաքրքիր է, որ Քրիստոսի պահանջները դուրս էին գալիս Օրենքի պարզ ձևաչափի շրջանակներից: Նրա ուսմունքի մեջ կար՝

նշանակություն և կյանք հաղորդող ոգի այն բանին, ինչը հակառակ դեպքում կարող է ձևի վերածվել: Օրենքը այն ճշմարտության արտացոլումն է, թե ինչ է նշանակում փրկված լինել շնորհով: Օրենքը պահելը ինքնանպատակ լինելու դեպքում տանում է դեպի մահ:

Քննարկե՛ք դպիրների ու փարիսեցիների դիրքորոշումը, որը նկարագրված է Մատթեոս 23.3-5,23-28-ում: Մենք ինչպե՞ս կարող ենք անկեղծորեն հնազանդվել Աստծո պատվիրաններին՝ չընկնելով նման երեսպաշտության և օրինամոլության գիրկը: Շնորհի ըմբռնումն ինչպե՞ս կարող է մեզ հետ պահել օրինամոլությունից:

Երեքշաբթի սեպտեմբերի 2

Հիսուսը և յոթերորդ պատվիրանը

Համաձայն Մատթեոս 5.27,28-ի՝ Հիսուսն ինչպե՞ս ընդլայնեց Օրենքի նշանակությունը: Նա ի՞նչ ասաց 29 և 30 համարներում: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ բառերը: _____

_____

_____

_____

Բերված համարներում Քրիստոսը երկու պատվիրան է շոշափում՝ յոթերորդը և տասներորդը: Նախքան այս՝ հրեաները շնությունը դիտարկում էին որպես մեկ ուրիշի ամուսնու կամ կնոջ հետ սեռական հարաբերություն: Տասներորդ պատվիրանի հիման վրա՝ Հիսուսը ցույց տվեց, որ իրականում շնությունը ներառում է նաև վավաշոտ մտքերն ու ցանկությունները:

29 և 30 համարներում Քրիստոսը թևավոր արտահայտություն է օգտագործում: Իհարկե, ոմանք կարող են պնդել, թե ավելի լավ է ապրել խեղանդամ, քան զրկվել Քրիստոսի հետ հավիտենական կյանքից: Սակայն այստեղ Հիսուսը ոչ այնքան խոսում է խեղանդամության (ինչը կհակասեր մեկ այլ աստվածաշնչյան ուսմունքի՝ Ղևտացոց 19.27,28, 21.17-20), որքան սեփական մտքերն ու դրդումները վերահսկելու մասին: Խոսելով աչքը հանելու կամ ձեռքը կտրելու մասին՝ Քրիստոսը փաստացի ընդգծում է հաստատուն որոշումներ ընդունելու և քայլեր ձեռնարկելու մասին, որոնք ուղղված են սեփական անձը գայթակղություններից և մեղքից պաշտպանելուն:

Ի՞նչ էին հարցնում փարիսեցիները Մատթեոս 19.3-ում, և ինչո՞ւ էր դա նենգ հարց (տե՛ս 7-րդ համարը): Ի՞նչ պատասխանեց Հիսուսը: Մատթեոս 19.4-9, համեմատե՛ք Մատթեոս 5.31,32-ի հետ: _____

_____

_____

Երկու տեքստերն էլ (Մատթեոս 5.31 և 19.47) հիմնված են Երկրորդ Օրինաց 24.1-ի վրա: Հիսուսի օրերում երկու ռաբիական դպրոց կար, որոնք այդ տեքստը մեկնաբանում էին երկու տարբեր ուղղությամբ: Հիլիելի դպրոցը սովորեցնում էր, որ այդ տեքստը գործնականում թույլ է տալիս ամուսնալուծությունը ցանկացած պատճառով, այն դեպքում, երբ Շամայիի դպրոցը պնդում էր, որ այստեղ խոսվում է միայն ակներև շնության մասին: Փարիսեցիները ջանում էին խորամանկությամբ ստիպել Հիսուսին՝ հանդես գալու մեկ կամ մյուս դպրոցի կողմում: Սակայն նրանք հաշվի չէին առել, որ Աստծո ծրագրերում ի սկզբանե ամուսնալուծությունն առհասարակ գոյություն չի ունեցել, այդ պատճառով Հիսուսն ասաց. «Ինչ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթեոս 19.6): Ավելի ուշ «Մովսեսը ձեր խստասրտության պատճառով թույլ տվեց» (Մատթեոս 19.8) կնոջը «ապահարզանի թուղթ» տալ, եթե նրա մեջ ինչ-որ «անհաճո» բան էր գտնում (Երկրորդ Օրինաց 24.1): Քրիստոսը բացատրեց տվյալ հատվածի նշանակությունը՝ մեծարելով ամուսնության սրբությունն ու անփոփոխությունը. Աստծո առջև ամուսնալուծության միակ պատճառը սեռական սանձարձակությունն է կամ «շնությունը» (հունարեն՝ «պոռնեա», բառացիորեն՝ «պոռնկություն», «այլասերում»):

Որքանո՞վ ենք մենք լուրջ ընկալում Հիսուսի նախազգուշացումը աչքը հանելու կամ ձեռքը կտրելու մասին: Նա կարո՞ղ էր առավել հստակ նախազգուշացնել մեզ այն մասին, թե մեղքն ինչ կարող է անել մեր հավիտենական ճակատագրի հետ: Եթե տվյալ նախազգուշացումը վախեցնում է ձեզ, դա լավ է: Հենց դրա համար էլ այն տրված է:

Չորեքշաբթի սեպտեմբերի 3

Հիսուսը և հինգերորդ պատվիրանը

Դպիրներն ու փարիսեցիները Հիսուսի հետ մեկ այլ հանդիպման ժամանակ (Մատթեոս 15.1-20, տե՛ս նաև Մարկոս 7.1-13) Նրան հարց-

րեցին հայրերի ավանդության մասին, որը չկար Մովսեսի օրենքում: Այդ ավանդույթը նախատեսում էր ուտելուց առաջ ձեռքերի ծիսական լվացում, ինչն անտեսել էին Հիսուսի աշակերտները: Քրիստոսը պատասխանեց՝ մեջբերելով փարիսեցիների մեկ այլ ավանդույթ, որը վերացնում էր հինգերորդ պատվիրանը:

Նախքան Քրիստոսի փաստարկի վերլուծումը՝ մեզ հարկավոր է հասկանալ փարիսեցիների հաստատած ավանդույթը, որը կոչվում է «կորբան» (ծագում է «պարգև» նշանակող բառից): Երբ մարդը ինչ-որ բանի մասին ասում էր՝ «Սա կորբան է», համարվում էր, որ նա երդում է տվել: Այսուհետև դա նվիրաբերվում էր Աստծուն և տաճարին:

Կարդացե՛ք Մարկոս 7.9-13-ը: Փարիսեցիական ավանդույթն ինչպե՞ս էր խախտում հինգերորդ պատվիրանը: Խորհեցե՛ք Աստծուն ընծաներ մատուցելու կարևորության (Ելից 23.15, 34.20) և Աստծուն տրված խոստման սրբության (Երկրորդ Օրինաց 23.21-23) մասին: _____

_____

_____

_____

_____

Թվում է՝ փարիսեցիները անթերի պատրվակ էին գտել, որ ծնողներին զրկեն օրինական աջակցությունից: Նրանք սասանել էին Հնգամատյանի բովանդակած հաստատուն սկզբունքները և դրանք փոխարինել էին մարդկային պատվիրաններով, որոնք, առաջնորդների կարծիքով, կարող էին փոխարինել Աստծո պատվիրաններից մեկին:

Սա միակ անգամը չէր, որ Հիսուսը գործ էր ունենում նման հոգևոր աղավաղման հետ. «Բայց վա՜յ ձեզ՝ փարիսեցիներիդ, որ անանուխի և փեգենայի և ամեն բանջարեղենի տասանորդ եք տալիս, և Աստծո իրավունքն ու սերը զանց եք անում. այս պետք էր անել, և նա չթողնել» (Ղուկաս 11.42): Նրանք պետք է պահեին երկու պատվիրանն էլ՝ պատվեին հորն ու մորը և շարունակեին ընծաներ մատուցել Տիրոջը:

Զարմանալի չէ, որ Հիսուսը, հանրագումարելով Իր ասած փաստարկը, փարսեցիներին նկարագրեց Եսայիա մարգարեի գրքից վերցված խոսքերով: Քրիստոսից յոթ հարյուր տարի առաջ Եսայիան հրեաների մասին ասել էր. «Այս ժողովուրդն իր բերանով է մոտենում Ինձ, և շրթունքներով է Ինձ պատվում, բայց իրենց սիրտն Ինձանից հեռացած՝ ջոկված է: Զուր տեղն են պաշտում ինձ՝ վարդապետություններ սովորեցնելով, որ մարդկանց պատվերներ են» (Մատթեոս 15.8,9): Եվս

մեկ անգամ Քրիստոսը մեծարեց Տասը պատվիրանները և Իր դիրքորոշումը հակադրեց փարսեցիների տեսակետին:

Հնարավոր է, դուք նու՞յնպես «սողանցքներ» եք գտնում՝ ձեր պարտականությունները չկատարելու համար:

Հինգշաբթի սեպտեմբերի 4

Հիսուսը և Օրենքի էությունը

Կարդացե՛ք Մատթեոս 19.16-22-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ կարող ենք քաղել Օրենքի մասին այս արտասովոր պատմությունից: _____

_____

_____

_____

Հարուստ երիտասարդը չէր կարող հասկանալ, որ մեղքից փրկությունը ոչ մի կերպ կապված չէ Օրենքի գործերի հետ: Ազատագրումը պարգևում է Օրենսդիրը, Փրկիչը: Հրեաները հենց սկզբից գիտեին այս ճշմարտությունը, բայց մոռացել էին այն: Այժմ Հիսուսը բացատրում էր այն, ինչին հարկավոր էր ուշադրություն դարձնել առաջին հերթին՝ հնազանդությունն ու Աստծուն լիակատար նվիրվածությունն այնքան փոխկապակցված են, որ մեկն առանց մյուսի լոկ կեղծավորություն է, ոչ թե քրիստոնեական կյանք: «Աստված ոչինչ չի կարողանա ընդունել մեզանից, եթե մենք անհնազանդ լինենք: Քրիստոսի ուսմունքի էությունը հանգեցվում է սեփական «ես»-ից հրաժարվելուն: Ինքնուրացման կոչը հաճախ հնչում է չափազանց խիստ, բայց մարդու փրկության մեկ այլ ուղի գոյություն չունի, բայց միայն կտրելն այն, ինչը կարող է կործանարար կերպով արտացոլվել բնավորության վրա» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 523):

Մեկ այլ հանդիպման ժամանակ սադուկեցիները Հիսուսին հարցնում էին հարության մասին: Քրիստոսը նրանց ապշեցրեց Իր պատասխանով և ստիպեց լռել: Իսկ հետո նաև փարիսեցիները հավաքվեցին մեկտեղ՝ պատրաստ ձեռնարկելու վերջին փորձը, որպեսզի ստիպեն Փրկչին ասել այնպիսի խոսքեր, որ իրենք կարող էին մեկնաբանել որպես հարձակում Օրենքի դեմ: Փարիսեցիները ընտրել էին օրինամոլին, ով Հիսուսին հարցրեց, թե Օրենքի որ պատվիրանն է առավել մեծ (Մատթեոս 22.35-40):

Հնարավոր է՝ օրինամոլի հարցը ծագել էր՝ բոլոր պատվիրանները

ըստ դրանց կարևորության բաշխելու ռաբիների փորձերի արդյունքում: Եթե նրանց թվում էր, թե երկու պատվիրանները հակասում են իրար, ապա առավելությունը տրվում էր այն պատվիրանին, որն առավել կարևոր էր համարվում, և մարդն իրեն իրավասու էր համարում խախտել «պակաս կարևոր» պատվիրանը: Փարիսեցիները հատկապես մեծարում էին Տասնաբանյայի առաջին չորս պատվիրանները՝ դրանք համարելով առավել կարևոր՝ մնացած վեցի համեմատությամբ, իսկ արդյունքում տուժում էր կրոնի գործնական տեսանկյունը:

Հիսուսը պատասխանեց՝ որպես իշխանություն ունեցող. նախ (և սա ամենագլխավորն է) սրտի մեջ պետք է սեր լինի: Առանց սիրո՝ հնազանդությունն անհնար է և անիմաստ: Եթե մարդն ակնեղծորեն սիրում է Աստծուն, նրա իր կյանքն անվերապահորեն կներդաշնակի Աստծո կամքին, որն արտահայտված է բոլոր Տասը պատվիրաններում: Այդ պատճառով ավելի ուշ Հիսուսն ասաց. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցեք» (Հովհաննես 14.15):

Ուրբաթ սեպտեմբերի 5

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Քրիստոսի լեռան քարոզը» գրքից կարդացե՛ք «Օրենքի հոգևոր բնույթը» (45-78), «Դարերի փափագը» գրքից՝ «Լեռան քարոզը» (307-314) և «Բանավեճ» (606-609) գլուխները:

«Խոսելով Օրենքի մասին՝ Հիսուսը նկատում է. «Ես չեմ եկել խախտելու, այլ կատարելու», այսինքն՝ կատարելու Օրենքի բոլոր պահանջները և Աստծո կամքին լիակատար հնազանդության օրինակ տալու...

Քրիստոսի առաքելությունն այն էր, որ «օրենքը մեծացրեց և փառավորեց» (Եսայիա 42.21): Նա պետք է մարդկանց համար բացահայտեր դրա հոգևոր էությունը, դրա համընդգրկուն սկզբունքներն ու անփոփոխությունը...

Հիսուսը, Ով ճշգրիտ նման էր Իր Հորը, Նրա փառքի փայլը, անձնուրաց Փրկիչը, իր երկրային թափառումների ժամանակ Աստծո սիրո և Աստծո Օրենքի բնավորության կենդանի մարմնացումն էր: Իր կյանքով Նա ցուցադրեց, որ հավիտենական բարոյականության օրենքների հիմքում ընկած են երկնային սերն ու քրիստոսանման սկզբունքները» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 48, 49):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպե՞ս կարող ենք մենք փարիսեցիների նման օրինամոլ դառնալ պատվիրանները պահելու հարցում: Կազմե՛ք այն գործնական լուծումների ցանկը, որոնք կօգնեն ձեզ՝ խուսափելու այս կամ այն ծայրահեղությունից: Ձեր գաղափարներով կիսվե՛ք դասարանի հետ:
2. Ինչպես գիտենք, Տասը պատվիրանների դեմ ուղղված բոլոր հարձակումները պայմանավորված են շաբաթը պահելու ցանկություն չունենալով: Տեսեք շաբաթ օրերին բժշկություն կատարելու բոլոր դեպքերը, որ գրի են առնված Ավետարաններում: Ինչպե՞ս են հաստատում դրանք ոչ միայն ողջ Աստծո Օրենքի, այլ նաև շաբաթի իրավաբանական ուժը: Ինչո՞ւ շաբաթը մերժողներն իրավունք չունեն հիմնվելու Հիսուսի խոսքերի և բառերի վրա:
3. Աստվածաբանները երբեմն հիշատակում են այնպիսի հասկացություն, ինչպիսին «բարոյական տիեզերքն» է: Ի՞նչ է նշանակում դա: Ինչպե՞ս է մեր աշխարհը բարոյական վայր հանդիսանում: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է աշխարհը դարձնում բարոյական: Ի՞նչ դեր պետք է հատկացվի Աստծո Օրենքին բարոյական տիեզերքում: Տիեզերքը կարո՞ղ էր բարոյական վայր լինել առանց Աստծո, Ով կառավարում է այն՝ բարոյական Օրենքի միջոցով: Քննարկե՛ք՝ Աստծո Օրենքի առկայությունը բարոյական տիեզերքում ինչպե՞ս է բացատրում՝ այդ Օրենքը զորությունից զրկելու սատանայի փորձը:

ԴԱՍ 11

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-12

ՇԱԲԱԹ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 1.1-3, Մատթեոս 12.1-5, Ղուկաս 4.16-21, Հովհաննես 5.16,17, Մատթեոս 24.20:

Հիշելու համարը.

«Եվ ասաց նրանց՝ շաբաթը եղավ մարդու համար, ոչ թե մարդը՝ շաբաթի, ուրեմն Մարդի Որդին շաբաթի էլ տերն է» (Մարկոս 2.27,28):

Քրիստոսի երկրային ծառայության ժամանակ կրոնական առաջնորդները մի անգամ չէ, որ Նրան մեղադրել են շաբաթը սխալ պահելու մեջ: Քննադատության ենթարկվելով՝ Քրիստոսն ընդգծում էր Իր իշխանությունը՝ որպես շաբաթի Տեր (Մատթեոս 12.8, Մարկոս 2.28, Ղուկաս 6.5): Նա նաև ցույց էր տալիս, թե ինչ է նշանակում ճիշտ պահել շաբաթը:

Այսօր մենք բախվում ենք ոչ միայն «շաբաթը ճիշտ պահելու խնդրին», այլ նաև այն տարածված պնդմանը, որ ոչ թե շաբաթը, այլ կիրակին է հանգստյան օրը: Սակայն կիրակի օրվա կողմնակիցները չեն կարող ոչ մի վկայություն գտնել Ավետարաններում՝ ի պաշտպանություն իրենց տեսակետի: Ավետարանում հիշատակված վեճերը շաբաթվա վերաբերյալ, վերաբերում են միայն այն բանին, թե *ինչպես* պետք է պահել շաբաթը, և ոչ թե *երբ*: Հիսուսի կյանքն ու ուսմունքը կասկած չեն թողնում, որ յոթերորդ օրը՝ շաբաթը, շարունակում է մնալ Աստծո հանգստի օրը՝ անգամ Նրա մահից ու հարությունից հետո:

Շաբաթվա ընթացքում մենք կխորհենք Քրիստոսի մասին՝ որպես Արարչի և շաբաթի Տիրոջ: Մենք կհետազոտենք Հիսուսի ուսմունքը շաբաթը պահելու վերաբերյալ և կտեսնենք Նրա անձնական օրինակը այդ հարցում: Ինչպես նաև կտեսնենք, թե ինչ է ասել Հիսուսը շաբաթի մասին, և թե ինչ օրինակ թողեցին առաքյալները Նրա հարությունից հետո:

Միաշաբթի **սեպտեմբերի 7**

Քրիստոսը շաբաթի Արարիչն է

Ի՞նչ են ասում հետևյալ համարներն արարման մեջ Հիսուսի դերի մասին: Ինչո՞ւ է դա կարևոր, հատկապես՝ երբ մենք խոսում ենք շաբաթի ծագման մասին: Հովհաննես 1.1-3, Կողոսացիս 1.16, Եբրայեցիս 1.1,2: _____

_____

_____

_____

Հովհաննեսն իր Ավետարանն սկսում է հայտնի արտահայտությամբ. «Սկզբում էր Խոսքը... Ամեն բան Նրանով եղավ, և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհաննես 1.1-3): Հովհաննեսն ու Պողոսը կասկածներ չեն թողնում արարման գործում Քրիստոսի դերի վերաբերյալ: Որդի Աստված՝ Հիսուս Քրիստոսը, արարել է ամեն բան. «Նրանով է ստեղծվել ամեն բան, ինչ երկնքում է, և ինչ երկրի վրա է, տեսանելին և անտեսանելին... ամեն բան Նրանով և Նրա համար է ստեղծվել» (Կողոսացիս 1.16): Քրիստոսի միջոցով Աստված ստեղծեց տիեզերքը՝ ներառյալ մեր Արեգակնային համակարգությունը, Երկիրը և ամեն բան, ինչ նրա վրա է՝ կենդանին ու անկենդանը:

Քրիստոսը, Ով պետք է դառնար մարդու Փրկիչը, նաև նրա Արարիչն է: Արարման շաբաթվա վերջում Տերը մեզ հանգստի օր պարգևեց: «Քանի որ շաբաթը ստեղծված է մարդու համար, այն Տիրոջ օրն է... Նա է արարել ամեն բան, նա է արարել նաև շաբաթը: Նա առանձնացրել է այն՝ ի հիշատակ Արարման օրերի» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 288):

Այն նույն Աստված, Ով մարդուն ստեղծեց հանգստի կարիքով, հոգ տարավ համապատասխան հնարավորության մասին՝ շաբաթվա մեջ օր նախատեսելով, երբ մարդիկ պետք է հետաձգեին իրենց ամենօրյա աշխատանքն ու հոգսերը և հանգիստ գտնեին իրենց Արարչի մեջ: Նա Ինքը հանգստացավ յոթերորդ օրը՝ արարման ավարտին, բայց ոչ թե հոգնածության պատճառով, այլ որպեսզի օրինի, սրբի շաբաթը և մեզ համար օրինակ թողնի, որին պետք է հետևենք նաև մենք: Խաչի վրա, ավարտին հասցնելով մեր փրկությունը, Տերը նույնպես հանգստացավ շաբաթ օրը, որպեսզի (բացի ամեն մնացյալից) հաստատի շաբաթի անանց արժեքը: Քրիստոսը, Ով անհանգիստ մարդկությանը կոչ է անում հանգստանալ Իր մեջ (Մատթեոս 11.28,29), մեզ հրավիրում է

առանձնահատուկ ձևով հանգստանալու շաբաթական մի անգամ՝ ամեն շաբաթ:

Շաբաթը պահելը մեզ կապում է երկրի արարման սկզբի հետ, մեր գոյության բուն հիմքերի հետ: Կա՞ ավելի լավ ժամանակ՝ կարևոր հարցերի մասին խորհելու համար, թե ես ինչպես եմ վարվում Աստծո կողմից պարգևված կյանքի հետ:

Երկուշաբթի սեպտեմբերի 8

Քրիստոսը շաբաթի Տերն է

Կարդացե՛ք Մատթեոս 12.1,2-ը: Ինչի՞ մասին են պատմում համարները: Ինչո՞ւ փարիսեցիները Հիսուսի աշակերտների գործողությունները համարեցին հակաօրինական: _____

_____

_____

Երկրորդ Օրինաց 23.25 համարը հռչակում է. «Երբ դրացուդ հունձքը մտնես, ձեռքովդ հասկերը պոկես, բայց դրացուդ հունձքին մանգաղ չզարկես»: Հետևաբար, խնդիրը ոչ թե բուն գործողություններն են, այլ օրը, երբ դա տեղի էր ունենում: Անկասկած, այնպիսի աշխատանքները, ինչպես բերքահավաքը, կալսելն ու աղալը, անթույլատրելի են շաբաթ օրը: Բայց, փարիսեցիների կարծիքով, հասկեր պոկելով, դրանք տրորելով ու հատիկները թեփից մաքրելով՝ աշակերտները կատարում էին վերը թվարկված բոլոր աշխատանքները:

Բերելով առաջին օրինակը (Ա Թագավորաց 21.1-6)՝ Քրիստոսը ցույց տվեց. թեև սովորական պարագաներում Դավիթն ու նրա մարդիկ քահանաների համար նախատեսված հացն ուտելու իրավունք չունեին (Ղևտացոց 24.9), հաշվի առնելով ստեղծված իրադրությունը՝ Դավթի և նրա մարդկանց գործողությունները կարելի է դիտարկել որպես ծիսական կանոնի թույլատրելի խախտում, քանի որ նրանց կյանքը վտանգի տակ էր: Հիսուսի հիշատակած երկրորդ օրինակը (Մատթեոս 12.5) վերաբերում էր շաբաթ օրը տաճարում կատարվող ծառայությանը: Այդ օրը հրեաները երկու անգամ ավելի շատ զոհեր և ընծաներ էին մատուցում, քան ցանկացած այլ օր (Թվոց 28.9,10): Հրեաներն իրենք ընդունում էին, որ տաճարի ծառայությունը շաբաթը պահելուց ավելի կարևոր էր:

Բերելով այս օրինակները՝ Հիսուսը երկու հայտարարություն է անում, որոնք հաստատում են շաբաթը պահելու կապակցությամբ փարիսեցիների կողմից սահմանված բեռը վերացնելու Նրա իրավունքը. 1) «շաբաթն է մարդու համար, ոչ թե մարդը՝ շաբաթի» (Մարկոս 2.27): Այստեղ Հիսուսը վերադառնում է շաբաթ օրվա եդեմական նշանակությանը և ճիշտ է բաշխում մարդուն և շաբաթին վերաբերող գերակայությունները. շաբաթը ստեղծվել է մարդու բարօրության համար և շարունակում է մնալ որպես Աստծո պարգև՝ ծառայելով մարդկությանը, ոչ թե մարդկությունը պետք է ծառայի շաբաթին: 2) Ասելով. «Մարդի Որդին շաբաթի էլ Տերն է» (Մարկոս 2.28)՝ Քրիստոսը հաստատեց շաբաթի Արարչի և Օրենսդրի Իր կարգավիճակը: Հենց այդ պատճառով Նա իշխանություն ուներ ազատելու շաբաթը մարդկանց հորինած օրենքներից:

Աստծո ժողովրդի հոգևոր առաջնորդները շաբաթի Տիրոջը մեղադրեցին շաբաթը խախտելու մեջ, որը Նա Ինքն էր արարել ու սրբել: Ի՞նչ է ասում սա մեզ՝ նրանց հոգևոր կուրության վտանգի մասին, ովքեր պետք է ավելի լավ իմանան այդպիսի ճշմարտությունները:

Երեքշաբթի սեպտեմբերի 9

Հիսուսի օրինակը

Ղուկաս 4.16 համարը մեզ ի՞նչ է ասում շաբաթի հանդեպ Հիսուսի վերաբերմունքի մասին: Ինչո՞ւ է դա մեզ համար կարևոր այսօր: Հովհաննես 14.15, Ա Պետրոս 2.21:

«Սովորություն» բառը, որ Ղուկասն օգտագործում է 16-րդ համարում, ծագում է հունարեն բառից, որը ցույց է տալիս կայացած սովորություն: Այսինքն՝ Հիսուսը ժողովարան էր այցելում ամեն շաբաթ, երբ որ ունենում էր այդ հնարավորությունը: Ավելին, դա այնքան կարևոր է, որ Ղուկասն իր Ավետարանում չորս անգամ հիշատակում է այն մասին, որ շաբաթ օրը Հիսուսն այցելեց ժողովարան (Ղուկաս 4.16, 4.31, 6.6, 13.10): Ղուկասը նաև հատուկ նշում է շաբաթը՝ որպես շաբաթվա յոթերորդ օր (Ղուկաս 23.54-24.1): Այն փաստը, որ Հիսուս Քրիստոսը Իր երկրային ծառայության ժամանակ հրեաների հետ մեկտեղ պահում էր յոթերորդ օրը՝ շաբաթը, ցույց է տալիս, որ շաբաթվա պարբերաշրջանը չէր կորսվել Սինայում Օրենքն ստանալուց ի վեր և անգամ արարչագործության ժամանակներից ի վեր: Շաբաթը պահելու

Նրա օրինակը չափանմուշ է, որին պետք է հետևեն քրիստոնյաները՝ ուշադրություն դարձնելով ինչպես շաբաթը պահելու ժամանակին, այնպես էլ ոձին:

Ի՞նչ էր կարդում Հիսուսը ժողովարանում: Ինչո՞ւ է դա կարևոր: Ղուկաս 4.16-21: _____

_____

_____

_____

Առաջին անգամ չէր, որ Հիսուսը կարդում և խոսում էր ժողովարանում: Արդեն մեկ տարուց ավելի էր, ինչ Նա մկրտվել էր Հորդանանում: Սակայն դա Նրա առաջին այցելությունն էր Նազարեթ՝ այն ժամանակից ի վեր, երբ Նա լքել էր հյուսնի արհեստանոցը, որտեղ անցկացրել էր Իր կյանքի առաջին 30 տարիները և որտեղ այցելում էր տեղի ժողովարանը: Երբ Նա պատանի էր, «հաճախ շաբաթ օրերին Նրան հրավիրում էին ժողովարանում խրատներ կարդալու մարգարեներից, և մարդիկ ուրախանում էին՝ Սուրբ գրքի ծանոթ խոսքերը նորովի լսելով» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 74):

Սակայն այս անգամ ամեն բան այլ էր: Հիսուսը ընտրել էր որոշակի հատված՝ Եսայիա 61.1,2-ը: Համարները նկարագրում էին երկրի վրա Մեսիայի աշխատանքը, երբ Նա կգա «Տիրոջ ընդունելի տարին քարոզելու» (Ղուկաս 4.19): Համաձայն մարգարեության՝ դա կլինի շաբաթ կամ հոբելյան տարին՝ հանգստի ժամանակը: Համապատասխանաբար, Հիսուսն ընտրել էր հանգստի օրը՝ շաբաթը, որպեսզի հաղորդի փրկագնման, ազատագրման և ապաքինման Իր ծառայության մասին: Իսկապես, մենք հանգիստ ենք ձեռք բերում Հիսուսի մեջ՝ իրական հանգիստ ամեն շաբաթ:

Չորեքշաբթի **սեպտեմբերի 10**

Հրաշքներ շաբաթ օրը

Ավետարանները պատմում են մի շարք հրաշալի բժշկությունների մասին, որ Հիսուսը կատարեց շաբաթ օրը: Հետաքրքիր է նկատել, որ դեպքերի մեծ մասի ժամանակ ապաքինումը տեղի էր ունենում Հիսուսի նախաձեռնությամբ, ասես Նա նպատակաուղղված կերպով ջանում էր ապաքինել շաբաթ օրը, թեև կարող էր դա անել ցանկացած օր: Հիսուսը ջանում էր ցույց տալ, որ շաբաթ օրը ապաքինելը Օրենքի խախտում չէ: Ընդհակառակը, դա առավել օրինական էր, քան այն գործերը, որոն-

ցով սովոր էին շաբաթ օրն զբաղվել շատ փարիսեցիներ և կրոնական առաջնորդներ:

Ի՞նչ փաստարկներ են բերված տեքստում՝ շաբաթ օրը Հիսուսի կատարած ապաքինման հրաշքների օգտին: Մատթեոս 12.10-12, Ղուկաս 13.15,16, Հովհաննես 5.16,17:

_____

_____

_____

_____

Համաձայն Աստծո հրամանի՝ շաբաթ օրը մենք պետք է հետաձգենք ամեն գործ և անձնական շահերը (տե՛ս Ելից 20.9, Եսայիա 58.13), սակայն շաբաթը ոչ մի դեպքում չի կարելի ընկալել որպես անգործ, պարապ ժամանակ: Բանավիճելով փարիսեցիների հետ՝ Քրիստոսը հստակորեն հասկացրեց. «Արժան է շաբաթ օրը բարին գործել» (Մատթեոս 12.12): Համաձայն ռաբիների ավանդույթների՝ շաբաթ օրը կարելի էր հիվանդ մարդուն բուժել միայն այն դեպքում, եթե հիվանդությունն սպառնում էր նրա կյանքին: Նույն կերպ, եթե ոչխարը կամ եզը ընկնեին փոսը, թույլատրվում էր կենդանուն հանել շաբաթ օրը՝ նրա կյանքը փրկելու համար: Բայց մի՞թե մարդու կյանքն իրենից ավելի մեծ արժեք չի ներկայացնում, քան կենդանու կյանքը: Ցավոք, Քրիստոսի քննադատներն ավելի մեծ կարեկցանք էին դրսևորում իրենց կենդանիների, քան տառապող մարդկանց հանդեպ: Նրանք ջուր էին խմեցնում էին իրենց անասուններին, բայց հակառակվում էին առողջ մարդու վերականգնմանը:

Հիսուսը նաև պնդում էր. «Իմ Հայրը մինչև այժմ անում է, և Ես էլ եմ անում» (Հովհաննես 5.17)՝ նկատի ունենալով Աստծո գործերը՝ հանուն Իր արարչագործության բարօրության: Անգամ շաբաթ օրը Աստված շարունակում է կյանք պարգևել և պահպանել տիեզերքը (Եբրայեցիս 1.2,3):

Հիսուսը սովորեցնում էր, որ մենք չպետք է շաբաթը պահելուն վերաբերվենք օրինամոլների դիրքերից: Շաբաթը պահելը նշանակում է «հանգստանալ» սեփական գործերից (Եբրայեցիս 4.10) և, որ ավելի կարևոր է, դադարել ջանք անելուց՝ փրկությունը վաստակելու համար, քանի որ բոլոր դեպքերում դա հնարավոր չէ: Սատանան ջանում է համոզել մեզ՝ շաբաթը պահել եսասիրական դրդումներից ելնելով: Եթե նա չի կարող մեզ շաբաթի դեմ տրամադրել, ապա կջանա մեզ մեկ այլ ծայրահեղության՝ օրինամոլության գիրկը նետել:

Շաբաթը պահելու հարցում կարելի է ընկնել երկու ծայրահեղություններից մեկի մեջ՝ կա՛մ օրինամոլության, կա՛մ ամենաթողության: Ինչպե՞ս պահպանել ճիշտ հավասարակշռությունը: Ինչո՞ւ պետք է զգույշ լինենք՝ գնահատելով, թե ինչպես են շաբաթը պահում մյուս մարդիկ (հիշեցե՛ք. փարիսեցիները նույնպես գնահատում էին, թե ինչպես էր շաբաթը պահում Քրիստոսը):

Հինգշաբթի սեպտեմբերի 11

Շաբաթը Քրիստոսի հարությունից հետո

Շատ քրիստոնյաներ շաբաթի փոխարեն պահում են կիրակին՝ բերելով որոշ փաստարկներ, որոնցից հիմնականը Քրիստոսի հարությունն է: Սակայն ողջ Նոր Կտակարանում, ներառյալ Քրիստոսի հարության մասին հատվածները, չկա և ոչ մի համար՝ շաբաթը կիրակիով փոխելու մասին: Բացի դրանից, Նոր Կտակարանը հստակորեն ցույց է տալիս. Քրիստոսը ցանկանում էր, որ Իր զավակները շաբաթը պահեն անգամ Իր հարությունից հետո:

Ի՞նչ հաղորդեց Քրիստոսն Իր հարությունից հետո շաբաթի հանդեպ վերաբերմունքի մասին: Մատթեոս 24.20:

_____

_____

_____

Մատթեոս 24.20-ում Քրիստոսի խոսքերը ցույց են տալիս, որ մեր թվարկության 70 թվականին էլ (Նրա մահից մոտ 40 տարի անց) շաբաթն առաջվա նման սուրբ օր կլինի, ինչպես միշտ եղել է: Խառնաշփոթը, հուզումները, վախը, փախուստը Երուսաղեմից՝ այս ամենը չի համապատասխանի շաբաթ օրվան:

Նոր Կտակարանում մենք է՞լ ինչ վկայություններ ենք գտնում այն բանի մասին, որ Քրիստոսի հարությունից հետո յոթերորդ օրը՝ շաբաթը, մնում էր սուրբ օր: Գործք առաքելոց 13.14,42, 14.1, 17.1,2, 18.4: _____

_____

_____

_____

Առաքյալների համար շաբաթը պահելու լավագույն ձևերից մեկը ժողովարան այցելելն էր, ինչ այսօր մեզ համար եկեղեցի այցելելն է:

Սա հատկապես նկատելի է Պողոս առաքյալի կյանքում, ով կանոնավոր կերպով այցելում էր ժողովարանի շաբաթօրյա երկրպագությանը: Հիսուսի օրինակին հետևելը նրա սովորույթն էր (Գործք առաքելոց 17.2): Թեև Պողոսը հեթանոսների առաքյալ էր, հավատով արդարացման մասին ճշմարտության առաջամարտիկ, նա շաբաթ օրերին սովորաբար ժողովարան էր գնում ոչ միայն հրեաներին քարոզելու, այլ նաև սուրբ շաբաթը պահելու համար:

Մի շաբաթ, ժողովարանում ծառայության ավարտից հետո, հեթանոսները Պողոսին խնդրեցին Ավետարանը իրենց քարոզել նաև հաջորդ շաբաթ: Առաքյալը կարող էր նրանց հրավիրել իրեն լսելու հաջորդ օրը՝ կիրակի, սակայն նա սպասեց մի ողջ շաբաթ: «Մյուս շաբաթ օրը համարյա ամբողջ քաղաքը հավաքվել էր Աստծո խոսքը լսելու» (Գործք առաքելոց 13.44): Այս համարները մեծազոր վկայություն են այն բանի, որ վաղ եկեղեցին շարունակում էր սուրբ պահել շաբաթը:

Մենք գիտենք, որ իրավացի ենք՝ շաբաթը սուրբ օր համարելով: Դա, անկասկած, կարևոր է: Սակայն շաբաթ օրը պահելը կարո՞ղ է մեզ առավել կարեկից, սիրող ու հոգատար քրիստոնյաներ դարձնել:

Ուրբաթ սեպտեմբերի 12

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Շաբաթը» գլուխը (281-289):

««Ուրեմն Մարդի Որդին շաբաթի էլ Տերն է»: Այս բառերը լի են խրատով ու մխիթարությամբ... Շաբաթը Քրիստոսին ցույց է տալիս որպես այն սրբագործած Արարիչ: Այն վկայում է՝ Նա, Ով արարել է ամեն բան երկնքում և երկրի վրա, Ով ամեն բան պահում է, եղեկեցու գլուխն է, և Նրա զորության շնորհիվ է, որ մենք հաշտված ենք Աստծո հետ: Որովհետև, խոսելով Իսրայելի մասին, Նա ասաց. «Նաև Իմ շաբաթները տվի նրանց, որ նշան լինեն Իմ և նրանց միջև, որ իմանան, թե Ես Եմ նրանց սրբող Տերը» (Եզեկիել 20.12): Այդ պատճառով շաբաթը հանդիսանում է Քրիստոսի՝ մեզ սրբող զորության խորհրդանիշը: Շաբաթը տրված է բոլորին, ում սրբում է Քրիստոսը: Որպես Նրա սրբագործող զորության նշան՝ շաբաթը տրված է ամենքին, ովքեր Քրիստոսի միջոցով դառնում են Աստծո Իսրայելի մի մասը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 288):

Հարցեր քննարկման համար

1. Մենք Քրիստոսին ենք պատկանում արարման և փրկագնման իրավունքով: Ինչպե՞ս է շաբաթն առանձնահատուկ կերպով մեզ հիշեցնում այդ կարևորագույն ճշմարտությունը:
2. Ո՞րն է չորրորդ պատվիրանը պահելու նկատմամբ օրինամոլական մոտեցման խնդիրը: Մյուս կողմից, գուցե միայն շաբաթվա հարցո՞ւմ կարող է օրինամոլության հարց առաջանալ: Ո՞ր հիմնարար տարրն է, որ Աստծո Օրենքը, այդ թվում նաև շաբաթի պատվիրանը պահելը, դարձնում իսկական օրհնություն:
3. Ինչո՞ւ շաբաթ օրը և այդ օրը հանգստանալու հնարավորությունը պետք է մեզ համար ծառայեն որպես առանձնահատուկ հիշեցում, որ մենք փրկվում ենք ոչ թե մեր գործերով, այլ Քրիստոսի արժանիքներով, հանուն մեզ գործած Նրա սխրանքով:
4. Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել Տիրոջ հետ շփման առավել խորը, հարուստ փորձառություն վերապրել շաբաթ օրը:
5. Շաբաթը պահելու վերաբերյալ ի՞նչ դասեր կարող ենք քաղել մենք Քրիստոսի օրինակից, հատկապես Նրա «շաբաթօրյա» ապաքինումներից: Այդ ապաքինումներն ինչպե՞ս են օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու շաբաթ օրվա նշանակությունը:
6. Մեզ պատվիրված է «սրբել» շաբաթ օրը: Խորհեցե՛ք այն մասին, ինչով եք դուք զբաղվում շաբաթ օրը: Դա որքանո՞վ է համապատասխանում այս կարգադրությանը:

ԴԱՍ 12

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-19

ՄԱՀՆ ՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 11.11, Հովհաննես 1.1-4, Ղուկաս 8.54,55, Հովհաննես 5.28,29, Մատթեոս 5.22,29, Հովհաննես 11.38-44:

Հիշելու համարը.

«Հիսուսը նրան ասաց. Ես եմ հարությունը և կյանքը. Ինձ հավատացողը, եթե մեռնի էլ, կապրի» (Հովհաննես 11.25):

Արդիկ ունեն մահվան հանդեպ բնական անընկալունություն, քանի որ ստեղծվել են հավիտենական կյանքի համար: Մահը անկոչ հյուր է, այն չպետք է լինի:

Այդ պատճառով Իր երկրային ծառայության ժամանակ Հիսուսը առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում մերձավորներից զրկված մարդկանց հանդեպ: Տեսնելով նայինեցի այրուն, ով թաղում էր իր միակ որդուն, «Տերը գթաց նրան և ասաց նրան. մի՛ լացիր» (Ղուկաս 7.13): Վշտից սպանված հորը, ում տասներկուամյա դուստրը հենց նոր մահացել էր, Քրիստոսը մխիթարեց՝ ասելով. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛» (Մարկոս 5.36): Ամեն անգամ, երբ մահը փլվում է մեր սիրելիների վրա, մեր ցավը դիպչում է նաև Հիսուսին: Նրա կարեկից սիրտը հառաչում է մեզ հետ միասին:

Բայց Քրիստոսը կարող է ոչ միայն կիսել մեր ցավը: Իր մահվամբ և հարությամբ հաղթելով Մահին՝ Նա ունի մահվան բանալիները և խոստանում է հարություն տալ յուրաքանչյուր Իրեն հավատացողին՝ դեպի հավիտենական կյանք: Դա, անկասկած, մեծագույն խոստումն է, որ մեզ պարգևված է Աստծո Խոսքով. չէ՞ որ եթե վերջին խոսքը մնար մահվանը, մեր ողջ կյանքն ու բոլոր ձեռքբերումները ամեն իմաստ կկորցնեին:

Մահվան վիճակը

Հին Կտակարանի բոլոր հեղինակները մարդուն համարում էին անբաժանելի էակ: Տարբեր հրեական եզրույթներ, որոնք սովորաբար թարգմանվում են որպես «մարմին», «հոգի» և «ոգի», իրենցից ներկայացնում են մարդկային անձնավորության ամբողջականության նկարագրման այլընտրանքային եղանակներ՝ տարբեր տեսակետներից: Համապատասխանելով տվյալ համատեքստին՝ Սուրբ Գիրքը մահը նկարագրելու համար դիմում է տարբեր փոխաբերությունների: Դրանց մեջ աչքի է ընկնում «քուն» փոխաբերությունը, որն արտացոլում է մեռածների վիճակի աստվածաշնչյան ըմբռնումը (տե՛ս Հոբ 3.11-13, 14.12, Սաղմոս 13.3, Երեմիա 51.39, Դանիել 12.2): Մահը կյանքի լիակատար ավարտն է: Մահը անգիտակից վիճակ է, որի դեպքում չկան մտքեր, հույզեր, աշխատանք կամ որևէ փոխհարաբերություն (Ժողովող 9.5,6,10, Սաղմոս 104.29, 146.4):

Սակայն Հիսուսի ժամանակներում մարդու և հատկապես մահվան հանդեպ այսպիսի վերաբերմունքը վիճարկում էր հոգու անմահության տարածված հեթանոսական դուալիստական հայեցակարգը:

Ինչպե՞ս նկարագրեց Հիսուսն Իր բարեկամ Ղազարոսի մահը: Հովհաննես 11.11: _____

_____

_____

Այս և այլ համարներին հակառակ՝ շատ քրիստոնյաներ պնդում են, որ Հիսուսը հավատում էր հոգու անմահությանը, քանի որ խաչի վրայի ավազակին ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ այսօր Ինձ հետ կլինես դրախտում» (Ղուկաս 23.43): Այս համարի իմաստը արմատապես փոխվում է՝ կախված ստորակետի դիրքից: (Նոր Կտակարանի հնագույն ձեռագրերում կետադրության նշաններ չկան): Եթե ստորակետը դրվի «քեզ» բառից հետո, ինչպես դա արված է Աստվածաշնչի թարգմանությունների մեծ մասում, դա կնշանակի, որ Հիսուսն ու ավազակը հայտնվեցին դրախտում այդ նույն օրը: Իսկ եթե ստորակետը դրվի «այսօր» բառից հետո, իմաստը փոխվում է և ակնհայտ է դառնում, որ Հիսուսը ավազակին հավաստիացնում է ապագա ազատագրման մեջ: Փաստորեն Հիսուսը շեշտը դնում է փրկության վստահության, և ոչ թե ավազակի հետ երկինք բարձրանալու ժամանակի վրա: Դա հաստատվում է համատեքստով: Նախ, ավազակը

չէր խնդրում մահից հետո անհապաղ երկինք տեղափոխվելու մասին: Նա խնդրում էր, որ Տերը հիշի իրեն, երբ գա Իր Արքայությամբ: Ավելին, երեք օր անց Հիսուսն Ինքը հաստատեց, որ դեռ երկինք չի բարձրացել (Հովհաննես 20.17): Այդ պատճառով այս համարը չի սովորեցնում, որ մահացածների հոգիները մահից հետո ուղևորվում են երկինք:

Թեև մենք հասկանում ենք, որ մահը անգիտակից քուն է, ինչո՞ւ հարության ուսմունքը մեզ համար այդքան մեծ նշանակություն ունի:

Երկուշաբթի սեպտեմբերի 15

Հարության հույսը

Արարման ժամանակ «Տեր Աստված մարդուն ստեղծեց հողի փոշուց և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց»: Արդյունքում «մարդը կենդանի հոգի եղավ» (Ծննդոց 2.7): Այնքան ժամանակ, քանի դեռ Աստված կյանքի շունչը պահպանում է կենդանի էակների մեջ, նրանք կենդանի են: Բայց երբ Նա վերցնում է նրանց շնչառությունը, նրանք մահանում են և կրկին հող են դառնում (Սաղմոս 104.29, Ժողովող 12.7): Սա Աստծո քմահաճ որոշում չէ, այլ մեղքի անդառնալի հետևանք: Իսկ բարի լուրն այն է, որ Քրիստոսի շնորհիվ մենք հույս ունենք:

Կարդացե՛ք Հովհաննես 1.1-4-ը: Այս համարներում ի՞նչն է վկայում մեռյալներին հարություն տալու Հիսուսի զորության մասին: _____

_____

_____

Քրիստոսն Իր մեջ ունի կյանքը, որովհետև Նա Ինքն է կյանքը (Հովհաննես 14.6): Նա ստեղծել է ամեն բան և իշխանություն ունի կյանք տալու, ում ցանկանա (Հովհաննես 5.21): Այդ պատճառով Նա կարող է հարություն տալ մեռելներին:

Ինչպե՞ս է տեղի ունենում հարությունը: Ղուկաս 8.54,55:

_____

_____

_____

Ըստ Աստվածաշնչի՝ հարությունը վերադարձն է դեպի կյանք: Մահը նահանջում է, երբ Աստված կրկին տալիս է կյանքի շունչը: Հենց այդպես էր Ղուկասը նկարագրում Հայրոսի աղջկա հարությունը: Իմանալով, որ տասներկուամյա աղջնակը մահացել է, Հիսուսը եկավ

Հայրոսի տուն և հավաքվածներին հայտնեց, որ նա քնած է: Հետո Նա «նրա ձեռքը բռնելով կանչեց և ասաց. Աղջի՛կ, վե՛ր կաց: Եվ նրա հոգին նրան դարձավ, և նա իսկույն կանգնեց, և հրամայեց, որ նրան բան տան ուտելու» (Ղուկաս 8.54,55): Հիսուսի աստվածային հրամանով Աստծո պարգևած կյանքը վերադարձավ աղջկան: Հունարեն եզրույթը, որ օգտագործում է Ղուկասը (*պնեումա*), նշանակում է «քամի», «շնչառություն» կամ «հոգի»: Երբ Աստվածաշունչն այդ բառն օգտագործում է մարդկանց վերաբերյալ, այն երբեք չի նշանակում գիտակցական գոյություն՝ մարմնից առանձին: Տվյալ համարում այն հստակ կերպով ցույց է տալիս կյանքի շունչը:

Մահն այնքան հաճախադեպ երևույթ է, որ մենք այն ընկալում ենք որպես պատշաճը: Սակայն մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ապավինել հավիտենական կյանքի մասին Աստծո խոստումներին, թեև հիմա կարող է թվալ, թե մահը հաղթանակ է տոնում:

Երեքշաբթի սեպտեմբերի 16

Հարությունն ու դատաստանը

Մինչև հիմա մեր ուսումնասիրած ճշմարտությունները կարող են հանգեցնել այն մտքին, որ միայն ոմանք են հարություն առնելու: Բայց Հիսուսը պնդում է. կգա ժամանակ, երբ «ամենքը, որ գերեզմաններում են, Նրա ձայնը կլսեն և դուրս կգան» (Հովհաննես 5.28,29): Հավատավորները և անհավատները, փրկվածներն ու կործանվածները՝ ամենքը հարություն կառնեն: Ինչպես հայտարարում է Պողոսը՝ «Մեռելների հարություն կլինի՝ արդարների և մեղավորների» (Գործք առաքելոց 24.15):

Թեև վերջին հաշվով ամենքը հարություն կառնեն, ամենքը չէ, որ հավիտենական կյանքը կստանան: Մարդկանց ճանապարհները կբաժանվեն: Ի՞նչ երկու ուղիների մասին է խոսում Ավետարանը: Հովհաննես 5.28,29: _____

_____

_____

_____

Հարության համընդհանուր լինելը չի նշանակում, որ վերջին օրը ամենքը ցնծալի հավիտենական կյանքը կժառանգեն: «Եվ երկրի հողում գնացածներից շատերը պիտի զարթնեն, ոմանք՝ դեպի հավիտե-

նական կյանք, ոմանք՝ դեպի հավիտենական նախատինք և անարգանք» (Դանիել 12.2):

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված մարդու կյանքը դիտարկելու է՝ վճռելով երկրի վրա երբևէ ապրած յուրաքանչյուր մարդու հավիտենական ճակատագիրը (Ժողովող 12.14, Հռոմեացիս 2.1-11): Սակայն աստվածային դատավճռի կատարումը կենսագործվում է ոչ թե մարդու մահից, այլ նրա հարությունից հետո: Նախքան այդ պահը՝ ինչպես փրկվածները, այնպես էլ կործանվածները անգիտակից ննջում են՝ հող դարձած: Հարությունն ինքնին ո՛չ պարգև է, ո՛չ էլ պատիժ: Դա հավիտենական կյանք կամ հավիտենական դատապարտում ստանալու նախնական պայման է:

Խոսելով երկու հարությունների մասին՝ Հիսուսն ընդգծում էր, որ մեր ճակատագիրը կվճռվի մեր գործերի բարոյական արժեքի հիման վրա (լավ կամ վատ): Սակայն այս փաստը չի նշանակում, որ մեզ փրկում են գործերը: Հակառակը, Հիսուսը հստակ կերպով սովորեցնում էր, որ մեր փրկությունը կախված է բացառապես Փրկչի հանդեպ մեր հավատից (Հովհաննես 3.16): Այդ դեպքում ինչո՞ւ են գործերն ուշադրության առնվելու: Որովհետև դրանք վկայում են Քրիստոսի հանդեպ մեր նվիրվածության և մեր հավատի իսկական լինելու մասին (Հակոբոս 2.18): Մեր գործերը ցույց են տալիս, թե մենք առաջվա նման մեռա՞ծ ենք «հանցանքներում ու մեղքերում» (Եփեսացիս 2.1), թե՞ «մեղքի համար մեռած ենք, Աստծո համար կենդանի՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսում» (Հռոմեացիս 6.11):

Խորհեցե՛ք մեզանից յուրաքանչյուրի հավիտենական ճակատագրի մասին: Եթե ինչ-որ բան է կանգնած ձեր և հավիտենական կյանքի միջև, ինչո՞ւ *հենց հիմա* որոշում չընդունել՝ ազատվելու դրանից: Ի վերջո, ինչ-որ բան արժե՞ նրան, որ դրա պատճառով զրկվենք հավիտենական կյանքից:

Չորեքշաբթի սեպտեմբերի 17

Հիսուսն ի՞նչ էր ասում դժոխքի մասին

Խոսելով մահվան և ամբարիշտների պատժի մասին՝ Հիսուսը երկու հունարեն բառ էր օգտագործում. «դժոխք» և «գեհեն»: Հաշվի առնելով «դժոխք» բառի ժամանակակից նշանակությունը՝ մենք պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք նրան:

«Դժոխքը» եբրայերեն «շեոլ» բառի համարժեքն է՝ մի տարածված հինկտակարանյան եզրույթ, որ նշանակում է մեռյալների թագավորություն: Այս բառերը պարզապես նշանակում են գերեզման կամ վայր, որտեղ ուղևորվում են բոլոր մեռածները՝ առանց պատժի կամ պարգևի իմաստ հաղորդելու: Սակայն կա մի տեքստ, որտեղ դժոխքը կապված է պատժի հետ: Դա հարուստի և Ղազարոսի մասին առակն է:

Կարդացե՛ք Ղուկաս 16.19-31-ը: Ի՞նչ հիմնական դաս է բովանդակվում առակում (ուշադրություն դարձրեք 27-31 համարներին): Ինչո՞ւ այս առակի հիման վրա չի կարելի պնդել, թե մարդիկ մահից անմիջապես հետո ուղևորվում են դրախտ կամ դժոխք:

Տվյալ առակը մահացած մարդու վիճակի մասին չէ: Տարածված, բայց ոչ աստվածաշնչյան տեսակետը, որին համամիտ էին Հիսուսի շատ ժամանակակիցներ, ֆոն ծառայեց առակի համար, որը կարևոր դաս է շարադրում. մեր ապագա ճակատագիրը վճռվում է այն որոշումներով, որ մենք ընդունում ենք այսօր: Եթե կենդանության օրոք մենք մերժում ենք Աստծո պարգևած լույսը, մահից հետո արդեն մենք այն ընդունելու հնարավորություն չենք ունենա: Այս առակը տառացի մեկնաբանելու ցանկացած փորձ տանում է շատ անլուծելի խնդիրների: Իրականում պատկերի մանրամասները հատուկ ներկայացված են արտասովոր կերպով՝ ցույց տալու համար՝ Հիսուսը չէր ցանկանում, որ Իր խոսքերը տառացի ընկալվեն:

Դժոխքի մասին ի՞նչ նախազգուշացումներ է ասել Հիսուսը: Մատթեոս 5.22,29,30, 23.33: _____

_____

_____

Աստվածաշնչի շատ թարգմանություններում «դժոխք» բառը 11 անգամ հնչում է Հիսուսի շուրթերից: Իրականում Նա օգտագործում է հունարեն «գեեննա» (գեհեն) բառը՝ եբրայերեն «Գե Հիննոմ» անվանումից (Ենովմի որդիների հովիտ): Համաձայն Հին Կտակարանի՝ Երուսաղեմից դեպի հարավ գտնվող այս կիրճում Աքազ և Մանասե թագավորները սոսկալի հեթանոսական ծեսեր էին կատարում՝ իրենց զավակներին զոհաբերելով Մողոքին (Բ Մնացորդաց 28.3, 33.6): Բայց բարեպաշտ Հովսիա թագավորը դադարեցրեց այս գործողությունը (Դ Թագավորաց 23.10): Երեմիան վկայում էր այն մասին, որ այնտեղ կատարված մեղքերի համար Աստված այդ տեղը կդարձնի «սպանության հովիտ» (Երեմիա 7.32,33, 19.6): Ավելի ուշ այդ

հովիտը դարձավ վերջին դատաստանի և չապաշխարածների պատժի խորհրդանիշ: Հիսուսը «գեհեն» բառն օգտագործում էր՝ չբացատրելով մանրամասները պատժի ժամանակի և վայրի մասին, որոնք մենք գտնում ենք այլ աստվածաշնչյան հատվածներում: Ըստ ամենայնի երևում է, որ դժոխքը հավիտենական պատժի վայր չէր:

Հինգշաբթի սեպտեմբերի 18

Հիսուսը հաղթեց մահին

Ինչո՞ւ Ղազարոսի հարությունը Քրիստոսի երկրային ծառայության ընթացքում կատարած հրաշքների հանգուցալուծումն էր: Հովհաննես 11.38-44: _____

_____

_____

Թեև նախքան այդ Հիսուսն արդեն երկու մարդու հարություն էր տվել, այդ հարություններից ոչ մեկն այնքան դրամատիկական չէր, որքան այս մեկը: Ղազարոսն արդեն մահացած էր՝ այս փաստը Մարթան հաստատեց նրա գերեզմանի մոտ: Հիսուսն այդ հրաշքը գործեց օրը ցերեկով, Երուսաղեմից եկած հարգարժան վկաների բազմության աչքի առջև: Այդպիսի վկայությունն անհնար էր հերքել:

Բայց է՛լ ավելի կարևոր հարություն էր Իր՝ Հիսուսի հարությունը: Քանի որ Քրիստոսը կյանք ունի Ինքն Իրենում, Նա ոչ միայն զորություն ունի հարություն տալու մեռելներին և կյանք տալու ում ցանկանում է (Հովհաննես 5.21,26), այլ նաև իրավասու է իր սեփական կյանքը տալու և կրկին այն ընդունելու (Հովհաննես 10.17,18): Նրա հարությունը համոզիչ կերպով վկայում է այդ մասին:

Ի՞նչ փոխադարձ կապ կա Քրիստոսի հարության և մեր հարության միջև: Ինչո՞ւ է Նրա հարությունն այդքան կարևոր մեր փրկության համար: Ա Կորնթացիս 15.17-20 _____

_____

_____

_____

Մահվան հանգույցները քանդելու Քրիստոսի իշխանությունն անվիճարկելի է: Նա հարություն առավ գերեզմանից՝ որպես Իր մեջ հանգչած մեռելների Առաջնեկը: Նրա հարությունը յուրաքանչյուր հավատա-

վորի հարության երաշխիքն է, քանի որ Նա ունի մահվան բանալիները (Հայտնություն 1.17,18):

«Հավատավորի համար Քրիստոսը հարությունն է և կյանքը: Մեր Փրկչի մեջ վերականգնված է մեղքի պատճառով կորսված կյանքը, քանի որ Նա կյանք ուներ Ինքն Իր մեջ՝ կենդանացնելու ամենքին, ում ցանկանա: Նա օժտված է անմահություն պարգևելու իրավունքով: Կյանքը, որ Հիսուսը տվեց մարդկության համար, Նա ընդունում է կըրկին և այն պարգևում է մարդկանց» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 786,787):

Որոշ հարուստ մարդիկ մահից առաջ պատվիրում են, որ իրենց մարմինները սառեցվեն և պահպանվեն հատուկ պայմաններում՝ այնքան ժամանակ, մինչև որ գիտությունը նրանց թույլ տա կրկին կյանք վերադառնալ: Բայց մինչև այժմ դրա հնարավորությունը չկա: Մահն այնքան զորեղ է, որ միայն կյանքի Արարիչը կարող է վերականգնել այն: Այս ճշմարտությունն ի՞նչ է ասում այն մասին, թե ինչու մենք պետք է վստահենք միայն Հիսուսին, Ով կարող է հարություն տալ մեզ և անպայման կանի դա՝ Իր խոստման համաձայն:

Ուրբաթ սեպտեմբերի 19

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Ղազարո՛ս, դու՛րս արի» (524-536) և «Նա հարությո՛ւն է առել» (779-787):

«Օրորվող երկրի, կայծակների բռնկումների և որոտի հարվածների մեջ Աստծո Որդու ձայնը կանչում է հող դարձած ննջեցյալներին: Նա նայում է արդար մեռյալների գերեզմաններին և հետո, ձեռքը բարձրացնելով դեպի երկինք, բացականչում է. «Արթնացե՛ք, արթնացե՛ք, արթնացե՛ք, հողում ննջածնե՛ր, վե՛ր կացեք»: Եվ երկրի բոլոր ծայրերում մեռյալները լսում են այդ ձայնը, և լսողները կենդանանում են... Նրանք դուրս են գալիս գերեզմանի գերությունից՝ անմահ փառք հագած՝ բացականչելով՝ «Մա՛հ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթանակը» (Ա Կորնթացիս 15.55): Եվ այդ ժամանակ «մահ չճաշակած» արդարների և հարություն առած սուրբերի ձայները կմիաձուլվեն տևական ցնծագին հաղթական աղաղակների մեջ» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 644):

Հարցեր քննարկման համար

1. Մենք ամենքս պայքարում ենք մահվան իրողության դեմ՝ դրա թվացյալ վերջնականությամբ և անիմաստությամբ հանդերձ: Եթե, ինչպես շատերն են համարում, Աստված չկա, հավիտենական կյանքի հույս չկա և հարություն չկա, այդ դեպքում ո՞րն է մարդկային կյանքի իմաստը: Ի՞նչ նշանակություն ունի այն, եթե վաղ թե ուշ մահանում է երբևէ ապրած ամեն մարդ, և նրա մասին հիշողությունը մեկընդմիշտ չքանում է: Հարության մեր ըմբռնումն ինչպե՞ս է պատասխանում այս, թվում է, անլուծելի խնդրին:
2. Ի՞նչ վտանգներ են թաքնված հոգու անմահության գաղափարի մեջ: Ինչո՞ւ է սատանան շահագրգռված այս ոչ աստվածաշնչյան տեսակետով: Այս հայեցակարգն ի՞նչ դեր է խաղում վերջին ժամանակի կրոնական սցենարի մեջ: Խորհեցե՛ք դրանում ծածկված բոլոր մոլորությունների մասին, որոնցից պաշտպանված են այն մարդիկ, ովքեր մահը ընդունում են որպես քուն՝ մինչև հարությունը:

ԴԱՍ 13

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-26

ՀԻՍՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 14.1-3, Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18, Մատթեոս 16.27, 24.42,44:

Հիշելու համարը.

«Ձեր սրտերը թո՛ղ չխռովվեն: Աստծուն հավատացեք և Ինձ հավատացեք: Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. ապա թե ոչ՝ Ես ձեզ կասեի. գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որ ուր ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.1-3):

Հիսուսի երկրորդ գալուստը, որն ավելի քան երեք հարյուր անգամ հիշատակվում է Նոր Կտակարանում, իրավամբ ծառայում է որպես անկյունաքար մեր ուսմունքի համար: Սույն ուսմունքը մեծ նշանակություն ունի մեր նույնականության համար՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստ քրիստոնյաների: Այս երանելի հույսն արտացոլված է մեր եկեղեցու անվանման մեջ, որին հիմնարար դեր է հատկացված Ավետարանում, և որը մենք կանչված են տարածելու: Առանց Քրիստոսի գալուստի մասին խոստման՝ մեր հավատն անմիտ է: Այս փառավոր ճշմարտությունը օգնում է մեզ՝ զգալու մեզ սպասվող ապագան, և խթանում է մեր ավետարանչական ծառայությունը:

Ոմանք կարող են մտածել, որ այսքան երկար սպասման ընթացքում արդեն կորել է Հիսուսի վերադարձի խոստման հանդեպ հավատը: Բայց դա այդպես չէ: Մեզանից շատերը ավելի, քան երբևէ, մեծ ցանկությամբ են սպասում Քրիստոսի վերադարձին:

Շաբաթվա ընթացքում մենք կուսումնասիրենք, թե ինչ է ասել Հիսուսը երանելի հույսի և «մեծ Աստծո փառքի և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի» հայտնության մասին (Տիտոս 2.13):

Խոստումը

Խորհրդավոր ընթրիքից հետո Հիսուսն աշակերտներին ասաց, որ գնում է այնտեղ, որտեղ նրանք (գոնե առայժմ) դեռ չեն կարող գնալ (Հովհաննես 13.33): Ուսուցչից անջատվելու միտքը նրանց սրտերը լցրեց տրտմությամբ և վախով: Պետրոսը հարցրեց. «Տե՛ր, ո՞ւր ես Դու գնում... ինչո՞ւ չեմ կարող հիմա Քո հետևից գալ» (Հովհաննես 13.36, 37): Քրիստոսը գիտեր նրանց ցանկության մասին և հավաստիացրեց աշակերտներին, որ բաժանումը ժամանակավոր կլինի:

Հովհաննես 14.1-3-ում կարդացե՛ք Քրիստոսի՝ մեզ տված խոստումները: Այս բառերը կիրառե՛ք ձեր նկատմամբ: Ինչո՞ւ պետք է մեծ նշանակություն ունենան դրանք մեզ համար:

_____

_____

_____

Մեր Տիրոջ խոստումը չէր կարող առավել արտահայտիչ լինել: Հունարեն «նորից կգամ» խոստումը դրված է ներկա ժամանակով՝ ընդգծելով վստահությունն ու որոշակիությունը: Այս դարձվածքը բառացի կարելի էր թարգմանել. «Ես նորից գալիս եմ»:

Հիսուսը մեզ հավաստիացրեց Իր երկրորդ գալստյան հարցում: Նա չասաց. «Հնարավոր է՝ Ես նորից գամ»: Նա հայտարարեց. «Կգա՛մ նորից»: Ամեն անգամ, հիշատակելով Իր վերադարձի մասին, Քրիստոսը խոսում էր ճշգրիտ և որոշակի:

Մենք երբեմն խոստումներ ենք տալիս, որոնք հետագայում չենք կարող կատարել՝ չնայած մեր ամենաեռանդուն ջանքերին ու վճռականությանը: Բայց այդպիսին չեն Քրիստոսի խոստումները: Նա շատ անգամ է անսխալ կերպով ապացուցել Իր խոսքի հուսալիությունը:

Խոսելով Իր մարմնավորման մասին՝ Տերը Դավթի միջոցով մարգարեաբար հայտարարեց. «Ահա գալիս եմ» (Սաղմոս 40.7): Եվ Նա եկավ (Եբրայեցիս 10.5-7): Նրա առաջին գալստյան իրողությունը երաշխավորում է նաև երկրորդի անկասկածելիությունը:

Իր երկրային ծառայության ժամանակ Հիսուսը հուսահատված հորը խոստացավ. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և կփրկվի» (Ղուկաս 8.50): Եվ Հայրոսի մահացած աղջիկը իսկապես կյանք վերադարձավ: Քրիստոսը հայտարարեց, որ երրորդ օրը Ինքը հարություն կառնի գերեզմանից. այդպես էլ տեղի ունեցավ: Նա աշակերտներին խոս-

տացավ Սուրբ Հոգին ուղարկել և որոշ ժամանակ անց Հոգին հեղեց նրանց վրա: Եթե մեր Տերը Իր բոլոր խոստումները կատարել է անցյալում, անգամ նրանք, որոնք մարդկային տեսակետից անհնար էին թվում, մենք կարող ենք վստահ լինել՝ Նա կպահի Երկրորդ գալստյան մասին Իր խոստումը:

Դուք ինչպե՞ս կարող եք ձեր սրտում վառ պահել հավատի ու հույսի կրակը՝ սպասելով Հիսուսի երկրորդ գալստյանը:

Երկուշաբթի սեպտեմբերի 22

Հիսուսի երկրորդ գալստյան նպատակը

Երկրորդ գալուստը կդառնա փրկության մեծ ծրագրի գագաթնակետը: Առանց՝ Քրիստոսի երկիր վերադառնալու՝ Նրա մարմնացումը, մահն ու հարությունը ոչ մի կերպ չէին անդրադառնա մեր փրկության վրա:

Ո՞րն է Հիսուսի երկրորդ գալստյան հիմնական պատճառը: Մատթեոս 16.27: _____

_____

_____

Կյանքը միշտ չէ, որ արդարացի է, իսկ ավելի ճիշտ՝ ավելի հաճախ այն անարդար է: Միշտ չէ, որ մենք արդարություն ենք տեսնում մեր հասարակության մեջ: Անմեղ մարդիկ տառապում են, այն ժամանակ, երբ չարերը, թվում է, օրհնվում են: Ծատերը չեն ստանում այն, ինչին արժանի են: Բայց չարն ու մեղքը միշտ չեն իշխելու: Հիսուսը կգա, «որ ամեն մեկին հատուցի, ինչպես իր գործը կլինի» (Հայտնություն 22.12):

Այս պնդումը ենթադրում է, որ Քրիստոսի վերադարձին պետք է նախորդի դատը: Երբ Հիսուսը գա, յուրաքանչյուր մարդու ճակատագիրն արդեն որոշված կլինի: Հիսուսը հստակ կերպով մատնացույց արեց այդ հետաքննական դատը՝ հարսանեկան խնջույքի մասին առակում (Մատթեոս 22.11-13): Այն փաստը, որ մենք դատվում ենք մեր գործերի համեմատ, չի նշանակում, թե մենք փրկվում ենք գործերով կամ մեր արժանիքների շնորհիվ: Փրկությունը պարգևում է Աստծո շնորհը, և մենք այն ստանում ենք Հիսուսի հանդեպ հավատով (Մատթեոս 16.16, Հովհաննես 1.12), որը դրսևորում ենք մեր գործերում:

Մատթեոս 16.27-ում խոստում է տրված նաև այն մասին, որ արդարությունը կվերականգնվի: Մեզ հարկավոր է միայն սպասել դրան:

Նաև երկրորդ գալստյան ժամանակ Քրիստոսում ննջածները հարություն կառնեն հավիտենական կյանքի համար: Դա մեզ համար հատուկ նշանակություն ունի, քանի որ մեզ հայտնի է, որ մեռյալները ննջած են շիրիմներում:

«Օրորվող երկրի, կայծակների բռնկումների և որոտի հարվածների մեջ Աստծո Որդու ձայնը կանչում է հող դարձած ննջեցյալներին: Նա նայում է արդար մեռյալների գերեզմաններին և հետո, ձեռքը բարձրացնելով դեպի երկինք, բացականչում է. «Արթնացե՛ք, արթնացե՛ք, արթնացե՛ք, հողում ննջածնե՛ր, վե՛ր կացեք»: Եվ երկրի բոլոր ծայրերում մեռյալները լսում են այդ ձայնը, և լսողները կենդանանում են... Նրանք դուրս են գալիս գերեզմանի գերությունից՝ անմահ փառք հագած՝ բացականչելով՝ «Մա՛հ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթանակը» (Ա Կորնթացիս 15.55): Եվ այդ ժամանակ «մահ չճաշակած» արդարների և հարություն առած սուրբերի ձայները կմիաձուլվեն տևական ցնծագին հաղթական աղաղակների մեջ» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 644):

Երեքշաբթի սեպտեմբերի 23

Ինչպե՞ս կգա Հիսուսը

Իր մարգարեական քարոզում Քրիստոսը նախազգուշացրեց Իր երկրորդ գալստյան վերաբերյալ կեղծ ուսմունքների մասին և աշակերտներին զգուշացրեց այն մարդկանցից, ովքեր կգան Իր անունով և կասեն. «Ես եմ Քրիստոսը» (Մատթեոս 24.5, տե՛ս նաև 23-26 համարները): Հիսուսը չէր ցանկանում, որ Իր հետևորդները խաբվեն, այդ պատճառով հստակ կերպով շարադրեց, թե հատկապես ինչպես է գալու Ինքը:

Մատթեոս 24.27 համարը ի՞նչ է հաղորդում մեզ այն մասին, թե ինչպես կվերադառնա Հիսուսը: _____

_____

_____

_____

Կայծակն անհնար է կեղծել կամ թաքցնել: Այն բռնկվում ու շողում է՝ հատելով երկինքը: Այն տեսնում են բոլորը: Այդպիսին կլինի նաև Հիսուսի երկրորդ գալուստը: Կարիք չի լինի գովազդի, որպեսզի մարդկանց ուշադրությունը հրավիրվի այդ իրադարձության վրա: Յուրաքանչյուր մարդ՝ չար թե բարի, փրկված թե կործանված, անգամ

«նրանք, որ խոցեցին Նրան» (Հայտնություն 1.7), կտեսնեն Քրիստոսի գալուստը (Մատթեոս 26.64):

Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18 հատվածն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալ, թե ինչպիսին կլինի երկրորդ գալուստը:

_____

_____

Երկրորդ գալստյան ժամանակ Քրիստոսը կներկայանա Իր ողջ աստվածային փառքով՝ որպես «թագավորների Թագավոր և տերերի Տեր» (Հայտնություն 19.16): Մարմնացման ժամանակ Աստծո Որդին եկավ համեստաբար, առանց որևէ տեսանելի փայլի, «և տեսք չկար, որ ախորժեինք» (Եսայիա 53.2): Բայց այս անգամ Նա կհայտնվի Իր ողջ վսեմությամբ ու հոյակապությամբ՝ շրջապատված բոլոր սուրբ հրեշտակներով (Մատթեոս 25.31) և «մեծաձայն փողով» (Մատթեոս 24.31): Բացի դրանից, երկրորդ գալստյան ժամանակ Քրիստոսում մահացածները հարություն կառնեն դեպի անմահություն:

Եթե մենք Տիրոջը վստահում ենք այնպիսի մի անհավատալի իրադարձության հարցում, ինչպիսին երկրորդ գալուստն է, ինչո՞ւ Նրան չվստահենք մեր կյանքի յուրաքանչյուր պահը:

Չորեքշաբթի սեպտեմբերի 24

Ե՞րբ կգա Հիսուսը

Երբ, խոսելով տաճարի մասին, Հիսուսն ասաց. «Այդտեղ քարը քարի վրա չի թողնվի, որ չքանդվի» (Մատեթոս 24.2), աշակերտները ցնցված էին: «Ասա՛ մեզ, այդ ե՞րբ կլինի, և ի՞նչ կլինի Քո գալստյան ու աշխարհի վերջի նշանը» (համար 3), – հարցնում էին նրանք: Նրանց գիտակցության մեջ տաճարի ավերումը կապված էր Քրիստոսի վերադարձի ժամանակ երկրի պատմության ավարտի հետ:

Իր պատասխանում Հիսուսը հաջող կերպով համատեղեց երկու իրադարձությունների՝ ՔՀ 70 թվականին Երուսաղեմի ավերման և Իր երկրորդ գալստյան նշանները, քանի որ աշակերտները պատրաստ չէին տարանջատելու այդ իրադարձությունները:

Մեզ համար կարևոր է հասկանալ այդ նշանների էությունն ու նպատակը: Դրանք մեզ տրված են ոչ թե այն բանի համար, որ որոշենք Հիսուսի վերադարձի ամսաթիվը, որովհետև «այն օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի, ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն Իմ Հայ-

ը» (Մատթեոս 24.36): Ավելի շուտ, այդ նշանները ցույց են տալիս իրադարձությունների պատմական միտումը՝ հիշեցնելով մեզ, որ Նրա գալուստը մոտ է, դռներին է: Թեև մենք չպետք է ամսաթվեր սահմանենք, սակայն նաև չենք կարող անտեսել տեղի ունեցող իրադարձությունները:

Կարդացե՛ք Մատթեոս 24.3-14,21-26,29,37-39-ը: (Տե՛ս նաև Մարկոս 13-ը և Ղուկաս 21-ը): Աշխարհի ի՞նչ պատկեր է այստեղ ներկայացնում Հիսուսը: Ինչո՞վ է այն համապատասխանում այն աշխարհին, որտեղ մենք այժմ ապրում ենք: _____

_____

_____

Ամենակարևոր ճշմարտությունը, որ Հիսուսը ցանկանում էր տպավորել աշակերտների գիտակցության մեջ, այն էր, որ Իր գալուստը մոտ է: Իրականում Նրա ողջ մարգարեական քարոզը առաքյալներին ուղղված էր այնպես, ասես նրանք կենդանի են լինելու, երբ Նա վերադառնա (տե՛ս Մատթեոս 24.32,33,42):

Փաստորեն անձնական տեսանկյունից մեզանից յուրաքանչյուրի համար երկրորդ գալուստը մեզանից ավելի հեռու չէ, քան մեր մահվան պահը: Մահը խորը անգիտակից քուն է: Մահանալով՝ մենք փակում ենք աչքերը: Եվ անկախ այն բանից, թե որքան ժամանակ է անցել՝ մե՞կ, թե հազար տարի, այն, ինչ մենք կտեսնենք, կլինի Քրիստոսի գալուստը: Այսպիսով, Քրիստոսի գալստյան մոտ լինելու գաղափարը, որին համամիտ էին նաև Պողոսը, Պետրոսն ու Հակոբոսը, խելամիտ է ու ըմբռնելի: Եվս մեկ անգամ ընդգծենք. մեզանից յուրաքանչյուրի համար Նրա գալուստը ավելի հեռու չէ, քան մեր սեփական մահվան պահը:

Այս հայեցակարգն ինչպե՞ս է օգնում մեզ՝ գիտակցելու Քրիստոսի երկրորդ գալստյան մոտ լինելը:

Հինգշաբթի սեպտեմբերի 25

Արթո՛ւն մնացեք և պատրա՛ստ եղեք

Մեզ համար ինչո՞ւ է կարևոր միշտ արթուն մնալն ու Հիսուսի գալստյանը պատրաստ լինելը: Մատեթոս 24.42,44:

Հիսուսի մարգարեական քարոզի հիմնական թեման արթուն մնալու, ուշադիր լինելու հրահանգն է: Այստեղ չի խոսվում պարապ

սպասման մասին: Մենք պետք է ակտիվ զգոնություն դրսևորենք այն տանտիրոջ նման, ով միշտ ուշադիր է՝ ցանկանալով իր տունը պաշտպանել ցանկացած հնարավոր գողից (Մատթեոս 24.43): Զգոն սպասման ժամանակ մենք պետք է աշխատենք՝ տիրոջ բացակայության ժամանակ նրա հանձնարարած գործը կատարող հավատարիմ ծառայի նման (Մատթեոս 24.45, Մարկոս 13.34-37):

Ո՞ր դիրքորոշումը կարող է ճակատագրական լինել մեզ համար, որ պնդում ենք, թե հավատում ենք Հիսուսի երկրորդ գալստյանը: Մատթեոս 24.48-51, Ղուկաս 21.34,35: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել նման սխալից: Ինչո՞ւ, ուշադրություն չդրսևորելով, կարելի է հեշտությամբ սխալ գործել: _____

_____

_____

Չար ծառայի մասին առակը շատ սթափեցնող է, հատկապես մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար: Ծառան ներկայացնում է նրանց, ովքեր հայտարարում են, թե հավատում են Քրիստոսի երկրորդ գալստյանը, սակայն դա այնքան էլ շուտ տեղի չի ունենա: Այդպիսի մարդիկ համարում են. Տերը ուշանում է, այդ պատճառով դեռ կարելի է ապրել եսասիրաբար և մեղսավոր հաճույքներ վայելել: Նրանք հավատացած են, որ բավական ժամանակ ունեն երկրորդ գալստյանը նախապատրաստվելու համար: Ցավոք, դա նպատակադրված թակարդ է, քանի որ ոչ ոք չգիտի Հիսուսի վերադարձի ժամանակը: Ավելին, անգամ եթե Քրիստոսը դեռ չի գալիս, մեզանից յուրաքանչյուրը կարող է անսպասելիորեն հեռանալ կյանքից, և այդ ժամանակ հանկարծակի կընդհատվի Աստծո հետ հաշտվելու ցանկացած հնարավորություն: Նաև մեղքին կրկին ու կրկին հագուրդ տալը աստիճանաբար խստացնում ու բթացնում է խիղճը, և ապաշխարելը դառնում է ավելի ու ավելի դժվար: Սատանային չի հետաքրքրում, որ մենք տեսականորեն հավատում ենք Հիսուսի երկրորդ գալստյանը, քանի դեռ հետաձգում ենք այդ իրադարձությանը նախապատրաստվելը:

Մենք ինչպե՞ս կարող ենք պատրաստ լինել այսօր: Ապաշխարելով, Հիսուսին խոստովանելով չապաշխարած մեղքը, նորոգելով մեր հավատը Նրա քավչարար մահվան հանդեպ և լիովին Նրան ենթարկելով մեր ցանկությունները: Ապրելով Նրա հետ շփման մեջ՝ մենք կարող ենք վայելել մեծ խաղաղություն՝ հագած լինելով Նրա արդարության հանդերձները:

Դուք շա՞տ եք խորհում երկրորդ գալստյան մասին: Որքանո՞վ է այդ իրադարձության իրական բնույթն ազդում ձեր կյանքի վրա: Ինչպե՞ս ենք մենք ճիշտ հավասարակշռություն պահպանում՝ կատարելով մեր ամենօրյա աշխատանքը և միևնույն ժամանակ ապրելով Քրիստոսի վերադարձի կանխաճաշակմամբ:

Ուրբաթ սեպտեմբերի 26

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Ձիթենյաց սարի վրա» (627-636), «Մեծ պայքար» գրքից՝ «Արշալույսի լրաբերները» (299-316) գլուխները:

«Ծուտով արևելքում մի ոչ մեծ մութ ամպ է հայտնվում՝ մարդկային ափի մեծությամբ: Փրկչին շրջապատող այդ ամպը հեռվից թվում է խավարով շրջապատված: Աստծո ժողովուրդը գիտի, որ դա Մարդի Որդու նշանն է: Հանդիսավոր լռության մեջ նրանք հետևում են, թե ինչպես է այն մոտենում երկրին՝ դառնալով ավելի ու ավելի լուսավոր և հիասքանչ, մինչև որ վերջապես վերածվում է մի հսկա սպիտակ ամպի, որի հիմքում փառքն է՝ ամենակուլ կրակի նմանությամբ, և ամպի վրա՝ ուխտի ծիածանը: Հիսուսն իջնում է՝ որպես մեծազոր Հաղթող... Երկնային օրհներգեր երգող սուրբ հրեշտակների անթիվ բազմությունն ուղեկցում է Հիսուսին: Ողջ երկինքը թվում է պայծառափայլ էակներով լցված, նրանք «հազար հազարներ և բյուր բյուրեր» են: Մարդկային գրիչն անզոր է նկարագրելու այդ տեսարանը. մահկանացու միտքը չի կարող հասնել դրա վսեմությանն ու գեղեցկությանը» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 640, 641):

Հարցեր քննարկման համար

1. Թեև մենք պետք է հավատանք Քրիստոսի վերադարձի մոտ լինելուն, սակայն ինչպե՞ս կարող ենք խուսափել մոլեռանդության վտանգից: Դա միշտ չէ, որ հեշտ է: Ի վերջո, շա՞տ մոլեռանդներ են իրենց մոլեռանդ համարում:
2. Խորհեցե՛ք այն մասին, որ երկրորդ գալուստը, եթե այն դիտարկենք անձնային, անհատական մակարդակով, մեզանից հեռու է ոչ ավելի, քան մեր սեփական մահվան պահը՝ անկախ այն բանից,

թե որքան երկար ենք մենք ապրում: Այս գաղափարն ի՞նչ է ասում մեզայն մասին, թե իսկապես որքանով է երկրորդ գալուստը մոտ մեզանից յուրաքանչյուրին:

3. Դուք ի՞նչ կպատասխանեք նրանց, ովքեր ծաղրում են երկրորդ գալստյան գաղափարը: Նախքան որևէ բան պատասխանելը՝ ջանացե՛ք մտածել նրանց փոխարեն, հանգամանքներին նայել նրանց տեսանկյունից: Անելով դա և քննարկելով նրանց փաստարկները՝ խորհեցե՛ք, թե ինչպես կարելի է նրանց պատասխանել:
4. Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այն գաղափարին, որ մենք՝ որպես ժողովուրդ, կարող ենք կա՛մ արագացնել, կա՛մ հետաձգել երկրորդ գալուստը: Ի՞նչ թեր և դեմ փաստարկներ կարելի է բերել:
5. Եթե դուք իմանայիք, որ Հիսուսը կգա հաջորդ շաբաթ, ի՞նչ կփոխեիք ձեր կյանքում:

ՆՈՐՈՒՅԹ

Սեր և օրենք

Այս աշխատությունն իր մեջ ներառում է Աստվածաշնչի գրեթե բոլոր այն տեքստերի վերլուծությունը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Արարչի հանդեպ սիրո և Նրա պատվիրանները պահելու հետ:
Ընդհանուր գծերով լուսաբանվում են նաև մեր երկրի կրոնական կյանքում տեղի ունեցող վերջին զարգացումներն ու հեռանկարները բիբլիական մարգարեությունների լույսի ներքո:
Նախատեսված է Սուրբ Գրքի հետազոտողների, եկեղեցական սպասավորների և շարքային ուսումնասեր քրիստոնյաների համար:



ՆՈՐՈՒՅԹ

Ընտանեկան կյանքի ձեռնարկ

Իմաստությամբ և սիրով ամրապնդված ընտանիքը կարող է դիմագրավել մեր օրերի կենսական փոթորիկներին: Հասարակության մեջ շատ կարծրատիպեր են ձևավորվել, որոնք թույլ չեն տալիս ընտանիքին զարգանալու և աճելու: Դա կարող է լինել փոխադարձ բռնությունը, թյուրըմբռնողությունը և պարզապես հիմնարար սկզբունքների չիմացությունը:
Իսկ ահա ընտանեկան երջանկությանը նպաստող ճիշտ սկզբունքների իմացությունը և կյանքում դրանք կիրառելը շատ ու շատ խնդիրներից կազատագրի ընտանիքը:



ՆՈՐՈՒՅԹ

Երևակայության սահմաններից անդին

Այս գրքում մենք կհետազոտենք Տիեզերքի և մեր մոլորակի վրա կյանքի որոշ հիրաշքներ: Բայց, որ ավելի կարևոր է. մենք կհետազոտենք մեր սեփական գոյության հիրաշքը: Մարդկության պատմության առաջին իսկ օրերից մարդիկ փորձել են գտնել կյանքի ամենագլխավոր հարցերի պատասխանները: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք մենք գնում: Մեզ հետ ի՞նչ է լինելու մահից հետո:
Սկսե՛ք այս ճանապարհորդությունը՝ ձեռք բերելու համար ոչ միայն կյանքի հիրաշքները, այլ նաև ինչ-որ առավել զարմանահրաշ մի բան՝ սեր՝ երևակայության սահմաններից դուրս:



ՆՈՐՈՒՅԹ

Մեծ հակամարտություն

«Մեծ պայքարի» տեսիլքը էլեն Ուայթին տրվել է 1858 թ. գարնանը ԱՄՆ-ի Օհայո նահանգում՝ Լովետս Գրովում: Դրա հետ կապած շատ բան նա տեսել էր ավելի քան 11 տարի առաջ, սակայն այս անգամ նրան հանձնարարվեց գրի առնել այդ ամենը, չնայած սատանան պետք է մեծ ջանքեր գործադրեր՝ խոչընդոտելու դրան: Որոշ մաս՝ հատկապես 30-րդ գլուխը, հրատարակվել է 1847 թ.՝ «Փոքր հոտ», 1851 թ.՝ «Քրիստոնեական փորձառություններ և տեսիլքներ», և 1854 թ.՝ «Հավելված» գրքույկներում: Այդ ամենը ներշնչվել է Սուրբ Հոգու կողմից, գրի առնվել փխրուն, սակայն աստվածավախ կնոջ կողմից, և առաջին անգամ տպագրվել 1858 թվականին:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի երրորդ եռամսյակ

ՀԻՍՈՒՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կառլոս է. Սթեջեր

Գլխավոր խմբագիր՝	Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝	Մերինե Աթոյան
Վերստուգող՝	Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝	Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝	Կորյուն Կակոյան